ՀԱՅԱՑՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐՈՎ

Վերլուծական զեկույց

2024

HDV PUBLICATIONS

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ

Հրանտ Դինք հիմնարկը ստեղծվել է 2007 թվականի մեծ ողբերգությունից հետո՝ նման դեպքերը կանխարգելելու, Հրանտ Դինքի՝ ավելի արդար ու ազատ աշխարհ կերտելուն միտված երազանքները իրականացնելու, նրա խոսքը և ոգին ապրեցնելու համար: Հիմնարկի հիմնարար սկզբունքը ժողովրդավարության և մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանությունն է՝ անկախ էթնիկական, կրոնական, մշակութային և գենդերային տարբերություններից: Հիմնարկը ձգտում է այնպիսի հասարակարգի կերտմանը, որտեղ մարդն ունի ազատ խոսքի իրավունք, որտեղ գոյատևում և խթանվում, պահպանվում և զարգացվում են բոլոր տարբերությունները: Հիմնարկը գործում է հանուն այնպիսի աշխարհի և այնպիսի Թուրքիայի, որտեղ ոչ թե հողը, այլ մարդն է արժեք, որտեղ անցյալին և ներկային նայելիս առաջնայինը խիղճն է: Որպես Հրանտ Դինք հիմնարկ՝ «դատը, հանուն որի ապրում ենք», այնպիսի ապագա է խոստանում, որտեղ գերակշռում են երկխոսությունը, համերաշխությունն ու ապրումակցումը:

**ՀԱՅԱՑՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ.
ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐՈՎ**
Վերլուծական զեկույց 2024

ISBN: 978-605-71835-7-6

Հեղինակներ՝
Էրման Բաքըրջը, Իլիան Ջեյհան, Սոնա Բալասանյան, Սրբուհի Միչիկյան

Խմբագիր՝
Հայկ Սմբատյան

Հետազոտողներ՝
Անժելա Ղալամդարյան, Անի Ավետիսյան, Ալի Քարաքաշ, Արման Հարոյան, Արուսյակ Ոսկանյան, Այշե Գյուլեն Էյի, Բորա Քորհան, Դիլարա Զըթաք, Էբրու Շեներ, Լիլիթ Եզեկյան, Հայկ Սմբատյան, Մարիամ Բաբայան, Մելիքե Չուքուր, Նիկոլ Մարգարյան, Սեդա Անանյան, Սրբուհի Միչիկյան, Տիգրան Մելիքյան,

Ձևավորողներ՝
Յասեմեն Ջեմրե Գյուրբյուզ, Սերա Դինք

Էջադրող՝
Մանե Արշալույսյան

Ստամբուլ, դեկտեմբեր 2024 թ.

HDV PUBLICATIONS

© Հրանտ Դինք հիմնարկ հրատարակչություն

Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Սույն հրատարակությունն իրականացվել է «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. Հրատապ հասցեագրում» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես Հրանտ Դինք հիմնարկ հրատարակչությունը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՅԱՑՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ
ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐՈՎ

Վերլուծական զեկույց

2024

HRANT DINK VAKFI
HRANT DINK FOUNDATION
ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ
ARMENIA
KONDA RESEARCH AND CONSULTANCY

«Հայացքներ սահմանից այն կողմ. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները հանրության աչքերով» հետազոտությունը 2023-2024 թվականներին համատեղ իրականացրել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամը և «KONDA» հետազոտական և խորհրդատվական ընկերությունը: Այն հրապարակել է Հրանտ Դինք հիմնարկը՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. արագ արձագանք» ծրագրի շրջանակներում:

Այս զեկույցը ներկայացնում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման վերաբերյալ Հայաստանում և Թուրքիայում առկա հասարակական ընկալումների վերաբերյալ առաջնային տվյալների հավաքագրմամբ իրականացված հետազոտության արդյունքները: Զեկույցի բովանդակությունը հիմնված է երկու զուգահեռ հետազոտական նախաձեռնությունների վրա, որոնք իրականացվել են միաժամանակ Հայաստանում և Թուրքիայում: Մեթոդաբանական ընդհանրություններն ու տարբերությունները հստակորեն նկարագրված են զեկույցի հիմնական բաժիններում:

Զեկույցը որպես ամբողջություն սկզբնապես կազմվել է անգլերենով: Անգլերեն տարբերակի և հայերեն կամ թուրքերեն թարգմանությունների միջև անհամապատասխանության դեպքում պետք է հիմք ընդունել անգլերենը:

Սույն զեկույցի կամ դրա գլուխների հետագա հրապարակումը կամ վերարտադրումը տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով պետք է իրականացվի պատշաճ հղումներով:

Մեջբերման օրինակ

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան հիմնադրամ և «KONDA» հետազոտական և խորհրդատվական ընկերություն (2024): Հայացքներ սահմանից այն կողմ. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները հանրության աչքերով: Ստամբուլ: Հրանտ Դինք հիմնարկ հրատարակչություն:

ՀՌԿԿ-Հայաստանի մասին

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամը տարածաշրջանային կենտրոնացում ունեցող և Հայաստանում գործող անկախ, անկուսակցական հետազոտական հաստատություն է, «որտեղ ապրում է հետազոտությունը»: Մեր հիմնական մանդատն է անդրադառնալ ազգային և տարածաշրջանային սոցիալ-տնտեսական և քաղաքական մարտահրավերներին՝ բարձրորակ տվյալների հավաքագրման, վերլուծության և հետազոտական համայնքի գիտական կարողությունների զարգացման միջոցով: Մեր տեսլականն է՝ ազգային և միջազգային մակարդակներում ճանաչվել որպես հասարակագիտական հետազոտությունների բնագավառի առաջատար ուժ և ազդել երկրում քաղաքականության մշակման օրակարգի վրա՝ սահմանելով ամենաբարձր միջազգային չափանիշները և ստեղծելով առաջնակարգ հասարակագետների կենսունակ համայնք:

Ի լրումն տվյալների բազմամեթոդ հավաքագրման և վերլուծության, ՀՌԿԿ–Հայաստանը նաև ծառայում է որպես ռեսուրսային կենտրոն՝ բաց և ազատորեն հասանելի տվյալներով, տասնյակ գիտական հոդվածներով, հետազոտական զեկույցներով ու քաղաքականության ամփոփագրերով: 2003 թվականին իր հիմնադրումից ի վեր՝ ՀՌԿԿ-Հայաստանի աշխատանքներում ներգրավված հետազոտողներն օգտվում են Հիմնադրամի մեթոդաբանական դասընթացներից, տեղական և միջազգային համաժողովներից, ամառային դպրոցներից և գրադարանից, որն ընդգրկում է հասարակական և հումանիտար գիտությունների 2000-ից ավելի ժամանակակից հրատարակություն: Դրանով մենք ձգտում ենք հասնել հասարակագիտական հետազոտությունների գերազանցության՝ Հայաստանում (և դրանից դուրս) խթանելով տվյալների ու գիտելիքի վրա հիմնված ժողովրդավարական կառավարման սկզբունքները, կիրառելով առաջադեմ մեթոդաբանություններ՝ բարձրորակ հետազոտություններ իրականացնելու համար, և ընդլայնելով տվյալների թափանցիկ հավաքագրման ու գործընկերային ուսուցման մշակույթը:

crrc.am crrc@crrc.am

«KONDA»-ի մասին

«KONDA» հետազոտական և խորհրդատվական ընկերությունը, որը հիմնադրվել է 1986 թվականին Թարհան Էրդեմի կողմից, ձգտում է հետազոտությունների միջոցով հասկանալ, բացատրել և այդպիսով հասկանալի դարձնել Թուրքիայի հասարակությունը: «KONDA»-ն, որն իր հիմնադրումից ի վեր հարցումներ է կատարել ավելի քան մեկ միլիոն մարդու մասնակցությամբ, կարելի է բնութագրել որպես Թուրքիայում հասարակության գենետիկ կոդերի մասին ամենախոր գիտելիք և փորձ ունեցող կազմակերպությունը:

«KONDA»-ն, որպես հետազոտական և խորհրդատվական ընկերություն, արտադրում է տեղեկություն ամենահիմնական եղանակով և իր մեկնաբանություններով իմաստավորում է այդ տեղեկատվությունը՝ ըստ կարիքի:

«KONDA»-ի վերլուծություններն ու կանխատեսումները նպաստում են տարբեր մեծության մասնավոր կամ հանրային հաստատությունների ռազմավարությունների մշակմանը՝ դրանք սոցիալական հիմքի վրա դնելով: Հարցումների և տեղեկատվության հիմքով ստեղծվող զեկույցները, ինչպես նաև մեկնաբանությունները, որոնք ի հայտ են գալիս «KONDA»-ի հարցումների և ներկայացուցչականություն ապահովող տարբեր դաշտային ուսումնասիրությունների արդյունքում, ծառայում են որպես ուղենիշ հանրային անկանխատեսելի զարգացումների շրջանակում:

«KONDA»-ն շարունակելու է լինել տեղեկատվության առաջնային աղբյուրը այն անհատների և հաստատությունների համար, որոնք ցանկանում են հասկանալ Թուրքիան, դրա բնակչությունը և այն, ինչ տեղի է ունենում այս երկրում:

konda.com.tr bilgi@konda.com.tr

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 19
Նախաբան 19
Հրատարակչի կողմից 20
Երախտիքի խոսք 21
Ինչպես կարդալ զեկույցը 21
Սեղմագիր 25

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՇՈՐԱՑՈՒՅՑԻ ՏԱԿ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 29
Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան)

1.1. Մեթոդաբանություն 31
Տվյալների հավաքագրման մեթոդներ 31
Տվյալների աղբյուրներ և դաշտային աշխատանքի ժամանակացույց 32
Ընտրանքի չափը, աշխարհագրական ծածկույթը և ընտրանքի ռազմավարությունները/ընթացակարգերը 33
Ներկայացուցչականության հիմքեր 37
Որակի ապահովման միջոցառումներ 37
Սահմանափակումներ 38
Էթիկական նկատառումներ 39

1.2. Արդյունքներ 40
1.2.1. Հարցման մասնակիցների ժողովրդագրական պատկերը 40
1.2.2. Գիտելիք, ընկալումներ և վերաբերմունք 50
1.2.3. Գոյություն ունեցող գործելակերպեր և փորձառություններ 73
1.2.4. Համագործակցության հնարավոր ոլորտներ 83

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԻԱՆ ԽՈՇՈՐԱՑՈՒՅՑԻ ՏԱԿ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 115
«KONDA» հետազոտական և խորհրդատվական ընկերություն

2.1. Մեթոդաբանություն 117
Տվյալների հավաքագրման մեթոդներ 117
Տվյալների աղբյուրներ և դաշտային աշխատանքի ժամանակացույց 119
Ընտրանքի չափը, աշխարհագրական ծածկույթը և ընտրանքի ռազմավարությունները/ընթացակարգերը 120
Ներկայացուցչականության հիմքեր 125
Որակի ապահովման միջոցառումներ 125
Սահմանափակումներ 125
Էթիկական նկատառումներ 127

2.2. Արդյունքներ 128
2.2.1. Հարցման մասնակիցների ժողովրդագրական պատկերը 128
2.2.2. Գիտելիք, ընկալումներ և վերաբերմունք 138
2.2.3. Գոյություն ունեցող գործելակերպեր և փորձառություններ 165
2.2.4. Համագործակցության հնարավոր ոլորտներ 176

ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ. ՍԻՆԹԵՁԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 209
Էրման Բաքըրջը, Սոնա Բալասանյան

Ներածություն 210
Առաջ դեպի անցյալ 211
Հայելային «ուրիշը» 214
Պատմական տրավմայից՝ արդի ընկալումներ 215
Ինչ կլինի, եթե կարգավորումը տեղի ունենա, և ինչպես է դա հնարավոր 217
Եզրակացություն 220

Աղյուսակների ցանկ

Գլուխ 1.

Աղյուսակ 1. Պատասխանների վիճակագրություն 33
Աղյուսակ 2. Նկարագրական վիճակագրություն. մարզ և բնակավայրի տեսակ..... 34
Աղյուսակ 3. Լայն հանրության ներկայացուցիչներ..... 36
Աղյուսակ 4. Ընտրված ոլորտների ներկայացուցիչներ..... 36
Աղյուսակ 5. D2. Քանի՞ տարեկան եք (n=1201):..... 41
Աղյուսակ 6. Տարիքային բաշխումը՝ ըստ 3 տարիքային խմբերի 41
Աղյուսակ 7. Խոհանոցը՝ որպես մշակութապես նման ոլորտ երկրների միջև՝ ըստ տարիքի (n=445) 68
Աղյուսակ 8. Սահմանի բացման ազդեցության ընկալումները՝ ըստ Թուրքիա այցելության փորձառության 75
Աղյուսակ 9. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջության վերաբերյալ ընկալումները՝ ըստ տարիքի (n=774) 88
Աղյուսակ 10. Թուրքիայի հետ հարաբերությունների նկատմամբ ընկալվող վերաբերմունքը՝ ըստ տարիքի (n=753)..... 111

Գլուխ 2.

Աղյուսակ 1. Տարածաշրջանային բաշխվածությունը և մասնակիցների բնակության մարզերը 122
Աղյուսակ 2. Նկարագրական վիճակագրություն. տարածաշրջան և բնակավայրի տեսակ..... 124
Աղյուսակ 3. D2. Քանի՞ տարեկան եք (n=2028): 129
Աղյուսակ 4. Տարիքային բաշխվածությունը՝ ըստ տարիքային 4 միջակայքերի..... 129
Աղյուսակ 5. Հայերի նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=1878)..... 151
Աղյուսակ 6. Հայերի նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ հարցվողների տարիքի (n=1877)..... 151
Աղյուսակ 7. Թուրքերի վերաբերյալ հայերի ընկալվող վերաբերմունքը՝ ըստ հարցվողների սեռի (n=1742) 153
Աղյուսակ 8. Թուրքերի վերաբերյալ հայերի ընկալվող վերաբերմունքը՝ ըստ հարցվողների բնակավայրի տեսակի (n=1742) 154
Աղյուսակ 9. Երկու երկրների միջև ռազմական հարաբերությունների հաստատման վերաբերյալ տեսակետները՝ ըստ հարցվողների սեռի (n=1588) 191
Աղյուսակ 10. Երկու երկրների միջև ռազմական հարաբերությունների հաստատման վերաբերյալ տեսակետները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի (n=1584) 191
Աղյուսակ 11. Կարգավորման գործում Թուրքիայի կառավարության դերի գնահատումը՝ ըստ հարցվողների սեռի (n=1693) 193
Աղյուսակ 12. Կարգավորման գործում Թուրքիայի կառավարության դերի գնահատումը՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի (n=1690)..... 193
Աղյուսակ 13. Տեղեկություններ խորին հարցազրույցների մասնակիցների մասին 206

Գծապատկերների ցանկ

Գլուխ 1.

Գծապատկեր 1. D1. Հարցվածների սեռը (n=1201) 40
Գծապատկեր 2. D3. Հարցվածների բնակավայրի տեսակը (n=1201).....42
Գծապատկեր 3. D4. Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ մարզերի (n=1201) 43
Գծապատկեր 4. D4. Ներկայումս ո՞րն է Ձեր հիմնական զբաղվածությունը (n=1201): 44
Գծապատկեր 5. D5. Որքա՞ն հաճախ եք կարդում կամ լսում Ձեր դավանած հավատքի տեքստերը, օրինակ՝ Աստվածաշունչը (n=1201): 45
Գծապատկեր 6. D6. Հատուկ օրերից բացի՝ որքա՞ն հաճախ եք այցելում կրոնական վայրեր, օրինակ՝ եկեղեցիներ ու մատուռներ (n=1201):..... 46

Գծապատկեր 7. D7. Որքանով որ տեղյակ եք, խնդրում եմ ասացեք, թե որտեղից են Ձեր նախնիները տեղափոխվել ներկայիս Հայաստան (n=1383): 47

Գծապատկեր 8. D8. Եթե մեր երկրում մարդկանց բաժանեիք ըստ եկամտի ու բարեկեցության 5 շերտի, Ձեր տնային տնտեսությունը, ըստ Ձեզ, ո՞ր շերտում կհայտնվեր, եթե 1-ը ամենաաղքատ շերտն է, իսկ 5-ը՝ ամենահարուստը (n=1201): 48

Գծապատկեր 9. P1. Մարդիկ կարող են տարբեր դիրքորոշումներ ունենալ այն մասին, թե ինչպես պետք է աշխարհը գործի: Սա հաշվի առնելով՝ ինչպե՞ս կբնութագրեք ինքներդ Ձեզ: Ես ինձ համարում եմ... (n=1201): 49

Գծապատկեր 10. P13. Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք, ըստ Ձեզ, տեղեկացված Թուրքիայի և թուրքերի մասին (n=1201): 50

Գծապատկեր 11. P6. Ըստ Ձեզ՝ Թուրքիան այսօր տարածքային չափերով ինչպիսի՞ երկիր է՝ մեծ, ո՞չ մեծ, ո՞չ էլ փոքր, թե՝ փոքր (n=1201): 51

Գծապատկեր 12. P5. Ի՞նչ եք կարծում՝ Թուրքիան այսօր մոտավորապես քանի՞ միլիոն բնակչություն ունի (տարբերակները չեն կարդացվել, n=1201): 52

Գծապատկեր 13. P14. Ինչպե՞ս կավարտեիք հետևյալ նախադասությունը. «Փոքրուց ես Թուրքիայի և թուրքերի մասին տեղեկացել եմ հիմնականում...» (բազմակի ընտրության հարցեր, պատասխանները չեն կարդացվել հարցվողների համար, n=1371): 53

Գծապատկեր 14. P10. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք թուրքերի նկատմամբ Ձեր վերաբերմունքը (n=1201): 56

Գծապատկեր 15. Վերաբերմունքը թուրքերի նկատմամբ՝ ըստ բնակավարի տեսակի (n=1148) 57

Գծապատկեր 16. P11. Ըստ Ձեզ՝ ընդհանուր առմամբ՝ ի՞նչ վերաբերմունք ունեն թուրքերը հայերի նկատմամբ (n=1201): 58

Գծապատկեր 17. Հայերի նկատմամբ վերաբերմունքի ընկալումները՝ ըստ հարցվածների սեռի (n=1056) 59

Գծապատկեր 18. Հայերի նկատմամբ վերաբերմունքի ընկալումները՝ ըստ հարցվածների բնակավայրի տեսակի (n=1056) 60

Գծապատկեր 19. P12. Այժմ կկարդամ մի քանի դատողություն, իսկ Դուք ասացեք, թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է համապատասխանում Ձեր կարծիքին (n=1201): 63

Գծապատկեր 20. N3. Ի՞նչ եք կարծում, հայկական և թուրքական մշակույթները որքանո՞վ են մոտ միմյանց (n=801): 65

Գծապատկեր 21. Թուրքական և հայկական մշակույթների մերձության ընկալվող մակարդակը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=729) 66

Գծապատկեր 22. N4. Ի՞նչ եք կարծում՝ երկու երկրների միջև մշակույթի ո՞ր ոլորտներում կան նմանություններ (բազմակի ընտրությամբ հարցեր, պատասխանները չեն կարդացվել հարցվողների համար, n=776): 67

Գծապատկեր 23. Խոհանոցը՝ որպես մշակութապես նման ոլորտ երկրների միջև՝ ըստ բնակավայրի տեսակի (n=445) 69

Գծապատկեր 24. P7. Երբևէ այցելե՞լ եք Թուրքիա (n=1201): 73

Գծապատկեր 25. P7. Ո՞րն էր այցի նպատակը (n=91): 74

Գծապատկեր 26. P8. Երբևէ շփում ունեցե՞լ եք որևէ թուրքի հետ: (n=1201) 74

Գծապատկեր 27. Վերաբերմունքը թուրքերի նկատմամբ՝ ըստ շփման փորձառության (n=1145) 76

Գծապատկեր 28. N1. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք երկխոսության և հաղորդակցման միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հավանականությունը առաջիկա 5 տարիներին (n=801): 85

Գծապատկեր 29. N2. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները որքանո՞վ են լուրջ (n=801): 85

Գծապատկեր 30. Առաջիկա 5 տարում երկխոսության և հաղորդակցության միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հավանականության վերաբերյալ ընկալումները՝ ըստ բնակավայրի տեսակի (n=737) 86

Գծապատկեր 31. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջության մակարդակի վերաբերյալ ընկալումները՝ ըստ բնակավայրի տեսակի (n=774) 87

Գծապատկեր 32. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջության ընկալումները՝ ըստ հարցվողների սեռի (n=774) 87

Գծապատկեր 33. Հինգ տարվա ընթացքում կարգավորման հավանականության վերաբերյալ ընկալումները՝ ըստ Թուրքիայի և թուրքերի մասին պատմության դասերից ու դասագրքերից տեղեկացված լինելու (n=655) 89

Գծապատկեր 34. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ Թուրքիայի և թուրքերի մասին պատմության դասերից ու դասագրքերից տեղեկացված լինելու (n=671) 89

Գծապատկեր 35. Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրների լրջության վերաբերյալ ընկալումները՝ ըստ Թուրքիայի և թուրքերի մասին ընտանեկան քննարկումների և պատմությունների միջոցով ծանոթ լինելու (n=693) 90

Գծապատկեր 36. N5. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը (n=801): 91

Գծապատկեր 37. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ հարցվողների սեռի (n=756) 92

Գծապատկեր 38. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=756) 93

Գծապատկեր 39. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ շփման փորձառության (n=755) 93

Գծապատկեր 40. N6. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի ընդհանուր սահմանների բացումը ի՞նչ ազդեցություն կունենա (n=801): 94

Գծապատկեր 41. Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի բացման ընկալվող ազդեցությունը տնտեսության վրա՝ ըստ բնակավայրի տեսակի (n=757) 95

Գծապատկեր 42. Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի բացմանը ընկալվող ազդեցությունը հարաբերությունների կարգավորման վրա՝ ըստ բնակավայրի տեսակի (n=698) 96

Գծապատկեր 43. P9. Կգնեի՞ք, արդյոք, ապրանք, որն արտադրված է Թուրքիայում (n=1201): 101

Գծապատկեր 44. Թուրքիայում արտադրված ապրանքներ գնելու հակվածությունը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=1173) 102

Գծապատկեր 45. N8. Ինչ եք կարծում՝ մեր երկրները հետևյալ ոլորտներում կարո՞ղ են ունենալ հարաբերություններ, թե՞ ոչ (n=595): 104

Գծապատկեր 46. Հարաբերությունների հնարավորությունը մշակույթի և զբոսաշրջության ոլորտներում՝ ըստ Թուրքիա այցելելու փաստի (n=568) 105

Գծապատկեր 47. N9. Ձեր կարծիքով՝ հարաբերությունների կարգավորման հարցում որքանո՞վ է կարևոր թվարկվածներից յուրաքանչյուրի դերը (n=801): 106

Գծապատկեր 48. Թուրքիայի կառավարության դերի կարևորությունը՝ ըստ սահմանի բացման նկատմամբ վերաբերմունքի (n=669) 107

Գծապատկեր 49. N7. Ձեր կարծիքով՝ Հայաստանն ինչպե՞ս պետք է դիրքավորվի Թուրքիայի հետ հարաբերություններում (n=801): 110

Գլուխ 2.

Գծապատկեր 1. D1. Հարցվողների սեռը (n=2029) 128

Գծապատկեր 2. D45. Հարցվողների բնակավայրի տեսակը (n=2029) 130

Գծապատկեր 3. D46. Հարցվողների տարածաշրջանը (n=2029) 131

Գծապատկեր 4. D5. Ներկայումս ո՞րն է Ձեր հիմնական զբաղվածությունը (n=2016): 132

Գծապատկեր 5. D34. Որքա՞ն հաճախ եք կարդում կամ լսում Ձեր կրոնի սուրբ տեքստեր, օրինակ՝ Ղուրան (n=2007): 133

Գծապատկեր 6. D35. Հատուկ օրերից բացի՝ որքա՞ն հաճախ եք այցելում կրոնական վայրեր, օրինակ՝ մզկիթներ և ջեմեվիներ (n=1997): 134

Գծապատկեր 7. D39. Եթե մեր երկրում մարդկանց բաժանեիք ըստ եկամտի ու բարեկեցության 5 շերտերի, Ձեր տնային տնտեսությունը, ըստ Ձեզ, ո՞ր շերտում կհայտնվեր, եթե 1-ը ամենաաղքատ շերտն է, իսկ 5-ը՝ ամենահարուստը (n=2021): 135

Գծապատկեր 8. P9. Մարդիկ կարող են տարբեր դիրքորոշումներ ունենալ այն մասին, թե ինչպես պետք է աշխարհը գործի: Սա հաշվի առնելով՝ ինչպե՞ս կբնութագրեք ինքներդ Ձեզ: Ես ինձ համարում եմ...(n=1940): 136

Գծապատկեր 9. P8. Մարդիկ կարող են տարբեր դիրքորոշումներ ունենալ այն մասին, թե ինչպես պետք է աշխարհը գործի: Սա հաշվի առնելով՝ ինչպե՞ս կբնութագրեք ինքներդ Ձեզ: Ես ինձ համարում եմ... (n=1918): 137

Գծապատկեր 10. P21. Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք, ըստ Ձեզ, տեղեկացված Հայաստանի և հայերի մասին (n=2019): 138
Գծապատկեր 11. P13. Ըստ Ձեզ՝ Հայաստանն այսօր տարածքային չափերով ինչպիսի՞ երկիր է. մեծ, ո՛չ մեծ, ո՛չ էլ փոքր, թե՞ փոքր (n=2013): 139
Գծապատկեր 12. P11. Ի՞նչ եք կարծում՝ Հայաստանն այսօր մոտավորապես քանի՞ միլիոն բնակչություն ունի (տարբերակները չեն կարդացվել, n=2016): 140
Գծապատկեր 13. P22. Ինչպե՞ս կավարտեիք հետևյալ նախադասությունը. «Փոքրուց ես Հայաստանի և հայերի մասին տեղեկացել եմ հիմնականում...» (բազմակի ընտրությամբ հարց, տարբերակները չեն կարդացվել հարցվողի համար, n=2986):.....141
Գծապատկեր 14. P17. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք հայերի նկատմամբ Ձեր վերաբերմունքը (n=2010):.....150
Գծապատկեր 15. P18. Ըստ Ձեզ՝ ընդհանուր առմամբ՝ ի՞նչ վերաբերմունք ունեն հայերը թուրքերի նկատմամբ (n=2017): 152
Գծապատկեր 16. P20. Այժմ կկարդամ մի քանի դատողություն, իսկ Դուք ասացեք, թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է համապատասխանում Ձեր կարծիքին՝ օգտագործելով հետևյալ սանդղակը՝ 1 – միանշանակ ոչ, 5 – միանշանակ այո (n=1999):.....155
Գծապատկեր 17. N25. Ի՞նչ եք կարծում՝ հայկական և թուրքական մշակույթները որքանո՞վ են մոտ միմյանց (n=2012): 160
Գծապատկեր 18. Թուրքական և հայկական մշակույթների մերձության ընկալվող մակարդակը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=1637).....162
Գծապատկեր 19. N26. Ի՞նչ եք կարծում՝ երկու երկրների միջև մշակույթի ո՞ր ոլորտներում կան նմանություններ (բազմակի ընտրություն, պատասխանները չեն կարդացվել հացվողների համար n=3755): 163
Գծապատկեր 20. Խոհանոցը՝ որպես մշակույթի համանման ոլորտ՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի (n=577).....164
Գծապատկեր 21. P17. Երբևէ այցելե՞լ եք Հայաստան (n=2022): 165
Գծապատկեր 22. P15. Երբևէ շփում ունեցե՞լ եք որևէ հայի հետ (n=2024):.....166
Գծապատկեր 23. Վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ ըստ շփման փրձառության (n=1842).....167
Գծապատկեր 24. P16. Կգնե՞ք, արդյոք, ապրանք, որն արտադրված է Հայաստանում (n=2001): 168
Գծապատկեր 25. N23. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք երկխոսության և հաղորդակցման միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հավանականությունը առաջիկա 5 տարիներին (n=2007):.....179
Գծապատկեր 26. N24. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները որքանո՞վ են լուրջ (n=1997): 180
Գծապատկեր 27. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջությունը՝ ըստ հարցվածների կրթական մակարդակի (n=1586)..... 181
Գծապատկեր 28. N28. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը (n=2016): 182
Գծապատկեր 29. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ հարցվածների սեռի (n=1817).....183
Գծապատկեր 30. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ շփման փորձառության (n=1788) 184
Գծապատկեր 31. N29. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի ընդհանուր սահմանների բացումը ի՞նչ ազդեցություն կունենա... (n=1999): 185
Գծապատկեր 32. N32. Ի՞նչ եք կարծում՝ մեր երկրները հետևյալ ոլորտներում կարո՞ղ են ունենալ հարաբերություններ, թե՞ ոչ (n=1980):..... 190
Գծապատկեր 33. N33. Ձեր կարծիքով՝ հարաբերությունների կարգավորման հարցում որքանո՞վ է կարևոր թվարկվածներից յուրաքանչյուրի դերը (n=1971):.....192
Գծապատկեր 34. N30. Ձեր կարծիքով՝ Թուրքիան ինչպե՞ս պետք է դիրքավորվի Հայաստանի հետ հարաբերություններում (n=1999):.....195

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումն ու զարգացումը Հրանտ Դինք հիմնարկի առաջնային նպատակներից է: Հիմնարկի աշխատանքն այս ոլորտում հիմնված է այն սկզբունքի վրա, որ «սահմանը նախ պետք է բացվի մեր մտքում»: 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմը խիստ բացասաբար ազդեց Հայաստանում և Թուրքիայում մարդկանց՝ միմյանց վերաբերյալ ընկալումների վրա: Թեև նախկինում քայլեր ձեռնարկվել են՝ երկու ժողովուրդների միջև երկխոսությունը ծավալելու և խթանելու ուղղությամբ, սակայն 2020 թվականի պատերազմից հետո հետաքրքրվածությունն ու ներգրավվածությունը զգալի նվազել են:

Քաղաքացիական հասարակության մակարդակում ներկայիս իրավիճակը և Թուրքիայի ու Հայաստանի բնակիչների ընկալումները ձևավորող գործոններն ավելի լավ պատկերացնելու, ինչպես նաև պարզելու համար, թե ժողովրդագրական որ խմբերն ու թեմատիկ ոլորտները կարող են ծրագրային թիրախ լինել իր հետագա գործունեության շրջանակում՝ Հրանտ Դինք հիմնարկը նախաձեռնեց հասարակական կարծիքի հետազոտություն Հայաստանում և Թուրքիայում: «Հայացքներ սահմանից այն կողմ. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները հանրության աչքերով» խորագրով հետազոտությունն իրականացրել են «KONDA»-ն՝ Թուրքիայում, և ՀՌԿԿ-Հայաստանը՝ Հայաստանում, 2023-2024 թվականներին՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. արագ արձագանք» ծրագրի շրջանակներում:

Թեպետ անցյալում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ հետազոտություններ և հարցումներ իրականացվել են, այս հետազոտությունն ուներ երկու հստակ նպատակ: Դրանցից առաջինը տեղեկություն հավաքելն էր Թուրքիայի և Հայաստանի լայն հանրությունից՝ երկու հարևան երկրների միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ նրանց ընկալումների շուրջ: Բացահայտումներն առանցքային են՝ անկախ տիրող քաղաքական մթնոլորտից. հնարավորություն տալով ծանոթանալու հարևան երկրների քաղաքացիական հասարակության շարժընթացին՝ դրանք խիստ արժեքավոր նյութ են շահագրգիռ կողմերի, քաղաքականություն մշակողների, ոլորտի փորձագետների, հետազոտողների, ինչպես նաև ընդհանուր առմամբ այս թեմայով հետաքրքրվողների համար: Հետազոտության արդ-

յունքներն այլընտրանքային հեռանկարներ են առաջարկում այդ ոլորտում առկա տարբեր մոտեցումների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու և (կամ) խորացնելու համատեղ ջանքերը հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Ավելին՝ համատեղ հետազոտական ծրագրի արդյունքները տրամադրում են տվյալահեն տեղեկույթ՝ օգուտ քաղելու զարգացումներից և հիմնվելու առկա արդյունքների վրա՝ միաժամանակ ամրապնդելով կապերը: Հետազոտության երկրորդ նպատակն էր խթանել երկխոսությունը և մասնագիտական փորձի փոխանակումը երկու հետազոտական կենտրոնների՝ «KONDA»-ի և ՀՌԿԿ-Հայաստանի միջև: Հրանտ Դինք հիմնարկը շարունակաբար իրականացրել է երկխոսության ծրագրեր Հայաստանի և Թուրքիայի փորձագետների միջև և նկատել է, որ երկխոսությունն ընդլայնելու, մասնագետների միջև համագործակցությունը խթանելու, փորձի ու գործնական գիտելիքի փոխանակման և իրազեկվածության բարձրացման ամենաարդյունավետ միջոցներից են այն հնարավորությունները, որոնք թույլ են տալիս երկու երկրների փորձագետներին գործակցել որևէ կոնկրետ, թեմատիկ ոլորտի շուրջ:

Հրատարակչի կողմից

Այս հետազոտության մեջ «թուրք» («Turk» և «Turkish») և «հայ» եզրույթները հարցվողների կողմից օգտագործվում են փոփոխական իմաստներով: «Turk» և «Turkish» եզրույթների կիրառումը կամ նշանակությունը հասարակական և քաղաքական քննարկման նյութ է Թուրքիայում՝ վերաբերի դա այն անհատներին, ովքեր էթնիկորեն նույնականացվում են որպես թուրք, թե իր մեջ ամփոփի մշակութային և պատմական ընդհանուր ժառանգության զգացումը: Թուրքիայի բազմաթիվ էթնիկ փոքրամասնություններ և խտրական վերաբերմունքի ենթարկվող խմբեր այս եզրույթի օգտագործումը խնդրահարույց են համարում: Հայաստանի համատեքստում «թուրք» եզրույթն օգտագործվում է՝ նկատի ունենալով Թուրքիայի քաղաքացիներին՝ ենթադրելով միատարր հասարակություն, որը բաղկացած է ազգությամբ թուրք անհատներից: Ավելին՝ այն երբեմն ընդլայնվում է՝ տարածվելով ադրբեջանցիների վրա: Հակառակ սրան՝ Թուրքիայում «հայ» եզրույթը հնարավոր է վերաբերի կամ Հայաստանի քաղաքացիներին, կամ Թուրքիայում փոքրամասնություն կազմող հայ համայնքի անդամներին, որոնք Թուրքիայի քաղաքացիներ են և դարեր շարունակ եղել են այդ երկրի բնիկ ժողովուրդը:

Հարևան երկրի ժողովրդին վերաբերող եզրաբանությունը երկու դեպքում էլ երևակում է հակամարտության մաս լինելը: Կարևոր է նշել, որ այս

հետազոտության հարցերը հատուկ կազմված են այնպես, որ ցույց տան յուրաքանչյուր երկրում հասարակության ընկալումները համապատասխանաբար Թուրքիայի կամ Հայաստանի բնակչության վերաբերյալ:

Երախտիքի խոսք

ՀՌԿԿ-Հայաստանը և «KONDA»-ն ըստ պատշաճի արժևորում են մի շարք կազմակերպությունների և անհատների անգնահատելի ներդրումը այս համատեղ հետազոտական նախաձեռնության հաջող իրականացման մեջ: Երկու կազմակերպությունները խորին շնորհակալություն են հայտնում՝

- ՀՌԿԿ-Հայաստանի և «KONDA»-ի թիմերի բոլոր ներկայիս և նախկին անդամներին, որոնք ներդրում են ունեցել այս ծրագրի իրականացման և այս զեկույցի պատրաստման գործում.
- բազմաթիվ զրուցավարներին, տվյալների հավաքագրման մասնագետներին, ասոցացված հետազոտողներին և մեթոդաբաններին, ինչպես նաև փորձագետներին ու վերանայողներին՝ այս ծրագիրը հնարավոր դարձնելու ուղղությամբ իրենց նվիրված և շարունակական ջանքերի համար.
- բոլոր հարցվողներին և առանցքային տեղեկատուներին, որոնք ժամանակ են տրամադրել՝ ներկայացնելու իրենց արժեքավոր կարծիքները:

Ինչպե՞ս կարդալ զեկույցը

Վերապահում

Թեպետ Հայաստանում և Թուրքիայում հետազոտությունն իրականացվել է համանման ընդհանրական մեթոդաբանությամբ և տվյալների հավաքագրման գործիքով, այս զեկույցը կարդալիս կարևոր է նկատի ունենալ, որ նշանակալի տարբերություններ կան տվյալների հավաքագրման մեթոդների, ընտրանքի ռազմավարությունների և համատեքստերի միջև: Հետևաբար, նման տարբերությունների պատճառով հեղինակները չեն պնդում, որ Հայաստանի և Թուրքիայի հետազոտական արդյունքներն ուղղակիորեն և անպայմանորեն համեմատելի են: Մասնավորապես, Հայաստանում կիրառվել է հեռախոսային հարցման մեթոդը՝ պատահական համարների հավաքման միջոցով, մինչդեռ Թուրքիայում իրականացվել են միջնորդավորված պանելային մեթոդով հեռախոսային հարցումներ: Մեթոդաբանական այս տարբերություններն

ազդում են արդյունքների մեկնաբանության վրա: Ուստի խորհուրդ ենք տալիս չհամեմատել տարբեր երկրների նույն փոփոխականների թվերը կամ տոկոսները: Փոխարենը՝ ընթերցողներին առաջարկում ենք անդրադառնալ Գլուխ 3-ին, որը ներկայացնում է համադրված ընկալումները՝ քաղված երկու երկրների վերաբերյալ գլուխներից: Այս մոտեցումն ընթերցողներին կօգնի համակողմանիորեն ըմբռնել ընդհանուր պատկերը՝ առանց ուղղակի համեմատության հնարավոր որոգայթների մեջ ընկնելու:

Զեկույցի կառուցվածքը

Երկրների տվյալներին վերաբերող գլուխներ. կա երկու այդպիսի գլուխ՝ ամեն երկրի համար՝ առանձին: Այս գլուխներից յուրաքանչյուրը պարունակում է երկու հիմնական բաժին՝ մեթոդաբանության և արդյունքների վերաբերյալ: Ամեն երկրի գլխի արդյունքների բաժինն, իր հերթին, ունի չորս թեմատիկ ենթաբաժին, որոնցում հետազոտության արդյունքները վերլուծվում են տարբեր տեսանկյուններից: Յուրաքանչյուր գլուխ ներառում է մանրամասն վերլուծություններ՝ հիմնված հավաքագրված տվյալների վրա՝ ընդգծելով յուրաքանչյուր երկրի հիմնական բացահայտումները և դիտարկումները:

Փորձագիտական կարծիքները ներկայացնող գլուխ. զեկույցը եզրափակում է ամփոփիչ վերլուծական գլուխը, որը հեղինակել են ՀՌԿԿ-Հայաստանի և «KONDA»-ի փորձագետները: Այս գլուխը սինթեզում է նախորդ գլուխներում որոշարկված ընդհանրություններն ու տարբերությունները՝ փորձագիտական վերլուծություն և նկատառումներ ներկայացնելով երկու երկրների և հասարակությունների միջև կարգավորման հնարավոր ուղիների վերաբերյալ:

Ուղեցույց

Զեկույցի համապատասխան բաժինները գտնելու հարցում ընթերցողներին աջակցելու համար ներկայացնում ենք մի քանի սցենար.

1. Եթե հետաքրքրված եք յուրաքանչյուր երկրի տվյալներով ակադեմիական տեսանկյունից, սկսեք կարդալ Գլուխը 1-ը՝ Հայաստանի տվյալների համար, և Գլուխ 2-ը՝ Թուրքիայի: Այս գլուխներն ապահովում են յուրաքանչյուր երկրում հասարակական տրամադրությունների և ընկալումների խոր վերլուծություն:
2. Եթե ձեզ հետաքրքրում է համեմատական դիտանկյունը, առանձին երկրների գլուխները կարդալուց հետո անցեք Գլուխ 3-ին: Այս գլխում սինթեզված են բացահայտումները՝ ընդգծելով երկու երկրների միջև ընդհանրություններն ու տարբերությունները:
3. Եթե փնտրում եք փորձագիտական կարծիքներ և ավելի ընդգրկուն հայացք, Գլուխ 3-ը ներառում է փորձագիտական վերլուծություն և նկատառումներ հարաբերությունների կարգավորման հնարավոր ուղիների վերաբերյալ՝ առաջարկելով ավելի լայն համատեքստ և խնդրո առարկայի ավելի խոր վերլուծություն:
4. Եթե ձեզ անհրաժեշտ է տեղեկատվություն հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ, տեսեք «Սեղմագիրը» և մեթոդաբանության բաժինները (1.1 և 2.1) 1-ին և 2-րդ գլուխներում: Այս բաժինները ներկայացնում են հետազոտության նախագիծը, տվյալների հավաքագրման մեթոդները և ընտրանքի ռազմավարությունները, որոնք կիրառվել են և՛ Հայաստանում, և՛ Թուրքիայում:
5. Եթե ցանկանում եք հասկանալ ավելի լայն և քաղաքականության մակարդակի եզրահանգումները, կարդացեք Գլուխ 3-ը՝ հետազոտության արդյունքներից բխող գործնական եզրահանգումների համապարփակ պատկերին ծանոթանալու համար:
6. Եթե ժամանակը սուղ է, և կարիք ունեք արագ ընդհանուր պատկերացում կազմել, սկսեք «Սեղմագրից»՝ զեկույցի սկզբում, և անցեք Գլուխ 3-ին: Այդկերպ ընդհանուր պատկերացում կունենաք հետազոտության նպատակների, մեթոդների և հիմնական բացահայտումների մասին:

Տեխնիկական նկատառումներ

Զեկույցում և դրա գլուխներում արտացոլված տվյալները ճշգրիտ ու հստակ ընկալելու և մեկնաբանելու համար պետք է հաշվի առնել հետևյալ տեխնիկական ցուցումները.

- **Տոկոսներ և տասնորդականներ.** հանրային կարծիքը ներկայացնելու համար լայնորեն օգտագործվել են տոկոսներ: Ուշադրություն դարձրեք տասնորդական թվերի կլորացմանը, քանի որ կարող են լինել աննշան տատանումներ: Տոկոսները կլորացվում են մինչև մեկ տասնորդական, և փոքր տարբերությունները մեկնաբանելիս պետք է ուշադիր լինել:
- **Ուղիղ մեջբերումներ.** զեկույցում ներառված են հետազոտության մասնակիցների խոսքից ուղղակի մեջբերումներ՝ ապահովելու որակական պատկեր: Այս հատվածներն ընտրվել են՝ պատկերելու ընդհանուր թեմաներն ու հիմնական կետերը, բայց պարտադիր չէ, որ ներկայացնեն բոլոր հարցվողների տեսակետները, հետևաբար պետք է ընթերցվեն միայն տվյալ համատեքստում:

- **Վիզուալներ.** զեկույցի գլուխներում տվյալները վիզուալացնելու նպատակով հաճախ են օգտագործվում աղյուսակներ ու գծապատկերներ: Այդ վիզուալները կօգնեն ավելի լավ հասկանալ միտումներն ու օրինաչափությունները, այնուամենայնիվ, նկատի ունեցեք, որ վիզուալացվել են միայն վիճակագրորեն նշանակալի բացահայտումները: Սա արվել է՝ ապահովելու պարզություն և վերաբերելիություն, ինչպես նաև նվազագույնի հասցնելու բացահայտումների հետագա հնարավոր սխալ օգտագործումը կամ չարաշահումը սպեկուլյատիվ մեկնաբանությունների ներքո:
- **Թվանշումներ գծապատկերներում.** 3%-ից ցածր արժեքների համար թվանշումներ չեն արվել՝ տեսողական հստակություն պահպանելու համար:
- **Տարիքային միջակայքի տարբերություններ.** Թուրքիայի վիճակագրական ինստիտուտը որպես երիտասարդ բնակչություն սահմանում է 15-ից 24 տարեկան անձանց: 2023 թվականի վերջի դրությամբ Թուրքիայում 15-17 տարիքային խումբը, որը կազմում է երկրի երիտասարդ բնակչության 30,3%-ը, ներառում է մոտ 4 միլիոն մարդ: Սա Թուրքիայի համար լրացուցիչ տարիքային միջակայքի (15-17) անհրաժեշտություն է առաջացնում, մինչ Հայաստանն ունի երեք միջակայք՝ սկսած 18 տարեկանից:
- **Նշանակալիության ստուգումներ.** անհրաժեշտության դեպքում ստուգվել և ներկայացվել է վիճակագրական նշանակալիությունը (ներառյալ խմբային տարբերության թեստերը բոլոր էական փոփոխականների համար): Ուշադրություն դարձրեք նշանակալիության վերաբերյալ նշումներին՝ բացահայտումների կայունությունը հասկանալու համար:
- **Ընդհանուր քանակ (N).** տոկոսային հաշվարկներ պարունակող բոլոր հարցերի համար փակագծերում ներառված է N/n թիվը (պատասխանների ընդհանուր թիվը տվյալ փոփոխականի համար):
- **Բազմակի ընտրությամբ հարցեր.** յուրաքանչյուր տարբերակի մասնաբաժինը հաշվարկված է այն հարցվողների ընդհանուր թվի մեջ, որոնց տրվել է տվյալ հարցը:
- **ՀՊ/ԴՊ (հրաժարվում եմ պատասխանել/դժվարանում եմ պատասխանել).** այս պատասխանները ներկայացված են, բացառությամբ այն դեպքերի, երբ մեկնաբանության համար դրանք միանգամայն ոչ էական են:

- **Հարցի շարադրանք.** յուրաքանչյուր վիզուալացված կամ մեջբերված փոփոխականին կից ներկայացված են հարցաթերթիկի կոդերը և հարցի ամբողջական շարադրանքը, ինչպես որ այն եղել է հարցաշարում:
- **Ցուցումներ.** լրացուցիչ ցուցումները, որոնք տրվել են ուսումնասիրությունների ընթացքում, ներառված են փակագծերում, հատկապես, եթե դրանք կարևոր են արդյունքների մեկնաբանման առումով:
- **Ուղղագրություն.** զեկույցի անգլերեն բնօրինակի ամբողջ տեքստում օգտագործված է բրիտանական անգլերեն:

Սեղմագիր

Այս սեղմագիրը ներկայացնում է համատեղ հետազոտական նախաձեռնության համառոտ նկարագրությունը, ներառյալ դրա նպատակները, իրականացնողներին, ժամանակացույցը, հետազոտության նախագծումը և դաշտային աշխատանքը, իսկ ավելի շատ մանրամասներ և հիմնավորումներ կարելի է գտնել այս զեկույցի հետագա գլուխների մեթոդաբանության բաժիններում:

Նպատակը: Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի և Թուրքիայի հանրության և համապատասխան թիրախային խմբերի ներկայացուցիչների (առանցքային տեղեկատուներ և փորձագետներ) վերաբերմունքը երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Մասնավորապես, հետազոտությունը ձգտում է բացահայտել Հայաստանի լայն հանրության ընկալումները Թուրքիայի վերաբերյալ, իսկ Թուրքիայում՝ Հայաստանի վերաբերյալ՝ հաշվի առնելով տարբեր սոցիալ-ժողովրդագրական և աշխարհագրական գործոններ: Բացի դրանից, փորձելով պարզել այս ընկալումների ծագումը՝ հետազոտությունը նպատակ ունի երևակելու երկու հասարակությունների միջև հարաբերությունների կարգավորման հնարավոր հիմքերը, պայմանները և ոլորտները:

Իրականացնողներ: Վերոնշյալ նպատակին հասնելու համար ՀՌԿԿ-Հայաստանի և «KONDA»-ի կողմից համատեղ իրականացվել է համագործակցային հետազոտական նախաձեռնություն՝ Հրանտ Դինք հիմնարկի անմիջական համակարգմամբ:

Երբ և որտեղ: Հետազոտական նախաձեռնությունն իրականացվել է 2023 թվականի հուլիսից մինչև 2024 թվականի հուլիսը Հայաստանում և Թուրքիայում:

Նախագիծ: Համագործակցությունը ներառել է դեպքերի զուգընթաց ուսումնասիրություններ Հայաստանի և Թուրքիայի վերաբերյալ՝ բազմամեթոդ հետազոտության նախագծով՝ համադրելով տվյալների հավաքագրման քանակական և որակական ավանդույթները: Համագործակցության ողջ ընթացքում հետազոտական աշխատանքը ենթադրել է ինչպես համատեղ, այնպես էլ զուգահեռ փուլեր (տե՛ս ստորև գծապատկերը): Նախ, համատեղ ջանքերով մշակվել են հետազոտության շրջանակը և տվյալների հավաքագրման գործիքների փաթեթները՝ համաձայնեցնելով հետազոտության ընդհանուր հարցերը, հարցման հարցաթերթը և անհատական հարցազրույցների ուղեցույցները: Այնուհետև ՀՌԿԿ-Հայաստանը և «KONDA»-ն յուրաքանչյուր երկրում իրականացրել են տվյալների առանձին, բայց զուգահեռ հավաքագրում՝ օգտագործելով նմանատիպ մեթոդաբանություն, սակայն տվյալների հավաքագրման և ընտրանքի փոքր-ինչ տարբեր մեթոդներ: Տվյալների հավաքագրումից հետո յուրաքանչյուր կողմ իրականացրել է համապատասխան երկրի վերլուծությունը՝ առանձին և միաժամանակ (Գլուխներ 1 և 2)՝ հիմք ստեղծելով փոխադարձ վերանայման և համեմատական-վերլուծական լրացուցիչ բաժնի վրա համատեղ աշխատելու համար (Գլուխ 3):

Համագործակցային հետազոտական նախաձեռնության ընթացքի գծապատկեր



Դաշտային աշխատանք: Յուրաքանչյուր երկրում տվյալների հավաքագրման գործընթացն իրականացվել է երկու հիմնական հաջորդական փուլով: Առաջին փուլը բաղկացած էր քանակական ուսումնասիրություններից՝ հիմնված նույն ստանդարտացված հարցաթերթի վրա, որը թարգմանվել է տեղական լեզուներով: Երկրներից յուրաքանչյուրի ուսումնասիրությունների ժամանակ օգտագործվել են տվյալների հավաքագրման և ընտրանքի տարբեր մեթոդներ: Հայաստանում անցկացվել է հեռախոսային հարցում՝ համարների պատահական հավաքման ընտրանքի մեթոդով: Թուրքիայում հեռախոսային հարցում է անցկացվել՝ օգտագործելով միջնորդավորված պանելային մեթոդը: Երկրորդ փուլը բաղկացած էր որակական ուսումնասիրություններից, որոնց շրջանակը սահմանվել է՝ հիմնվելով հավաքագրված քանակական տվյալների նախնական նկարագրական վերլուծության վրա՝ հարստացնելու և ավելի խորացնելու քանակական բացահայտումները: Խորին հարցազրույցներ և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ անցկացնելու համար մշակվել ու յուրաքանչյուր երկրի համատեքստին հարմարեցվել են որակական ուսումնասիրության հարցազրույցների հիմնական ուղեցույցները՝ դրանք օգտագործելով չստանդարտացված ձևով:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՇՈՐԱՑՈՒՅՑԻ ՏԱԿ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան)

1.1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրելու լայն հանրության և համապատասխան թիրախային խմբերի ներկայացուցիչների (հետազոտական թիմի կողմից որոշարկված առանցքային տեղեկատուներ և փորձագետներ) վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Մասնավորապես, հետազոտությունը ձգտում է բացահայտել Հայաստանի լայն հանրության ընկալումները Թուրքիայի վերաբերյալ՝ հաշվի առնելով սոցիալ-ժողովրդագրական և աշխարհագրական տարբեր գործոններ: Բացի դրանից, ձգտելով բացահայտել այս ընկալումների արմատները, հետազոտությունը նպատակ ունի պարզելու երկու պետությունների միջև հարաբերությունների կարգավորման հնարավոր սցենարները:

Այս բաժինը ներկայացնում է, թե հետազոտական ինչ մեթոդներ ու գործիքներ են օգտագործվել վերը նշված նպատակներին հասնելու համար:

Տվյալների հավաքագրման մեթոդներ

Քանակական ուսումնասիրության համար կիրառվել է համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող հեռախոսային հարցազրույցների (CATI) մեթոդը: Դեմ առ դեմ հարցազրույցների համեմատ՝ հեռախոսային հարցումների մեթոդն ավելի արդյունավետ և արագ է, քանի որ հարցվողների ընտրությունը լիովին ավտոմատացված է տվյալների հավաքագրման ծրագրային լուծումների շնորհիվ: Այս մեթոդը տալիս է ճկունության և պատահական ընտրության ավելի մեծ հնարավորություն: Հարցվողներն ընտրվում են պատահականորեն գեներացված թվերից (տե՛ս «Ընտրանքի չափը, աշխարհագրական ծածկույթը և ընտրանքի ռազմավարությունները/ընթացակարգերը» բաժինը), երբ յուրաքանչյուր չհաջողված զանգ ուղղակիորեն փոխարինվում է պատահականորեն գեներացված մեկ այլ համարով: Հարցաթերթը կառավարվում է SurveyCTO ծրագրակազմի միջոցով, ինչը սահմանափակում է կամայականորեն ընտրված հեռախոսահամարների զանգելու հնարավորությունը: Համադրվելով որակի ապահովման ընթացակարգերի հետ (տե՛ս «Որակի ապահովման միջոցառումներ» բաժինը)՝ այն երաշխավորում է հարցման շրջանակում պատահականության ապահովումը: Բացի դրանից, հաշվի առնելով թեմայի զգայունությունը, հեռախոսային հարցման մեթոդը

նպաստում է, որ հարցերին պատասխանելով՝ հարցվողները մնան «չբացահայտված», ինչն ավելի հավանական է դարձնում հարցմանը մասնակցելու նրանց պատրաստակամությունը:

Որակական ուսումնասիրության համար իրականացվել են խորին հարցազրույցներ (ԽՀ) և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ (ԱՏՀ), քանի որ հետազոտության շրջանակից ելնելով՝ անհրաժեշտ է նաև ավելի խորությամբ դիտարկել Թուրքիայի նկատմամբ տրամադրվածության և ընկալումների պատճառները: Այս մեթոդները հատկապես արդյունավետ են անձնական փորձառության և գործելակերպերի ուսումնասիրության առումով: ԽՀ անցկացվել է լայն հանրության 27 ներկայացուցչի հետ: ԱՏՀ անցկացվել է տարբեր ոլորտների 3 ներկայացուցչի հետ:

Տվյալների աղբյուրներ և դաշտային աշխատանքի ժամանակացույց

Այս հետազոտության հիմքում ամբողջությամբ առաջնային տվյալներ են: Ավելի կոնկրետ, այս հետազոտության տվյալների հավաքագրման աղբյուրներն են լայն հանրությունը (ինչպես որակական, այնպես էլ քանակական ուսումնասիրությունների դեպքում) և կոնկրետ ոլորտների, օրինակ՝ լրատվամիջոցների/ՔՀԿ-ների, արվեստի և գործարար ոլորտի ներկայացուցիչները (միայն որակական ուսումնասիրության դեպքում):

Քանակական դաշտային աշխատանքներն իրականացվել են 2023 թվականի նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում՝ տևելով 11 օր: Որակական տվյալների հավաքագրումն իրականացվել է 2024 թվականի ապրիլի 26-ից մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում:

Ի լրումն՝ որպես տվյալների աղբյուր օգտագործվել են Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններին և կարգավորման հնարավոր ուղիներին վերաբերող տարբեր մեդիա նյութեր, գրքեր և նախկինում արված հետազոտություններ՝ հարստացնելու հավաքագրված տվյալների վերլուծությունն ու համապարփակ մեկնաբանությունը:

Ընտրանքի չափը, աշխարհագրական ծածկույթը և ընտրանքի ռազմավարությունները/ընթացակարգերը

Քանակական հետազոտության ընտրանքը ներառում է լայն հանրության 1201 ներկայացուցչի (95% վստահության միջակայք՝ ±3 տոկոս սխալի միջակայքով): Հարցվողներն ընտրվել են հեռախոսահամարների ավտոմատացված պատահական հավաքման (Random Digit Dialing) տեխնիկայի միջոցով՝ ստրատիֆիկացվելով ըստ բջջային օպերատորների՝ հաշվի առնելով դրանց մասնաբաժինները շուկայում: Որպես ընտրանքի շրջանակ օգտագործվել է հնարավոր բջջային համարների գեներացված ամբողջական ցանկը: Օգտագործված մեթոդն ընտրանքից դուրս է թողնում հնարավոր այն հարցվողներին, որոնք չունեն բջջային հեռախոսահամարներ: Սա նշանակում է, որ բնակչությունը, որի նկատմամբ ներկայացուցչական է մեր ընտրանքը, այն մարդիկ են, որոնք ունեն բջջային հեռախոսահամարներ: Այնուամենայնիվ, սա չպետք է էական շեղում համարվի բնակչության ընդհանուր թվից, այլ ավելի շուտ նրբերանգ, որը հարկ է հաշվի առնել: Բոլոր պատասխանների վիճակագրությունն ամփոփված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Պատասխանների վիճակագրություն

(ա) Բոլոր փորձերից			(բ) Պատասխանված զանգերից		
Վիճակագրություն	Քանակ	Մակարդակ	Վիճակագրություն	Քանակ	Մակարդակ
Գեներացված համարներ	38819	100%	Պատասխանված զանգեր	5511	100%
Գոյություն ունեցող համարներ	6970	18%	Համաձայնություն տվածներ	1473	26,7%
Պատասխանված զանգեր	5511	14,2%	Ընտրության չափանիշներին համապատասխանողներ	1289	23,4%
Վավեր	1201	3,1%	Վավեր	1201	21,8%

Ստորև աղյուսակը ներկայացնում է ընտրանքի (այն է՝ 1201) աշխարհագրական ծածկույթը:

Աղյուսակ 2. Նկարագրական վիճակագրություն. մարզ և բնակավայրի տեսակ

Նկարագիր	Հաճախականություն
Մարզ	
Երևան	33 %
Արարատ	9,7 %
Շիրակ	9,4 %
Կոտայք	9 %
Արմավիր	8,7 %
Լոռի	7,2 %
Տավուշ	5,3 %
Գեղարքունիք	5,1 %
Արագածոտն	5 %
Սյունիք	4,7 %
Վայոց ձոր	2,8 %
Բնակավայրի տեսակ	
Գյուղական	36,2 %
Երևան	33,1 %
Այլ քաղաքային	30,7 %

Որակական ուսումնասիրության ընտրանքի ռազմավարությունը ենթադրում է չափանիշների վրա հիմնված ընտրանք: Ստորև ներկայացված է Հայաստանում որակական դաշտային աշխատանքի համար ընտրանքի չափանիշների հիմնավորումը:

1. Լայն հանրության մասնակիցների ընտրության առաջին չափանիշը Թուրքիայի բնակչության հետ անձնական փորձի առկայությունը կամ բացակայությունն է: Անհրաժեշտ է լրացուցիչ և ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ առկա և հնարավոր անձնական փորձի և կարգավորման գործընթացում դրա դերի մասին, քանի որ քանակական ուսումնասիրության մասնակիցների մեծամասնությունը (92%) չի այցելել Թուրքիա, իսկ 80%-ը երբեք չի շփվել թուրքերի հետ:

2. Ինչպես ցույց են տալիս քանակական հարցման տվյալները, բնակավայրի տեսակը, հնարավոր է, կանխորոշող գործոն լինի կարգավորման գործընթացների վերաբերյալ կարծիքների առումով, հատկապես Թուրքիայի բնակչության և սահմանների բացման նկատմամբ բացասական վերաբերմունք արտահայտելիս:

3. ՀՌԿԿ-Հայաստանի նախորդ հետազոտությունը[1] ցույց է տալիս, որ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների ընկալումները կարող են տարբերվել այլ վայրերում ապրողների ընկալումներից, հատկապես երբ խոսքը սահմանների բացման ընկալվող ազդեցության մասին է[2]: Հետևաբար, սահմանամերձ բնակավայրերի բնակիչները հրավիրվել են մասնակցելու որակական ուսումնասիրությանը՝ նպաստելու այս խնդիրների հնարավորինս համապարփակ մեկնաբանմանը:

4. Քանակական հարցումը որոշարկում է հարաբերությունների կարգավորման հնարավոր ոլորտները՝ ըստ հարցվածների: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նրանց միայն մոտ 20%-ն է իրականում շփվել թուրքերի հետ կամ այցելել Թուրքիա, ընտրության գործընթացի հիմքում միայն քանակական տվյալները չէին. այն նաև ներառում էր գրականության վերլուծության շրջանակներում ուսումնասիրված ոլորտային ուղղությունները[3]:

1. ՀՌԿԿ-Հայաստան. «Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման տեսլականը». Հանրային կարծիքի հարցման արդյունքներ: Տես https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/Armenia-Turkey-relations-2.pdf:

2. Տես https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/Armenia-Turkey-relations-2.pdf, էջ 8:

3. Տես Միջազգային ճգնաժամային խումբ. “Turkey and Armenia: Opening Minds, Opening Borders” («Թուրքիա և Հայաստան. Բացվող մտքեր, բացվող սահմաններ»), Եվրոպական զեկույց N°199 – Ապրիլի 14, 2009 թ., էջ 22-23: Աղբյուրը՝ https://icg-prod.s3.amazonaws.com/turkey-and-armenia-opening-minds-opening-borders.pdf:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, անցկացվել է 30 հարցազրույց՝ ըստ հետևյալ խմբերի.

1. 27 խորին հարցազրույց լայն հանրության ներկայացուցիչների հետ,
2. 3 առանցքային տեղեկատուների հետ հարցազրույց հետևյալ ոլորտների ներկայացուցիչների հետ՝
   - մեդիա/ՔՀԿ-ներ,
   - արվեստ,
   - գործարար ոլորտ:

Աղյուսակ 3. Լայն հանրության ներկայացուցիչներ

Բնակավայրի տեսակ		Անձնական փորձ ունեցող	Ընդամենը
Երևան		11	4
Մարզ	Սահմանամերձ բնակավայր	4	2
	Ոչ սահմանամերձ բնակավայր	4	2
Ընդամենը		**19**	**8**

Աղյուսակ 4. Ընտրված ոլորտների ներկայացուցիչներ

Ոլորտ	Ընդամենը
Մեդիա/ՔՀԿ-ներ	1
Արվեստ	1
Գործարար ոլորտ	1
Ընդամենը	**3**

Ներկայացուցչականության հիմքեր

Կարգավորման վերաբերյալ Հայաստանում առկա ընկալումների մասին ՀՌԿԿ-Հայաստանի հավաքագրած քանակական տվյալները երկրի կտրվածքով ներկայացուցչական են՝ ըստ սեռի, տարիքի և բնակավայրի տեսակի:

Որակի ապահովման միջոցառումներ

Քանակական ուսումնասիրության համար հավաքագրվել և հատուկ վերապատրաստվել են զրուցավարներ: Փորձնական հարցման համար անցկացվել է առանձին դասընթաց, մեկ այլ դասընթաց էլ անցկացվել է հիմնական դաշտային աշխատանքից առաջ: Ընտրված զրուցավարներն ուսուցանվել են, թե ինչպես օգտագործել պլանշետը և ինչպես օգտվել SurveyCTO ծրագրակազմից: Նրանք նաև վարժվել են հարցաշարին՝ հնարավորինս մտապահելու այն, որպեսզի իրական հարցազրույցները բնական զրույցի նման սահուն անցնեն: Այնուհետև նրանք վերապատրաստվել են մի շարք բաղադրիչների շուրջ, ինչպիսիք են ընտրանքի կանոններին հետևելու կարևորությունը և հարցազրույցի վարումը (օրինակ՝ համաձայնության ստացման, ուղղորդող հարցերից խուսափելու տեսանկյունից): Այդ ընթացքում զրուցավարները հնարավորություն են ունեցել հարկ եղած դեպքում իրենց մտահոգությունների մասին խոսելու դասընթացավարների կամ թիմի ղեկավարների հետ: Դասընթացից հետո զրուցավարի գիտելիքը գնահատվել է արագ հարցաշարի միջոցով (ընտրանքի, հարցազրույցի ընթացքի, հարցաթերթիկի տրամաբանության և այլնի վերաբերյալ):

Տվյալների որակն ապահովելու համար մենք կիրառել ենք որակի վերահսկման մի շարք միջոցներ: Տվյալների բազան մշտադիտարկվել է ամենօրյա ռեժիմով: Անսովոր արժեքներով կամ հարցազրույցի տարօրինակ տևողությամբ ստացված տվյալներն առանձնացնելու համար օգտագործվել են որակի վերահսկման ավտոմատացված միջոցներ: Հարցազրույցների ձայնագրությունների 10%-ը լսելու միջոցով ստուգվել է զրուցավարի հնարավոր կանխակալությունը (ուղղորդող հարցեր, սխալ կարդացված հարցեր և (կամ) պատասխաններ և այլն): Նույն նպատակով կատարվել են նաև հետզանգեր: Ի լրումն՝ յուրաքանչյուր զրուցավար ստուգվել է ըստ հետևյալ ցուցիչների.

- հարցազրույցների միջին տևողություն և սկզբի/ավարտի ժամանակ,
- «դժվարանում եմ պատասխանել» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակների քանակ,

- հարցաթերթի «կարգավորման» բաժնում անցումների քանակը՝ ըստ յուրաքանչյուր զրուցավարի,
- «այլ» տարբերակի ներքո լրացված պատասխանների հաճախականություն և որակ և բաց հարցեր,
- օրինաչափությունից բեկվող տվյալներ,
- անցումների տրամաբանություն,
- օրվա կտրվածքով արված հարցազրույցների քանակ:

Որակի ապահովումը և տվյալների մաքրումն իրականացվել են R ծրագրավորման միջոցով: Ստացված տվյալները, որոնք վերոնշյալ հիմքերով անբավարար են համարվել, դուրս են թողնվել պատասխաններից: Մասնավորապես, 9 ստացված տվյալ մերժվել է ցածր որակի պատճառով, 12-ում որոշակի արժեքներ փոփոխվել են որակի վերահսկման և հետևած հետզանգերի արդյունքում: «Այլ» տարբերակի ընտրման դեպքում պատասխանները հնարավորինս ստանդարտացվել են: Այսպիսով՝ մենք վստահ ենք, որ վերջնական տվյալները բարձր որակի են և համապատասխանում են որակի ընդհանուր ընդունված չափանիշներին:

Սահմանափակումներ

Կարևոր է հաշվի առնել, որ հարցումն անցկացվել է 2023 թվականի նոյեմբերի կեսերին՝ Լեռնային Ղարաբաղում (ԼՂ) և շուրջը տեղի ունեցած իրադարձություններից և ԼՂ բնակչության բռնի տեղահանումից հետո, և թեման խիստ զգայուն էր հասարակության համար: Քանի որ ՀՌԿԿ-Հայաստանն առաջնորդվում է «մի վնասիր» սկզբունքով, ինչպես հետազոտողների, այնպես էլ հարցված անձանց առնչությամբ հաշվի են առնվել մի քանի նկատառումներ: Հնարավոր վնասը նվազագույնի հասցնելու համար ծագումով Լեռնային Ղարաբաղից ոչ մեկը չի ընդգրկվել հարցման մեջ:

Բացի դրանից՝ երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը վերաբերող բաժնին հասնելիս հարցման մասնակիցները հնարավորություն ունեին որոշելու, թե արդյոք ցանկանում են շարունակել: Այս բաժինը ներառում էր բավականին ուղիղ և ավելի զգայուն հարցեր, հետևաբար բոլոր հարցվողները կարող էին նախօրոք հրաժարվել այդ բաժնի հարցերին պատասխանելուց, եթե իրենց հարմարավետ չէին զգում: Այսպիսով՝ 1201 հարցվողներից 400-ը նախընտրել է բաց թողնել բաժինը. հարաբերությունների կարգավորման բաժնում ստացել ենք 801 պատասխան: Այս հարցերը տարբերելու համար նկատի ունեցեք, որ «N»-ով նշված (normalisation/

կարգավորում) բոլոր հարցերը տրվել են 801 հարցվողի, իսկ մնացած բոլոր հարցերը, որոնք նշված են այլ տառերով, մասնավորապես՝ «P» (perceptions/ընկալումներ) և «D» (demographics/ժողովրդագրություն), տրվել են բոլորին (1201 հոգու):

Էթիկական նկատառումներ

Առաջնորդվելով «մի վնասիր» սկզբունքով (որը նաև ՀՌԿԿ-Հայաստանի որդեգրած էթիկական սկզբունքների հիմքն է)՝ տվյալների հավաքագրման և վերլուծության ողջ ընթացքում հաշվի են առնվել բոլոր անհրաժեշտ էթիկական հանգամանքները:

Քանակական հարցման ընթացքում հարցվողները պատշաճ տեղեկացվել են հետազոտության նպատակի, տվյալների գաղտնիության մասին և իրազեկվել, որ տվյալները վերլուծվելու են ընդհանրացված կերպով: Հարցվողները տեղեկացվել են նաև, որ հարցմանն իրենց մասնակցությունը կամավոր հիմունքներով է, և իրավունք ունեն հրաժարվել ցանկացած հարցի պատասխանելուց:

Մինչ խորին հարցազրույցներն ու առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներն սկսելը, հարցվողները բանավոր և գրավոր տեղեկացվել են հետազոտության շրջանակի և այդ համատեքստում իրենց իրավունքների մասին: Նրանք նաև տեղեկացվել են հարցազրույցները ձայնագրելու անհրաժեշտության մասին, որից հետո կարող էին ձայնագրվելու գրավոր կամ բանավոր համաձայնություն տալ:

Նույն էթիկական նկատառումներից ելնելով՝ զեկույցից բացառվել են մասնակիցների աշխարհագրական դիրքերը և նույնականացնող բոլոր տվյալները:

1.2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1.2.1. Հարցման մասնակիցների ժողովրդագրական պատկերը

Հարցվածների թվում կանանց ու տղամարդկանց ներկայացվածությունը գրեթե հավասար է՝ 47% իգական և 53% արական սեռի մասնակցությամբ (տես գծապատկեր 1): Այս բաշխումը փոքր-ինչ շեղվում է ազգային վիճակագրությունից, ըստ որի՝ Հայաստանի բնակչության 54,4%-ը կին է, իսկ 45,6%-ը՝ տղամարդ[4]: Ընդ որում՝ մենք տեսնում ենք, որ պատահական ընտրանքում բաշխումը հակադարձ շրջված է՝ 8% տարբերությամբ:

Գծապատկեր 1. D1. Հարցվածների սեռը (n=1201)



4. Տոկոսները ներկայացված են 18 և բարձր տարիքի բնակչության համար // ՀՀ 2022 թ. մարդահամարի արդյունքները, տես https://armstat.am/am/?nid=944:

Հարցման մասնակիցների մեծ մասը միջին՝ 36-55 տարիքային խմբում է (38,38%), որին հաջորդում են տարեցները (34,8%) և երիտասարդները (26,81%) (տես աղյուսակ 6): Ամենաերիտասարդ հարցվողը 18 տարեկան է, ամենատարեցը՝ 87: Հարցվողների միջին տարիքը 47 է (տես աղյուսակ 5):

Աղյուսակ 5. D2. Քանի՞ տարեկան եք (n=1201):

Միջին	Նվազագույն	Առավելագույն	Ստանդարտ շեղում	Վավեր քանակ
47,1	18	87	16,2	1201

Աղյուսակ 6. Տարիքային բաշխումը՝ ըստ 3 տարիքային խմբերի

Տարիքային խումբ	n	Հաճախականություն (հարցում)	Հաճախականություն (ազգային վիճակագրություն)[5]
18-35	322	26,8%	28,3%
36-55	461	38,4%	33,9%
56-87	418	34,8%	37,8%

5. ՀՀ բնակչության 2022 թ. մարդահամարի արդյունքներ, տես՝ https://armstat.am/am/?nid=944:

Բնակավայրի տեսակը հնարավորություն է տալիս ավելի խորությամբ պատկերացնել հարցվածների ժողովրդագրական նկարագիրը: Մասնավորապես, այն, որ 63,8%-ը բնակվում է քաղաքային, իսկ 36,2%-ը՝ գյուղական բնակավայրերում (տես գծապատկեր 2), ցույց է տալիս, որ քաղաքակենտրոն բնակության մոդելը գերակշռող է, ինչը մոտ է ազգային վիճակագրությանը (58,3% քաղաքային բնակավայրեր, 41,7% գյուղական բնակավայրեր)[6]:

Գծապատկեր 2. D3. Հարցվածների բնակավայրի տեսակը (n=1201)



6. Նույն տեղում:

Նույնը կարելի է նշել նաև մարզային բաշխվածության մասին. հարցվածների գերակշիռ մասը Երևանից է (33,1%՝ ազգային վիճակագրության 28,8%-ի փոխարեն)[7], որին հաջորդում են Արարատը (9,7%) և Շիրակը (9,4%): Ամենացածր ներկայացվածությունն ունի Վայոց ձորի մարզը (2,7%) (տես գծապատկեր 3):

Գծապատկեր 3. D4. Հարցվածների բաշխվածությունը՝ ըստ մարզերի (n=1201)



7. Նույն տեղում:

Հարցվածների շրջանում ամենամեծ մասնաբաժինն ունեն լրիվ դրույքով վճարովի աշխատողները (32,1%)։ Նրանց հաջորդում են կենսաթոշակառուները (14,8%), տնային տնտես(ուհի)ները (14,6%) և լրիվ դրույքով ինքնազբաղվածները (13%) (տես գծապատկեր 4)։

Գծապատկեր 4. D4. Ներկայումս ո՞րն է Ձեր հիմնական զբաղվածությունը (n=1201)։



Հարցման մասնակիցների 23%-ը չի առնչվում (կարդում կամ լսում) կրոնական տեքստերի հետ, իսկ 29,9%-ը հազվադեպ է առնչվում (տես գծապատկեր 5)։

Գծապատկեր 5. D5. Որքա՞ն հաճախ եք կարդում կամ լսում Ձեր դավանած հավատքի տեքստերը, օրինակ՝ Աստվածաշունչը (n=1201)։



Նմանատիպ պատկեր է բացահայտվում հատուկ օրերից բացի (ինչպիսիք են հարսանիքները, մկրտությունները և հուղարկավորությունները) կրոնական վայրեր, մասնավորապես եկեղեցիներ կամ մատուռներ այցելությունների հաճախականությունն ուսումնասիրելիս։ Մասնակիցների

7,1%-ը երբեք եկեղեցի չի հաճախում առանց հատուկ առիթի, իսկ գրեթե 35%-ը հազվադեպ է հաճախում (տե՛ս գծապատկեր 6), ինչը նշանակում է, որ հասարակության շրջանում կրոնական պրակտիկաները հաճախադեպ չեն:

Գծապատկեր 6. D6. Շատուկ օրերից բացի՝ որքա՞ն հաճախ եք այցելում կրոնական վայրեր, օրինակ՝ եկեղեցիներ ու մատուռներ (n=1201):



Հատկանշական է, որ բավականին մեծ թվով հարցվածներ (45,6%) նշում են, որ իրենց նախնիները ներկայիս Թուրքիայից են: Երկրորդ տեղում (30,4%) այն հարցվածներն են, որոնց նախնիները ներկայիս Հայաստանից են (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7. D7. Որքանով որ տեղյակ եք, խնդրում եմ ասացեք, թե որտեղից են Ձեր նախնիները տեղափոխվել ներկայիս Հայաստան (n=1383)[8]:



8. Բոլոր ներկայացված տարբերակները, բացի «Ամերիկաներից», վիճակագրորեն նշանակալի են:

Իրենց տնային տնտեսությունների եկամուտը և բարեկեցությունը դիտարկելիս հարցվածների զգալի մասն իրեն ընկալում է միջին շերտում: Մինչ 57,8%-ը (տես գծապատկեր 8) իր տնային տնտեսությունը դասում է միջին շերտերին, արդյունքներն արտացոլում են, որ հարցված բնակչության շրջանում նշանակալի է նաև այն մարդկանց թիվը, որոնք իրենց ընկալում են բարեկեցության և ֆինանսական վիճակի մյուս շերտերում:

Գծապատկեր 8. D8. Եթե մեր երկրում մարդկանց բաժանեիք ըստ եկամտի ու բարեկեցության 5 շերտի, Ձեր տնային տնտեսությունը, ըստ Ձեզ, ո՞ր շերտում կհայտնվեր, եթե 1-ը ամենաաղքատ շերտն է, իսկ 5-ը՝ ամենահարուստը (n=1201):



Վերջապես, ուսումնասիրելով քաղաքական գաղափարախոսությունները՝ պարզ է դառնում, որ հարցվածների զգալի մասը (22,9%) իրեն ընկալում է որպես լիովին պահպանողական/աջակողմյան, իսկ հարցվածների՝ դրան մոտ տոկոսը (19,3%) հարում է ազատական/ձախ գաղափարախոսությանը: Հետաքրքիր է, որ մի զգալի հատված (13,9%) դիրքավորվում է կենտրոնում՝ արտացոլելով հարցված բնակչության քաղաքական տեսանկյունների բազմազանությունը (տես գծապատկեր 9):

Գծապատկեր 9. P1. Մարդիկ կարող են տարբեր դիրքորոշումներ ունենալ այն մասին, թե ինչպես պետք է աշխարհը գործի: Սա հաշվի առնելով՝ ինչպե՞ս կբնութագրեք ինքներդ Ձեզ: Ես ինձ համարում եմ... (n=1201):



1.2.2. Գիտելիք, ընկալումներ և վերաբերմունք

Այս գլուխն ամփոփում է հետազոտության մասնակիցների գիտելիքը, ընկալումները և վերաբերմունքը Թուրքիայի և Թուրքիայի բնակչության վերաբերյալ[9]: Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները շատ տարիների պատմություն ունեն, սակայն զարգացումը դանդաղ է և դեռևս չի հանգեցրել կառուցողական վերջնակետի: Չնայած ընդհանուր սահմանին՝ այս երկու երկրների բնակիչների միջև շփումը շատ սահմանափակ է եղել: Թեև երկրների միջև օդային կապը գործում է 1996 թվականից[10], այս պահին ցամաքային սահմանները մնում են փակ, իսկ հաղորդակցությունը փաստացի սովորաբար իրականացվում է Վրաստանի տարածքով:

Այնուամենայնիվ, չնայած այս իրավիճակին, քանակական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հասարակության գրեթե 42%-ը կարծում է, որ բավականաչափ տեղեկացված է Թուրքիայի և Թուրքիայի բնակչության մասին (տե՛ս գծապատկեր 10):

Գծապատկեր 10. P13. Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք, ըստ Ձեզ, տեղեկացված Թուրքիայի և թուրքերի մասին (n=1201):



9. Խնդրում ենք նկատի ունենալ, որ նախքան փոփոխականների միջև կորելացիաների հաշվարկները, բոլոր «դժվարանում եմ պատասխանել» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները համարվում էին «ոչ կիրառելի», ինչը պահանջվում էր վիճակագրական թեստերի ճշգրտության համար: Հետևաբար, դուք կնկատեք տարբեր թվով դիտարկումներ՝ ըստ կորելացված փոփոխականների:

10. Artak Ayunts, Talha Kose, "Armenia and Turkey an Overview of Relations and Prospects for Normalisation", HDV publications, Istanbul, March 2019, p. 53.

Ի լրումն՝ հանրության մոտ 70%-ը վստահ է, որ Թուրքիան մեծ երկիր է (տե՛ս գծապատկեր 11):

Գծապատկեր 11. P6. Ըստ Ձեզ՝ Թուրքիան այսօր տարածքային չափերով ինչպիսի՞ երկիր է՝ մեծ, ո՛չ մեծ, ո՛չ էլ փոքր, թե՝ փոքր (n=1201):



Հատկանշական է, որ Հայաստանի բնակչության 38,3%-ը նշում է, որ չգիտի ներկայիս Թուրքիայի բնակչության թիվը, և միայն 22,1%-ն է կարծում, որ Թուրքիայի բնակչությունը 80-100 մլն է[11] (տես գծապատկեր 12): Սա նշանակում է, որ որոշ դեպքերում մարդկանց ընկալումը կարող է չհամընկնել Թուրքիայի մասին իրական փաստերի հետ:

Գծապատկեր 12. P5. Ի՞նչ եք կարծում՝ Թուրքիան այսօր մոտավորապես քանի՞ միլիոն բնակչություն ունի (տարբերակները չեն կարդացվել, n=1201):



11. 2024 թ. դրությամբ Թուրքիան ունի մոտ 87 միլիոն բնակչություն, տես՝ https://www.worldometers.info/world-population/turkey-population/

Հարցումը ցույց է տալիս, որ հասարակությունը Թուրքիայի և դրա բնակչության մասին հիմնականում տեղեկանում է պատմության դասերի և ընտանեկան քննարկումների միջոցով: Ցանկում հաջորդը նորություններն ու ընթացիկ իրադարձություններն են՝ ընտրության տեսանելի միջակայքով (տես գծապատկեր 13):

Գծապատկեր 13. P14. Ինչպե՞ս կավարտեիք հետևյալ նախադասությունը. «Փոքրուց ես Թուրքիայի և թուրքերի մասին տեղեկացել եմ հիմնականում...» (բազմակի ընտրության հարցեր, պատասխանները չեն կարդացվել հարցվողների համար, n=1371)[12]:



12. Բոլոր ներկայացված տարբերակները, բացի «Ակադեմիական հեազոտություններ և հրատարակություններից» և «Միջազգային հարաբերությունների ու աշխահաքաղաքականության նկատմամբ հետաքրքրությունից դրդված» տարբերակներից, վիճակագրորեն նշանակալի են:

Որակական տվյալներն արժեքավոր տեղեկություններ են տալիս՝ ընդգծելով կուտակված հավաքական հիշողության հնարավոր ազդեցությունը Թուրքիայի բնակչության վերաբերյալ ընկալումների վրա: Մասնավորապես, դրանք ցույց են տալիս, որ կրթությունը և ընտանիքի անդամների փոխանցած պատմությունները վճռորոշ դեր են խաղում նախնական ընկալումների ձևավորման հարցում:

Հատկապես նրանք, ովքեր պատմություններ են լսել 1915 թվականին իրենց հարազատների տեղահանման մասին, թուրքերին ավելի բացասական որակումներ են տալիս: Ավելին, ինչպես ցույց է տալիս որակական ուսումնասիրությունը, պատմության դասերը և դպրոցական դասագրքերը, հնարավոր է, նպաստում են թուրքերի՝ որպես «դաժան», «սառնասիրտ», «թշնամի» ժողովրդի ընկալմանը: Բացի դրանից, ակնհայտ է, որ հատկապես ավագ սերունդը (50 տարեկան և բարձր) առանձնահատուկ շեշտադրում է դասագրքերը, պատմությունը և Ցեղասպանության հիշատակման արարողությունները՝ խոսելով Թուրքիայի բնակչության մասին իրենց գիտելիքի աղբյուրների մասին:

> …Մանկապարտեզի ժամանակ մեծ քրոջս ցերեկույթին գնացինք [Ծիծեռնակաբերդ] Եղեռնի կապակցությամբ, էդ օրվանից իմ մեջ մտել է, որ իրենք [թուրքերը]… ու հետո ընթացքից պատմություն կարդալով, մեծանում ես, դպրոց ես գնում, պատմություն ես կարդում ու հետո էլ շփվում ես կյանքում, ու ինչ որ գրում են մեր մեծերը էդպես էլ կան իրենք իրականում:
>
> Տղամարդ, 56 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Շիրակ,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

> …Առաջին հերթին ասոցացվում է Օսմանյան կայսրության, Հայաստանի նվաճման, Ցեղասպանության և հայկական մշակույթի, հայկական արվեստի գողացման հետ: Էդ իրենց կարմիր դրոշը ինձ հիշեցնում է արյան կարմիրը:
>
> Տղամարդ, 29 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Վայոց ձոր,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

> …Իրենք շատ արնասիրտ են: Իրենք միշտ վատը, ագրեսիվ, միշտ պատերազմական բանով են ապրում…
>
> Կին, 36 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

Հակառակ դրան՝ նրանք, ովքեր Թուրքիայի բնակչության մասին լսել են նրանց հետ առևտուր արած կամ որպես զբոսաշրջիկ առնչված հարազատներից, ավելի հանդուրժողաբար են բնութագրում թուրքերին: Հատկապես ավելի երիտասարդ մասնակիցները, որոնք դասագրքերից և պատմության դասերից բացի նշել են նաև տեղեկատվության ավելի լայն աղբյուրներ, ինչպիսիք են մեդիան, նորությունները և ֆիլմերը (ներառյալ Թուրքիայում արտադրված ֆիլմերն ու հեռուստասերիալները), երկարաժամկետ կտրվածքով ավելի լայն պատկերացում ունեն այդ ազգի մասին և ավելի հակված են Թուրքիայի բնակչության հետ համագործակցության և հաղորդակցման, քանի որ ծանոթ են թուրքական ինքնության տարբեր կողմերին:

> …Առաջինը [Ցեղասպանությունն է մտքով անցնում], որի մասին գիտենք նկարներից, վիդեոներից, ֆիլմերից: Մեզ ներկայացվել է [դրա մասին] Ցեղասպանության թանգարանում: Երբ խոսում ենք թուրքական մշակույթից, թուրքական սերիալների, ֆիլմերի կամ կինոների միջոցով մեզ փորձել են տեղ հասցնել ամեն ինչի բազմազանությունը՝ սկսած խոհանոցից, մարդկանց հանդեպ վերաբերմունքից ու հարաբերություններից:
>
> Կին, 19 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

> …Հենց հասարակ մարդիկ բարեհամբույր են ավելի, բարիդրացիական շփում են փորձում ստեղծել: Ինչ խնդիր եղել է, ավելի շատ քաղաքական է: Պատմական ֆիլմերից եմ կարծում, որ էդ ամեն ինչը իրենց զինվորականների ու ղեկավարության մեղքով է: Օրինակ՝ էն «Արտույտների ագարակ»-ի դեպքում հենց թուրք ժողովուրդը իրենց հետ միասին ապրել են: Ոչ մեկն էլ կռիվ չի ուզում…
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Որակական տվյալները նաև ցույց են տալիս, որ վերաբերմունքն ու պատկերացումները ձևավորվում են սուբյեկտիվորեն: Օրինակ՝ մի տեղեկատու դրական կարծիք ուներ թուրքերի, բայց բացասական՝ Թուրքիայի կառավարության մասին, և այս տեսակետը վերագրում էր իր պատմության ուսուցչի ուսուցանած գաղափարներին:

...Ոչ մի բան չի փոխվել: Ավելի շատ վերահաստատվել է էն միտքս [մինչ շփումը նա դրական վերաբերմունք ուներ հենց թուրք ժողովրդի նկատմամբ], որ Թուրքիայի հասարակ ժողովուրդը երբեք էլ պատերազմ չի ուզում, կռիվ չի ուզում: Մեր դպրոցի պատմության դասատուն էլ ասում էր, ոնց որ նրանց մայրերն են իրենց որդիներին ուղարկում պատերազմ, էդպես էլ մերոնք, այսինքն՝ ոչ մեկը չի ուզում [պատերազմ]:

Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

Վերդառնալով վիճակագրությանը՝ հարցումը ցույց է տալիս, որ հասարակության 38,9%-ը շատ բացասական վերաբերմունք ունի թուրքերի նկատմամբ (տես գծապատկեր 14):

Գծապատկեր 14. P10. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք թուրքերի նկատմամբ Ձեր վերաբերմունքը (n=1201):



Թուրքերի նկատմամբ վերաբերմունքն այս դեպքում տարբերվում է՝ ըստ հարցվողների բնակավայրի տեսակի[13], այն է՝ թուրքերի նկատմամբ բացասական կամ խիստ բացասական վերաբերմունք ունի քաղաքային բնակավայրերում ապրողների 63%-ը՝ ի տարբերություն գյուղական բնակավայրերում ապրողների, որոնց 75,6%-ն ունի բացասական վերաբերմունք (տես գծապատկեր 15): Հատկանշական է, որ գյուղական բնակավայրերը տարբերվում են քաղաքային բնակավայրերից, ներառյալ Երևանը, իսկ Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություն չի նկատվել:

Գծապատկեր 15. Վերաբերմունքը թուրքերի նկատմամբ՝ ըստ բնակավարի տեսակի (n=1148)



13. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=194884, p-արժեք=0.0000002824, n=1148

Կարևոր է նշել, որ հարցման վիճակագրության համաձայն՝ մարդկանց բավականին մեծ խումբ կարծում է, որ թուրքերը բացասական (23,4%) և շատ բացասական (42,5%) վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ (տե՛ս գծապատկեր 16):

Գծապատկեր 16. P11. Ըստ Ձեզ՝ ընդհանուր առմամբ՝ ի՞նչ վերաբերմունք ունեն թուրքերը հայերի նկատմամբ (n=1201):



Հայերի նկատմամբ թուրքերի վերաբերմունքի ընկալումները, կարծես, մեծապես փոխկապակցված են թուրքերի նկատմամբ հայերի վերաբերմունքի հետ[14]: Սա խոսում է այն մասին, որ թուրքերի նկատմամբ բացասական վերաբերմունք արտահայտող հարցվողներն ավելի հավանական է, որ կարծեն, թե թուրքերը նույնպես բացասական վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ: Սա նշանակալից բացահայտում է, քանի որ ցույց

14. Քենդալի գործակից=0.6088909, p-արժեք=0.000, n=1056

է տալիս, որ այն, թե ինչպես են մարդիկ ընկալում «ուրիշին», և այն թե իրենց կարծիքով ինչպես է «ուրիշն» ընկալում իրենց, կարող են մեծապես փոխկախված լինել: Բացի դրանից՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք (52,2%) ավելի հաճախ են հակված կարծելու, որ թուրքերը շատ բացասական վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ, քան տղամարդիկ (44,5%) (տե՛ս գծապատկեր 17)[15]:

Գծապատկեր 17. Հայերի նկատմամբ վերաբերմունքի ընկալումները՝ ըստ հարցվածների սեռի (n=1056)



15. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=126085, p-արժեք=0.003931

Ավելին՝ գյուղական բնակավայրերից հարցվածներն ամենից շատ են կարծում, որ թուրքերը բացասաբար են վերաբերվում հայերին (58,5%), իսկ Երևանից հարցվածները (37,3%)[16]՝ ամենից քիչ (տե՛ս գծապատկեր 18):

Գծապատկեր 18. Հայերի նկատմամբ վերաբերմունքի ընկալումները՝ ըստ հարցվածների բնակավայրի տեսակի (n=1056)



16. Թեստ՝ ըստ Դաննեթի, այլ քաղաքային – գյուղական բնակավայրեր, P շտկ.=0.0019149; այլ քաղաքային – Երևան, P շտկ.=0.001277456; գյուղական – Երևան, P շտկ.=0.0000

Ընդհանուր առմամբ՝ թուրքերի նկատմամբ հասարակության այս ընդհանուր բացասական վերաբերմունքի հնարավոր արմատները կարելի է հասկանալ՝ առանձին պատմությունների մեջ խորամուխ լինելով: Այստեղ նկատում ենք, որ հայերը «թուրք» բառն օգտագործում են որպես վիրավորական ածական՝ բնութագրելու իրենց ընկալմամբ բացասական մեկին:

> …Միշտ ջղայնանում եմ, որ մարդիկ իրար վիավորելուց ասում են «թուրք»: Կապ չունի՝ ինչքան էլ ես ջղայնացած լինեմ, ոչ մեկի երբեք չեմ ասի «թուրք», որովհետև չեմ ուզում հային ասեմ «թուրք»: Ավելի լավ է՝ այլ վատ բառ ասեմ, ինչի՞ էդքան փիս վիրավորեմ:
>
> Կին, 68 տ., առանցքային տեղեկատու, գործարար ոլորտի ներկայացուցիչ

> …Մենք իրենց [թուրքերին] որպես մարդ չենք նայում, մենք իրենց նայում ենք որպես «թուրք», մեր մոտ էդ արմատացած է… մենք Թուրքիա պետության հետ կապված ամեն ինչին վատ ենք վերաբերվում, ու իրենց ու մեր տարբերությունը մենակ դա է, որ մենք իրենց չենք նայում որպես մարդ:
>
> Տղամարդ, 22 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ, թուրքերի հետ շփում ունեցել է

> …Մենք փոքր երեխա էինք, խաղում էինք հայ ու թուրք, ոչ մեկը չէր ուզում թուրք լիներ, ու թուրքին պետք է անպայման սպանեինք, ինչի՞ համար, մենք փոքր երեխա էինք, էդ նույն Ցեղասպանության պատճառով: Իմ մամայի տատիկը Ցեղասպանությունից մազապուրծ եղած կին էր, էն ինչ որ ինքը պատմում էր, դու չես կարող դա մոռանալ, չես կարող չմտածել դրա մասին, փակել էդ էջը քո կյանքում, որ՝ դե լավ ոչինչ:
>
> Կին, 45 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան, թուրքերի հետ շփում չի ունեցել

Հաճախ նկատելի է, որ Թուրքիայի բնակչության մասին պատկերացումները շաղկապված են ադրբեջանցիների մասին պատկերացումների հետ: Առանցքային տեղեկատուների տեսանկյունից, թերևս, Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունների գործողությունները նույնական են (այս համատեքստում երբեմն հիշատակվում են 2020 թ. ԼՂ պատերազմը և Սումգայիթի ջարդերը): Կարևոր է նշել, որ այս նմանությունն առանցքային տեղեկատուների կողմից մատնանշվում է՝ առանց մոդերատորների որևէ հուշման (ՀՌԿԿ-Հայաստանը փորձել է պարզել նաև Թուրքիայում բնակվող

քրդերի նկատմամբ վերաբերմունքը, սակայն նրանց նկատմամբ ընդհանրական վերաբերմունքի որևէ օրինաչափություն չի դիտարկվել):

> ...Կարելի ա ասել՝ ադրբեջանցիներից ոչնչով չեն տարբերվում թուրքերը, կարելի ա ասել՝ նույնն են:
>
> Կին, 36 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

Սա ցույց է տալիս, որ ընդհանուր երկիմաստություն կա «թուրքերի» բնորոշման երկու ընկալումների միջև: Մտային պատկերներով կառուցվող ասոցիացիաների հետ կապված շփոթը ավելի է դժվարացնում երկու պետությունների միջև քաղաքական մարտահրավերների տարբերակումը: Սա, ենթադրաբար, ձևավորում է Թուրքիայի բնակչության նկատմամբ առկա անվստահության մակարդակը, ինչի արդյունքում մարդիկ, փաստորեն, չեն ցանկանում ապրել թուրքերի հարևանությամբ՝ դա բացատրելով վախի և անվստահության միջավայրով:

> ...Առավել ևս այս օրերին [նկատի ունի հետպատերազմյան շրջանը] շատ բացասական են, իրականում ցանկություն չունեի որևէ կերպ անդրադառնալ, ինչ-որ շփումներ ունենալ...
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Շիրակ,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Իրենց [թուրքերի] մասին մտածելիս առաջին պատկերը, որ գալիս է զգուշավորությունն է: Պարզ է՝ զգուշավորություն ուղղակի...
>
> Տղամարդ, 49 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Հնարավորություն չեմ տեսնում, որ կարող է այս երկու ժողովուրդների մեջ հարևանություն լինել: Ներկա էս Տավուշի իրադարձությունները տեսնելով՝ ոչ: Կարգավորման մտահոգությունների մասով, հա, ասում եմ՝ միշտ էդ վախը մոտս կա, միշտ նրանց հետ դու պետք է ապրես ահ ու սարսափով, որովհետև էլի ընդունակ են ինչ-որ մի վատ արաքի:
>
> Կին, 36 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

Ինչպես ցույց է տալիս ստորև ներկայացված գծապատկերը՝ հարցվածների զգալի մասը (47,1%) համաձայնել է, որ հայերը պետք է Թուրքիայի բնակչության հետ խաղաղ ապրելու ճանապարհ գտնեն, այդուհանդերձ, ավելի քիչ

թվով մարդիկ են պատրաստ թուրք ընկերներ ունենալ: Ավելին՝ ավելի ցածր հանդուրժողականություն է դիտարկվել հայի և թուրքի միջև ամուսնության հնարավորությունների հարցում (տես գծապատկեր 19):

Գծապատկեր 19. P12. Այժմ կկարդամ մի քանի դատողություն, իսկ Դուք ասացեք, թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է համապատասխանում Ձեր կարծիքին (n=1201):



Քանի որ ինքնության վերաբերյալ տարբեր տեսություններ[17] նշում են, որ մարդիկ սովորաբար հակված են նման կապերի մեջ մտնել իրենց նման մարդկանց հետ, այս արդյունքները կարող են ենթադրել ուրիշացման (othering) միտում, այդ թվում՝ նաև երկու հասարակությունների միջև ցանկացած նմանության անտեսում:

> …Անգամ եթե նմանություններ կան, ես չեմ ուզենա, չեմ կարողանա մտաբերել… Դե ամեն դեպքում կա, մենք շատ ենք չէ խառնվում, երաժշտական բաներով էլ ինչ-որ նմանություն կա… Ինչքան էլ չուզենք [նման լինել]:
>
> Կին, 34 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Արմավիր,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

Դա նկատվում է նաև քանակական տվյալների մեջ, որոնց համաձայն՝ հասարակությունը հակված է կարծելու, որ հայկական և թուրքական մշակույթները բոլորովին մոտ չեն (31,2%): Երբ շարժվում ենք դեպի 1-10 սանդղակի մյուս ծայրը (տե՛ս գծապատկեր 20), կարող ենք դիտարկել տոկոսների հարաբերական աստիճանական անկում՝ «ընդհանրապես մոտ չեն» տարբերակից մինչև սանդղակի մեջտեղ (արժեք «5», 18,1%), այնուհետև մինչև «շատ մոտ են» (5,9%): Հատկանշական է, որ վերջին պատասխանն ավելի հազվադեպ է հանդիպում, քան «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը (8,6%): Թեև 2-ից 4-ի և 6-ից 9-ի միջև ընկած արժեքներն ավելի քիչ տարածված են, սանդղակը պայմանականորեն երկու մասի բաժանելու դեպքում 1-5 պատասխանների գումարային տոկոսը կազմում է 67,3%, մինչդեռ 6-10 միջակայքի պատասխանները կազմում են պատասխանների 23,3%-ը: Սա հուշում է, որ հստակ մեծամասնությունը հակված է այն ընկալմանը, որ երկու մշակույթները մոտ չեն: Միջին և մեդիան արժեքները (համապատասխանաբար 4,01 և 4, (n=729) նույնպես, կարծես, դա են հաստատում:

17. Տես, օրինակ, Tajfel, H. and Turner, J.C. (1985) The Social Identity Theory of Intergroup Behaviour. In: Worchel, S. and Austin, W.G., Eds., Psychology of Intergroup Relations, 2nd Edition, Nelson Hall, Chicago //
R. Jenkins (2014), "Social Identity". 4th ed. London: Routledge:

Գծապատկեր 20. N3. Ի՞նչ եք կարծում՝ հայկական և թուրքական մշակույթները որքանո՞վ են մոտ միմյանց (n=801):



Այս միտումը կարող է մեկնաբանվել նաև որպես «ուրիշացման» արդյունք՝ հանուն սեփական մշակույթի և ինքնության պահպանման: Ըստ որակական ուսումնասիրության՝ հասարակության ընկալումները ենթադրաբար խթանվում են այն իրողությամբ, որ մշակութային տարրերը, որոնք, ինչպես համարում են մարդիկ, գոնե մասամբ հայկական ծագում ունեն, չեն ճանաչվում որպես հայկական: Հենց այդպիսի տարրերի (օրինակ՝ սննդի և խոհանոցի)՝ թուրքական մշակույթին վերագրման դեպքերն էլ, հնարավոր է, նպաստում են մարդկանց մտքերում մշակույթների միմյանցից հեռացմանը:

> …Իրենք մշակույթ չունեն… Տոլման սարքում են Թուրքիայի ազգայինը, լավաշը ուզեցին սարքել Թուրքիայի ազգայինը, թե բաստուրմա-սուջուխը… Անգամ հիմա դուդուկն են ուզում սարքել թուրքական, բայց դուդուկը ծիրանափող է, իրանք չգիտեն՝ ծիրանափողն ինչ բան ա:
>
> Տղամարդ, 58 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

...Իրենք փորձում են մեր տարածքին բնորոշ էթնիկ տարբեր բաները իրենց վերագրեն, այսինքն՝ տոլման, լավաշը, բաստուրման:

Կին, 19 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում չի ունեցել

Հատկանշական է, որ ըստ քանակական տվյալների՝ «ուրիշացման» այս միտումն ավելի ակնհայտ է գյուղական վայրերում, որտեղ մշակութային սահմաններն ավելի զգայուն են և համայնքային կյանքում ավելի առանցքային դեր ունեն: Հատկապես տարբերվում են Երևանի և գյուղական բնակավայրերի բնակիչների պատասխանները (տես գծապատկեր 21)[18]:

Գծապատկեր 21. Թուրքական և հայկական մշակույթների մերձության ընկալվող մակարդակը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=729)



18. Թեստ՝ ըստ Դաննեթի, գյուղական տարածք – Երևան, P շտկ..=0.007274901, n=729

Արժե նաև ավելի մանրամասն ուսումնասիրել նրանց պատասխանները, ովքեր կարծում են, որ մշակույթները որոշ չափով կամ շատ մոտ են (այսինքն՝ հարցվողները, որոնք նշել են 3-10 պատասխանները): Երաժշտությունն ու պարը նմանության ամենաշատ նշված ոլորտն են, որին հաջորդում են խոհանոցն ու արվեստը (տես գծապատկեր 22):

Գծապատկեր 22. N4. Ի՞նչ եք կարծում՝ երկու երկրների միջև մշակույթի ո՞ր ոլորտներում կան նմանություններ (բազմակի ընտրությամբ հարցեր, պատասխանները չեն կարդացվել հարցվողների համար, n=776)[19]:



19. Բոլոր ներկայացված տարբերակները, բացի «Սպորտ և ավանդական խաղեր» և «Տեխնոլոգիաներ և ժամանակակից ազդեցություններ», վիճակագրորեն նշանակալի են:

Հատկանշական է, որ ըստ տվյալների՝ մշակութային նմանությունների ընկալումները հնարավոր է կապված լինեն հարցվողների տարիքի հետ: Տարեցները հակված են ավելի հաճախ հիշատակել երաժշտության և պարի ասպարեզում հայկական և թուրքական մշակույթների ընդհանրությունները (տե՛ս աղյուսակ 7)[20], մինչդեռ ավելի երիտասարդները հակված են ավելի շատ նշելու հայկական և թուրքական մշակույթների ընդհարությունները խոհանոցի ոլորտում[21]: Ի լրումն՝ Երևանի բնակիչները, բնակավայրերի այլ տեսակների համեմատ, ավելի շատ են նշել խոհանոցի տարբերակը (տե՛ս գծապատկեր 23)[22]:

Աղյուսակ 7. Խոհանոցը՝ որպես մշակութապես նման ոլորտ երկրների միջև՝ ըստ տարիքի (n=445)

	Հիշատակել են խոհանոցը	Չեն հիշատակել խոհանոցը
18-24 (n=45)	51,1%	48,9%
25-34 (n=75)	42,7%	57,3%
35-44 (n=94)	35,1%	64,9%
45-54 (n=81)	29,6%	70,4%
55-64 (n=71)	29,6%	70,4%
65+ (n=79)	29,1%	70,9%

20. Պարզ գծային ռեգրեսիա, տարիքի հետ կապված գործակից=0.018200, p-արժեք=0.00424, n=445

21. Պարզ գծային ռեգրեսիա, տարիքի հետ կապված գործակից=-0.012519, p-value=0.0455, n =445

22. Խի-քառակուսի թեստ, X2=16.945, p-արժեք=0.0002091, n=445

Գծապատկեր 23. Խոհանոցը՝ որպես մշակութապես նման ոլորտ երկրների միջև՝ ըստ բնակավայրի տեսակի (n=445)



Այս համատեքստում որակական ուսումնասիրության մեջ ավելի հաճախ են հանդիպում արտաքին տեսքը, ավանդույթները, ավանդական հագուստը և հանդերձանքը, երաժշտությունը, խոհանոցը, սովորույթները, խոսքի ձևը և ավանդույթներին հակումը:

> ...Մենք շատ ենք խառնում, մեր տարազներն են՝ թվում է, բայց պարզվում է դա մեր տարազը չի, դա մեր հայկականը չի, թուրքականն է, էդ կտորները, որ էդքան տարածված են բոլորի տանը, պարզվում է, որ դա մեր տարազի հետ ընդհարապես կապ չունի, խառնում ենք, ամեն դեպքում...
>
> Կին, 34 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Արմավիր, թուրքերի հետ շփում չի ունեցել

> Ես հիշում եմ, որ «Էրազմուսի» էի, իրենք [թուրքերը] խոսում էին ավանդապաշտ լինելուց, թե ոնց մեզ մոտ 6-7-ից հետո աղջիկը չպիտի դուրս գա, որ խոսում էինք, ասում էին, որ Թուրքիայում էլ է էդպես: Թուրքիայում էլ չի կարելի տատու անել, Թուրքիայում էլ չի կարելի պիրսինգ անել: Հավանաբար էդ կարող եմ ասել, էդ ավանդապաշտությունը կարող է նմանություն լինել:
>
> Կին, 23 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Լոռի, թուրքերի հետ շփում ունեցել է

...Արտաքինի հետ կապված նմանություններ կարող են լինել, երաժշտության մեջի մելիզմները և մենք ենք օգտագործում, և նրանք են օգտագործում: Խոսքի տոնայնության մեջ, երբ մի քիչ բարձր ենք խոսում, դա և իրենց մշակույթին է հարիր, և մեր մշակույթին: 2 ազգն էլ շատ պահպանողական են, հիմնական տարբերությունը դա է: Կրոնի մեջ երկուսն էլ շատ ընկղմված են, կրոնը շատ մեծ դեր ունի երկուսի մոտ էլ:

Կին, 23 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Առաջինը, որը գալիս է մտքիս էն է, որ մենք շատ նման ենք իրար: Առաջին այցի ժամանակ տեսա որ էնտեղ էլ ամեն տեղ նուռ է, ես զարմացա, ես կարծում էի թե նուռը Հայաստանի խորհրդանիշն է, բայց չէ, նուռը իրենց խորհրդանիշն է: Ու նաև իմ մոտ էնպիսի տպավորություն էր, որ ես տանն եմ, եղել է, որ ես ճամփորդել եմ այլ շատ երկրներում, բայց տենց տանը զգացողությունը չի եղել, մենք շատ նման ենք:

Կին, 44 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

Ի լրումն այս պատկերացումների՝ որակական ուսումնասիրությունը որոշարկում է առանցքային տեղեկատուների կողմից ընդգծված տարբերությունների երեք հիմնական հիմքերը:

Նախ՝ անհատական և ազգային ընկալվող հատկանիշները, որոնց համաձայն՝ թուրքերը նկարագրվում են որպես ավելի բռնի և ագրեսիվ՝ ի տարբերություն հայերի: Սա հետաքրքիր կերպով հակասում է բացահայտված նմանություններին, քանի որ որոշ տեղեկատուներ կարծում են, որ այս հատկանիշները նման են, իսկ մյուսները նշում են, որ դրանք մեր հիմնական տարբերություններն են: Որակական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս երկսայր բացահայտումը հիմնականում բխում է Հայաստանի բնակչության «զոհ» և Թուրքիայի բնակչության «թշնամի» ընկալումից: Նրանք, ովքեր չունեն շփման փորձ, կամ որոնց ինֆորմացիայի հիմնական աղբյուրը Թուրքիայի բնակչության մասին պատմության դասագրքերն են, ավելի շատ են հակված տարբերակել անհատական և ազգային հատկանիշները, քան մյուսները:

...Իրենք շատ արնասիրտ են, բայց մենք մի ուրիշ ձևի ենք մտածում... Իրենք միշտ վատը, ագրեսիվ, միշտ պատերազմական բանով են ապրում, բայց մենք՝ հայերս միշտ ձգտում ենք հանդարտ, ուզում են խաղաղ ճանապարհով ապրել:

Կին, 36 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
թուրքերի հետ շփում չի ունեցել

...Ես, ցանկացած ադրբեջանցու կամ թուրքի դեմքին նայելով, գիտեմ, որ իրենց դեմքի մեջ էլ ատելության կա, որ լավ նայես աչքերին, մեր աչքերի ու իրենց աչքերի մեջ շատ տարբերություն կա:

Տղամարդ, 56 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Շիրակ,
թուրքերի հետ շփում ունեցել է

Տարբերությունների երկրորդ հիմքը, ըստ ամենայնի, կրոնն է: Թեև երկու հասարակություններն էլ, ըստ ուսումնասիրության, սերտորեն կապված են իրենց կրոնների հետ, այդ կրոնները տարբեր են: Այս համատեքստում առանցքային են նրանց կրոնական պատմույթների միջոցով ձևավորված սովորությունների տարբերությունները: Որակական տվյալները ցույց են տալիս, որ կրոնական տարբերությունները հաճախ գերազանցության բավականին մեղմ երանգներ են պարունակում:

...Իրենք մուսուլման են, մենք քրիստոնյա ենք: Մեր ազգը արարիչ է, իրանք վարող-ցանող են:

Տղամարդ, 39 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Արարատ,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Նրանք մուսուլման են: Իրենց մոտ տասը տարեկանը համարվում է հասուն, տասներեքը համարվում է հասուն, ու վերջ, ամուսնացրինք... Բայց մենք էդպես չենք, թեկուզ մեր տասնվեց, թեկուզ տասնութ տարեկան աղջիկը ծնողի համար երեխա է համարվում, պատրաստ չեն ամուսնացնել:

Կին, 45 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում չի ունեցել

Տարբերության երրորդ, սակայն համեմատաբար քիչ հիշատակված հիմքը պետության և կառավարման ռեժիմի ուժն է: Որոշ առանցքային տեղեկատուներ նշում են, որ Թուրքիան ավելի ուժեղ պետություն է, քան Հայաստանը, և ունի իր զարգացման ռազմավարությունը, ավելի շատ հնարավորություններ ու իշխանություն համաշխարհային հարթակներում, քան Հայաստանը:

...Թուրքի հոգեբանությունն էն ա, որ անում ա էն ինչ ուզում ա, իմանալով որ պետությունը իրա մեջքի հետևը կանգնած ա:

Տղամարդ, 58 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան, թուրքերի հետ շփում ունեցել է

Ոմանք անդրադառնում են ավտորիտար ռեժիմին՝ նշելով, որ այն Թուրքիայում սովորական քաղաքացիների նկատմամբ ավելի ուժեղ և հեշտ վերահսկողության ձև է:

...Հասարակ մարդիկ կառավարվում են քաղաքականությունով: Իրենց մոտ ավտորիտար է: Մարդկանց էդքան ազատություն պետք չի տալ, ինչքան քիչ են կրթված, էդքան հեշտ են կառավարվում:

Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան, թուրքերի հետ շփում ունեցել է

Հիմնվելով Թուրքիայի բնակչության մասին նախնական պատկերացումների այս բացահայտումների վրա՝ հաջորդ գլուխն ուսումնասիրում է անձնական փոխազդեցությունները և ընկալումների ու վերաբերմունքի վրա դրանց հնարավոր ազդեցությունը՝ ընդգծելով նման հանդիպումների բազմակողմանի և փոխակերպող բնույթը:

1.2.3. Գոյություն ունեցող գործելակերպեր և փորձառություններ

Ըստ հետազոտության վիճակագրության՝ հարցվածների 19,5%-ը շփվել է Թուրքիայի բնակչության հետ (տե՛ս գծապատկեր 26), իսկ հարցվածների 7,6%-ն այցելել է Թուրքիա (տե՛ս գծապատկեր 24), մեծ մասը (n=91)՝ հանգստի և (կամ) զբոսաշրջության նպատակով (տե՛ս գծապատկեր 25):

Գծապատկեր 24. P7. Երբևէ այցելե՞լ եք Թուրքիա (n=1201):



Գծապատկեր 25. P7. Ո՞րն էր այցի նպատակը (n=91):



Գծապատկեր 26. P8. Երբևէ շփում ունեցե՞լ եք որևէ թուրքի հետ (n=1201):



Տվյալները ցույց են տալիս, որ Թուրքիա այցելածներն ավելի հակված են հավանություն տալ սահմանների բացմանը (58,5%-ն ամբողջությամբ կամ ավելի շուտ հավանություն է տալիս), քան նրանք, ովքեր չեն այցելել (34,3%-ն է ամբողջությամբ կամ ավելի շուտ հավանություն տալիս)[23]: Աղյուսակ 8-ը ցույց է տալիս սահմանների բացման հարցում դիրքորոշումների որոշ այլ տարբերություններ էլ՝ կախված Թուրքիա այցելելու փորձառությունից:

Աղյուսակ 8. Սահմանի բացման ազդեցության ընկալումները՝ ըստ Թուրքիա այցելության փորձառության

	Նրանք, ովքեր այցելել են Թուրքիա	Նրանք, ովքեր չեն այցելել Թուրքիա
Ազդեցությունը մեր երկրի անվտանգության վրա[24]	18,7% շատ կամ որոշ չափով դրական (n=64)	10,4% շատ կամ որոշ չափով դրական (n=653)
Ազդեցություն տարածաշրջանում մեր երկրի դերի վրա[25]	45,1% շատ կամ որոշ չափով դրական (n=62)	25,5 % շատ կամ որոշ չափով դրական (n=650)
Ազդեցություն երկրների հարաբերությունների կարգավորման վրա[26]	50,8% շատ կամ որոշ չափով դրական (n=61)	36,8% շատ կամ որոշ չափով դրական (n=637)

23. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=19732, p-արժեք=0.001844, n=756
24. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=17701, p-արժեք=0.02901, n=717
25. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=15921, p-արժեք=0.004397, n=712
26. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=15415, p-արժեք=0.005952, n=698

Տվյալները ցույց են տալիս, որ նշանակալի կորելացիա կա թուրքերի հետ փոխշփման փորձառության և թուրքերի նկատմամբ վերաբերմունքի միջև. այն մարդիկ, ովքեր երբևէ շփվել են թուրքերի հետ, ավելի հավանական է, որ դրական վերաբերմունք կհայտնեն նրանց նկատմամբ (տե՛ս գծապատկեր 27)[27]:

Գծապատկեր 27. Վերաբերմունքը թուրքերի նկատմամբ՝ ըստ շփման փորձառության (n=1145)

Ավելի մանրամասն ուսումնասիրելով շփման փորձի նրբությունները՝ կտեսնենք, որ որակական տվյալները արժեքավոր պատկերացումներ են տալիս Թուրքիայի բնակչության վերաբերյալ նախնական կարծրատիպերի և շփումից հետո դրանց փոխակերպման վերաբերյալ: Շփումից առաջ սկզբնական զգացմունքներին ու սպասումներին հաճախ հատուկ են վնասվելու վախը և վախը, որ հնարավոր է կոնֆլիկտ և առճակատում լինի: Հետաքրքիր է, որ նման սպասումների մասին առավելապես մատնանշում

27. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=118921, p-արժեք=0.00002592, n=1145

են երիտասարդները, որոնք հիմնականում թուրքերի հետ ծանոթանում են տարբեր կրթական ծրագրերի միջոցով:

> ...Սկզբում վախենում էինք... աղջիկներ էլ ունեինք Հայաստանից, տղաներ էլ: Վախենում էինք, ասում էինք դռները փակենք քնելուց:
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Որովհետև նրանք շատ դիվանագիտական մոտեցում ունեն, չեն փորձում կոնֆլիկտ հրահրել, երբ դու դրսում ես ու իմանում են, որ հայ ես: Երբ որ ես 18 տարեկանում պետք է գնայի Թուրքիա, մեր բարեկամները բոլորն ինձ զգուշացնում էին՝ զգույշ եղիր, անձնագիրդ կգողանան, էնտեղ քեզ կպահեն, բայց երբ հասա Թուրքիա, ես զգացի՝ ինչքան տարբեր է մեր մոտեցումը թուրքերի նկատմամբ: Ես շփվել եմ կրթված մարդկանց հետ, չեմ ունեցել զուտ խոսակցություն փողոցում հանդիպած ինչ-որ մեկի հետ, դրա համար իրանք ավելի լավ էին տիրապետում հաղորդակցման կանոններին:
>
> Կին, 23 տ., սահմանամերձ բնակավայր, Արագածոտն,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Նրանք շատ բաց ու ազատ են շփումներում. քեզ ընթրիքի կհրավիրեն, կամ միանգամից կկանչեն խմելու, քեզ հետ էնպես են խոսում, ասես անծանոթ չես, կամ ասում են «աղջիկս»:
>
> Կին, 28 տ., առանցքային տեղեկատու, արվեստի ոլորտ,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Միջին տարիքի և տարեց տեղեկատուները նույնպես նշում են թուրքերի հետ առաջին հանդիպման ժամանակ զգուշության և անվստահության զգացման մասին: Հատկանշական է, որ նրանց փորձառությունը առևտրի և զբոսաշրջության ոլորտներում տարբեր է:

> ...Ես զգացի, որ իրենք ուզում են գրկեն [երեխայիս], տղաս բաց աչքերով, շեկ երեխա է, մի տեսակ նայում էին ու զարմանում՝ թե ոնց, էսպես բան էլ է լինում: Չդիմացան, վերցրին, սիրեցին, խաղացրին: Ես էլ ընտանիքիս հետ եմ մտել, անծանոթ միջավայր էր, էդ զգուշավորությունը իմ մեջ կար, ես փորձեցի իմ շնորհքը ցույց տալ, ինքն էլ իր շնորհքը ցույց տվեց՝ գնահատեցի:
>
> Տղամարդ, 49 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Ինչպես ցույց են տալիս պատմությունները՝ որոշ տեղեկատուներ պատրաստ չէին նախաձեռնողական լինել Թուրքիայի բնակչության հետ շփման մեջ: Դեպքերի մեծ մասում շփման նախաձեռնողը թուրքերն են եղել:

Հատկանշական է, որ թեև քանակական տվյալները ցույց են տալիս, որ թուրքերի հետ շփման փորձառությունը նշանակություն ունի նրանց նկատմամբ դրական վերաբերմունքի հնարավոր ձևավորման հարցում (4,3% նշանակալի տարբերություն, տե՛ս գծապատկեր 27), որակական տվյալների դեպքում պատկերն ավելի աղոտ է: Թեև մասնակիցները զարմացած են իրենց սպասումների և իրականության միջև եղած տարբերություններով, նրանք միաժամանակ նշում են, որ չեն փոխել իրենց նախնական մտքերը, որ թուրքերը վտանգավոր են և անվստահելի: Այնուամենայնիվ, նման պատմությունների հիմքում ավելի շուտ զգացական գործոններն են, օրինակ՝ «վատ էներգիայի» զգացումը շփման ժամանակ:

> …Որ գնում էի, թվում էր՝ իրենք մեզ պետք է ավելի վատ վերաբերվեն՝ որպես հայ ազգ, բայց սպասումներս չարդարացվեցին, որովհետև անգամ վարորդը մեզ հետ շատ դրական էր խոսում… բայց մեկ է՝ թեկուզ Եվրոպայում լինի կամ ուրիշ տեղ լինի՝ թուրքը հային չի սիրելու, հետևաբար՝ պարտավոր ենք մենք էլ իրենց չսիրելու, էդ թշնամանքը մեր մեջ չպետք է վերանա:
>
> Տղամարդ, 29 տ., սահմանամերձ բնակավայր, Վայոց ձոր,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> …Կապ չունի՝ քանի անգամ եմ եղել էնտեղ և բիզնես արել, էսքան տարվա մեջ իրենք ինձ միշտ լավ են վերաբերվել… Բայց իմ համար թուրքը մնում է թուրք, էդ պատնեշը միշտ կա: Չգիտեմ, գեներիս մեջ է: Ես չեմ կարող ասել, որ ապահով է, բայց ես վտանգ չեմ զգացել: Ուղղակի չես կարող էդքան հեշտ մոռանալ պատմությունը:
>
> Կին, 68 տ., առանցքային տեղեկատու, գործարար ոլորտի ներկայացուցիչ

Այնուամենայնիվ, նկատվում են նաև թուրքերի վերաբերյալ ընկալումների բարելավումներ ուղիղ շփումներից հետո:

> Բայց որ սկսեցինք իրար հետ շփվել… դրանից հետո բոլոր մտավախություններն անցան: Նույնիսկ իմ ֆեյսբուքի ընկերներում կային…
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> Հասա տեղ, էդ մարդիկ [թուրքերը] ինձ նորմալ դիմավորեցին, մենք շփվեցինք ամբողջ ընթացքում, հետո միացվեց հայկական երգ, պարեցին էդ հայկական երգի տակ: Ու մի պահ մտածեցի՝ ինչի՞ էի էդպես [վատ] մտածում, ի՞նչ մեղք ունեն էս մարդիկ (էդ դեռ պատերազմ չէր եղել):
>
> Կին, 34 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Արմավիր,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

> …Իրենց վերաբերմունքը դեպի մեզ շատ լավ է եղել, վատ բան մենք չենք ստացել իրենցից: Ես էն մտքով էի գնացել Թուրքիա, որ մեզ կարող է մի հատ վատություն անեն իրենք, ու էդ չկար, հակառակը՝ փորձում էին, թեկուզ հյուրանոցներում, թեկուզ մտնում էինք ինչ որ ռեստորան հաց ուտելու, մեզ առաջինն էին բերում մատուցում, մեզ ջերմ վերաբերմունք էին ցույց տալիս: Իրենք գիտեին, որ մենք հայ ենք, բայց իրենց էդ ռեստորանի աշխատակազմը մեզ ժպտում էր, մեզ լավ վերաբերմունք էր ցույց տալիս:
>
> Տղամարդ, 22 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Հարկ է նշել, որ խորին հարցազրույցների մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացրել այնպիսի դեպք, երբ հարցվողը մինչ շփումն ունեցել է խիստ բացասական վերաբերմունք, որն էապես փոխվել է շփումից հետո: Եթե պատասխանները դասակարգվեն այս տեսանկյունից, ապա ակնհայտ կդառնա տեղեկատուների չորս խումբ. (1) տեղեկատուներ, որոնք շփման փորձառություն չունեն և ունեն բացասական վերաբերմունք, (2) տեղեկատուներ, որոնք շփման փորձ ունեն և ընդունում են թուրքերի դրական կողմերը, բայց պահպանում են բացասական վերաբերմունք նույնիսկ շփումից հետո, (3) տեղեկատուներ, որոնք շփման փորձ չունեն, բայց չեզոք կամ առնվազն ոչ խիստ բացասական վերաբերմունք ունեն, (4) տեղեկատուներ, որոնք որոշակիորեն հանդուրժող են եղել արդեն իսկ նախքան շփումը և նշում են շփումից հետո իրենց ընկալումներում դրական փոփոխության մասին:

Հենց այս վերջին խմբի շրջանակներում է ավելի վառ արտահայտված համագործակցությունն ու բաց լինելը: Սա, հաշվի առնելով այն սահմանափակումները, որոնք հնարավոր է բխեն հոգուտ հետահայաց ընտրության կանխակալությունից[28], կարող է հուշել, որ թերևս միայն շփման փորձառությունն ինքնին չի կարող լիովին բացատրել վերաբերմունքի փոփոխությունը:

28. Նախկին դիրքորոշմանը հետհայաց կերպով դրական հատկանիշներ վերագրելու միտումը՝ հիմնված ընթացիկ դիրքորոշման վրա (օրինակ՝ մարդիկ, ովքեր ներկայումս դրական վերաբերմունք ունեն, կարող են իրենց նախկին վերաբերմունքը բնութագրել որպես ավելի հանդուրժող, քան իրականում եղել է):

Գործոնները, ինչպիսիք են սկզբնական ընկալումների աղբյուրները (գրքեր, լրատվամիջոցներ, դպրոց, հարազատներ և այլն), նույնպես կարող են դեր խաղալ դրանց ձևավորման գործում:

> ...Միշտ պատմում էր [պապիկս], որ մեր նման մարդիկ են, էդ պատերազմներն ու քաղաքականությունը էդ ամեն ինչը քանդեցին, բայց կարծիքները լսել եմ, որ լավ են եղել: Միշտ հիշում եմ [նաև] տատիկիս ասածները ու մտածում եմ, որ գուցե ամեն ինչ այլ լիներ, եթե էսպիսի քաղաքական, տարածքային հարցեր չունենայինք, էդ դեպքում շատ լավ հարաբերության մեջ կլինեինք:
>
> Կին, 23 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Լոռի,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Բայց Հայաստանում ես շատ եմ զգում, անգամ դպրոցներում շատ է շոշափվում էդ ատելության թեման, մարդիկ զուտ ներարկում են քեզ էդ ինֆորմացիայով՝ քեզ չթողնելով այլ տարբերակ մտածելու, որ՝ հա, կարող է ես մի օր թուրքի հետ առնչություն ունենամ, ու էդ մարդը լրիվ ուրիշ լինի, քան մեր պատկերացումներն են:
>
> Կին, 23 տ., սահմանամերձ բնակավայր, Արագածոտն,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Սրան զուգահեռ, հայաստանյան հասարակության կարծիքները Թուրքիա այցելելու և Թուրքիայի բնակչության հետ շփվելու կարևորության վերաբերյալ բավականին ոչ միանշանակ են: Խորին հարցազրույցները հաճախ ցույց են տալիս, որ մարդկանց դժկամությունը՝ ընդհանուր եզրեր գտնելու, կարող է հիմնականում պայմանավորված լինել վախերով և մտահոգություններով:

Թուրքերի հետ հնարավոր շփման հետ կապված մտավախությունները հիմնականում վերաբերում են մշակույթին, սովորույթներին, մտածելակերպին կամ կրոնին: Այն պայմաններում, երբ կա ընկալում, որ թուրքերը սպառնալիք են հայերի համար, միջանձնային հարաբերությունները, ըստ ամենայնի, թվում են անապահով մի բան:

> ...Իհարկե կարևոր չէ [իրենց հետ շփվելը], թուրքը երբեք չի կարող մեզ ընդունել, ու իրար հետ բարիդրացիական կապեր ունենանք՝ իհարկե ոչ: Էս կարգավիճակը տեսնելով հանդերձ՝ ես չեմ պատկերացնում, երբ մեկ-մեկ ասում ենք՝ հարևանական կապ ստեղծենք, բարեկամական կապ ստեղծենք: Ես չեմ պատկերացնում, որ կարող ես թուրքի հետ բարեկամական կապ ստեղծել. նրանք միշտ վատը՝ կռիվ, արյունահեղություն, մարդասպանություն... ես չեմ պատկերացնում:
>
> Կին, 36 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

Բացի դրանից՝ հասարակության մեջ ընդհանուր կարծրատիպերի առկայությունը և մարդկանց վերաբերմունքի վրա դրանց ազդեցությունը նույնպես կարող են խոչընդոտել թուրքերի հետ անձնական կապերի հաստատմանը՝ երբ երիտասարդներին հետ է պահում որպես դավաճան պիտակավորվելու և մեղադրվելու վախը:

> ...Վերջում ասեցին [թուրքերը]՝ եկեք նկարվենք դրոշներով: Մի պահ մտածեցի՝ պատկերացնում ես իմ նկարը համացանցում թուրքի դրոշի հետ, ինչքան էլ ես տոլերանտ եմ, մեկ է՝ հասարակությունը չի կարող ընկալել դա: Ասեցին՝ եկեք նկարվենք, ոչ մի տեղ չենք հրապարակի, ասեցին՝ մեզ համար էդ խնդիր չէ: Ասեցի՝ ինձ համար դա խնդիր է, ու ի վերջո նկարվեցինք իրար հետ՝ ես մեր դրոշով, իրենք՝ իրենց:
>
> Կին, 23 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Լոռի,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...[Թուրքերը, որոնց ծրագրի ընթացքում հանդիպեցի] անգամ իմ ֆեյսբուքի ընկերներում կային, բայց մի երկուսին ջնջեցի, մի տեսակ շատ թուրք էին, ոչ շփում կար, ոչ էլ: Բայց իրենք էդպես վատը չէին, էլի:
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Շատ հազվադեպ են դեպքերը, երբ մարդիկ ասում են, որ այս շփումը կարող է վստահություն և փոխըմբռնում ստեղծել: Դրանով հանդերձ, որոշ տեղեկատուներ նշում են հասարակությունների միջև ավելի շատ հաղորդակցության անհրաժեշտությունը:

…Այո, շատ կարևոր է, որովհետև մենք պետք է տեսնենք իրար, պետք է շփվենք, որպեսզի կարողանանք համաձայնության գալ, որպեսզի կարողանանք իրար չդեմոնացնել: Ոնց որ հիմա ենք ասում թուրք, ու մարդկանց մոտ կոտոշներ են աճում, տեսա ինչքան նման ենք մենք, տեսա ինչքան մարդիկ լավն են ու սրտացավ են, ինչքան մենք կարող ենք իրար հետ խաղաղ ապրել: Ինձ թվում է՝ առանց անձնական շփման դա անհնար է: Եթե դու չես գնում, դու չես տեսնում էդտեղի մարդկանց, դու չես կարող ենթադրության գալ, որ մենք կարող ենք միասին խաղաղ ապրել: Շփումներից հասկանալու ենք, որ մենք բոլորս մարդ ենք, որ մենք ուզում ենք նույն բաները, ու կորչելու են էն ստերեոտիպները, որը մենք ունենք:

Կին, 44 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

…Իհարկե՝ կարևոր է [շփվել թուրքերի հետ]: Ցանկացած մարդու հետ շփում ունենալն է կարևոր, էստեղ կարծրատիպացված, դոգմայացած մտքեր կան մարդկանց մեջ, որ միայն կփոխվեն էն դեպքում, երբ իրենք շփում ունենան կոնկրետ մարդկանց հետ, ու միայն թուրքերին չի վերաբերում, վերաբերում է նաև բոլոր այլ ազգերին: Եթե մենք ունենք ինչ-որ պատկերացում ազգի մասին, դա գալիս է ինչ-որ մեկի անձնական փորձառությունից կամ միջազգայնացված կարծրատիպերից, որ զուտ փոխանցվել են մարդուց մարդ, ու շատ դոգմաներ կարող են ոչնչանալ մարդկանց շփումից ու քո անձնական փորձառությունից:

Կին, 23 տ., սահմանամերձ բնակավայր, Արագածոտն,
թուրքերի հետ շփում ունեցել է

Ընդհանուր առմամբ, նախնական վախերն ու բացասական սպասումները պահպանվում են շատերի մոտ, նույնիսկ շփումից հետո: Տվյալները ցույց են տալիս, որ թեև անմիջական շփումը կարող է դրականորեն ազդել վերաբերմունքի վրա, խորապես արմատացած կարծրատիպերը և նախնական ընկալումները մնում են նշանակալի: Այս բազմաբարդությունն ընդգծում է, որ ավելի համապարփակ ջանքեր են անհրաժեշտ՝ խթանելու երկու հասարակությունների միջև փոխըմբռնումն ու վստահությունը, ինչը կարող է վճռորոշ լինել հարաբերությունների կարգավորման գործընթացի համար:

1.2.4. Համագործակցության հնարավոր ոլորտներ

Կարգավորման գործընթացը մինչ այժմ, ինչպես հայտնի է, եղել է դանդաղ և անարդյունավետ: Հայաստանի պատմության ուշագրավ իրողություններից մեկը 2008-2009 թվականների «Ֆուտբոլային դիվանագիտության» փորձն էր, որի նպատակն էր համագործակցաբար լուծել Հայաստանի և Թուրքիայի միջև առկա տարաձայնությունները[29]: Այնուհետև, Հայաստանի նախագահը պատրաստակամություն հայտնեց հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնախումբ ստեղծել՝ ուսումնասիրելու 1915 թվականին հայերի էթնիկ զտումների հարցը[30]: Այնուամենայնիվ, դա արժանացավ հասարակության և որոշ քաղաքական գործիչների հակազդեցությանը, իսկ նախկին նախագահներից մեկը նշեց. *«Դա նախ կասկածի տակ է դնում մեր համազգային համոզումը, և երկրորդ՝ բազմաթիվ երկրների խորհրդարանների կողմից Ցեղասպանության ճանաչման կայացած փաստն այլևս ավելորդ ու ժամանակավրեպ է դարձնում նման հանձնախմբի ստեղծումը»*[31]: Կարգավորման փորձերը սառեցվեցին այս իրադարձություններից հետո՝ ընդհուպ մինչև 2021 թվականը, և վերսկսվեցին միայն դրանից հետո՝ 2022 և 2023 թվականներին:

Որակական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հայեր հնարավոր է հավանություն տան հարաբերությունների կարգավորմանը, այդուհանդերձ, սահմանի բացման կամ ոլորտային մակարդակով համագործակցության ցանկացած քննարկում հաճախ կասկածի տակ է առնվում, քանի դեռ «Հայկական հարցը» չի լուծվել:

…Կարծում եմ՝ քննարկումներն անիմաստ են… Հիմա խոսել ինչ-որ, չգիտեմ, տնտեսական հարաբերությունների մասին և այլն: Մենք ուրիշ խնդիրներ ունենք Թուրքիայի հետ մինչև հասնելը էդ էտապին, բայց մենք որոշել ենք կարծես պատմությունն էսպես մի հատ մի կողմ դնել… բայց կարծում եմ էդպես չի լինում, չի կարող լինել, որ մի օր առավոտյան արթնանանք ու հասկանանք, որ ճանապարհներն ամբողջ բացվել են, թուրքերի հետ արդեն հիանալի հարաբերություններ են, արդեն թուրքերը գալիս են էստեղ, մենք գնում ենք էնտեղ, դա արդեն մի քիչ անիրական է թվում էս պահի

29. Տես https://www.civilnet.am/news/177401/%D5%B1%D5%A1%D5%AD%D5%B8%D5%B2%D5%BE%D5%A1%D5%AE-%D6%86%D5%B8%D6%82%D5%BF%D5%A2%D5%B8%D5%AC%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A4%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8%E2%80%A4-%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D6%89:

30. 2008 թվականի հունիսի 24-ին Սարգսյանը նշել է. «Մենք դեմ չենք այդպիսի հանձնաժողովի ստեղծմանը, բայց այն ժամանակ, երբ կբացվի սահմանը մեր պետությունների միջև»: Էմիլ Դանիելյան. «Սարգսյանն աջակցում է Ցեղասպանության վերաբերյալ թուրքական առաջարկին», «Ազատություն» ռադիոկայան, Հայաստան, հունիսի 26, 2008 թ.՝ https://www.azatutyun.am/a/1596009.html:

31. Տես https://hetq.am/hy/article/40326:

դրությամբ... Բնականաբար՝ իրենք էլ, կարծում եմ, չեն ընդունի երբեք Ցեղասպանությունը, դրա համար իրենք մինչև չընդունեն դա... Չի կարող լինի, որ էդպես ուղղակի ասենք «եկեք ամեն ինչ մոռանանք, անցած լինի, զրոյական տեղից սկսենք»:

Տղամարդ, 37 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Պատմական տեսանկյունից՝ մենք միշտ իմացել ենք, թե որն է թուրքերի պահանջը՝ հայ-թուրքական հարաբերություններում մոռանալ Հայկական հարցը, Ցեղասպանությունը, ու էս ամեն ինչը: Այսինքն՝ մենք պետք է էդ ամեն ինչը թողնենք ու փորձենք հարևանի հետ լավ լինել: Ոչ մի դրական բան ես էստեղ չեմ տեսնում: Կարգավորում, մեկ է, չի լինելու, արյունը ջուր չի դառնա, ոչ էլ իրենք մեզ կհանդուրժեն:

Տղամարդ, 29 տ., սահմանամերձ բնակավայր, Վայոց ձոր,
թուրքերի հետ շփում ունեցել է

Ինչպես ցույց է տալիս հարցումը՝ բնակչության 51,3%-ը միանգամայն կամ որոշ չափով հավանական է համարում, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները մոտակա 5 տարիներին կկարգավորվեն երկխոսության և հաղորդակցության միջոցով (տես գծապատկեր 28), սակայն բավականին մեծ մասը վստահ է, որ Հայաստանի ու Թուրքիայի միջև խնդիրները միանգամայն լուրջ են (տես գծապատկեր 29):

Գծապատկեր 28. N1. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք երկխոսության և հաղորդակցման միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հավանականությունը առաջիկա 5 տարիներին (n=801):



Գծապատկեր 29. N2. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները որքանո՞վ են լուրջ (n=801):



Հատկանշական է, որ հատկապես Երևանի բնակիչները (60,9% միանգամայն կամ որոշ չափով հավանական է) ավելի հակված են հավատալու, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կարող են կարգավորվել երկխոսության և հաղորդակցության միջոցով առաջիկա 5 տարում, քան գյուղական բնակավայրերի բնակիչները (51,4% միանգամայն կամ որոշ չափով հավանական է)[32] (տես գծապատկեր 30): Եվ հետաքրքիր է, որ քաղաքային բնակավայրերի բնակիչներն ավելի հակված են կարծելու, որ Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրները միանգամայն լուրջ են (69,7%), քան գյուղական բնակավայրերի բնակիչները (59,5%)[33] (տես գծապատկեր 31):

Գծապատկեր 30. Առաջիկա 5 տարում երկխոսության և հաղորդակցության միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հավանականության վերաբերյալ ընկալումները՝ ըստ բնակավայրի տեսակի (n=737)



32. Թեստ՝ ըստ Դաննեթի, P շտկ.=0.008068748, n=737

33. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, p-արժեք=0.007731, n=774

Գծապատկեր 31. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջության մակարդակի վերաբերյալ ընկալումները՝ ըստ բնակավայրի տեսակի (n=774)



Կարգավորման ապագայի վերաբերյալ այս պատկերացումները, կարծես, փոխկապակցված են նաև հարցվողի սեռի և տարիքի հետ: Ըստ այդմ, կանայք ավելի հակված են կարծելու, որ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները միանգամայն լուրջ են (70,7%), քան տղամարդիկ (62,6%)[34] (տես գծապատկեր 32): Նույն միտումն է նկատվում ավելի երիտասարդ հարցվածների ընկալումներում՝ համեմատած տարեցների հետ[35] (տես աղյուսակ 9):

Գծապատկեր 32. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջության ընկալումները՝ ըստ հարցվողների սեռի (n=774)



34. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, p-արժեք=0.01314, n=774

35. Սփիրմենի տարակարգային կորելացիայի գործակից=-0.1489946, p-արժեք=0.0000, n=774

Աղյուսակ 9. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջության վերաբերյալ ընկալումները՝ ըստ տարիքի (n=774)

	Ընդհանրապես լուրջ չեն	Այնքան էլ լուրջ չեն	Որոշ չափով լուրջ են	Միանգամայն լուրջ են
18-24 (n=72)	1,4%	6,9%	16,7%	75%
25-34 (n=141)	5,7%	2,8%	19,1%	72,3%
35-44 (n=161)	4,3%	6,2%	22,4%	67%
45-54 (n=125)	5,6%	8,8%	16%	69,6%
55-64 (n=135)	8,9%	11,9%	19,2%	60%
65+ (n=140)	12,8%	11,4%	17,9%	57,9%

Կարելի է նաև նկատել, որ Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրների լրջության և խաղաղ կարգավորման ներուժի վերաբերյալ ընկալումները, հնարավոր է, փոխկապակցված լինեն Թուրքիայի և Թուրքիայի բնակչության մասին տեղեկատվության միջոցների հետ: Նրանք, ովքեր որպես տեղեկատվության հիմնական աղբյուր նշում են դպրոցում պատմության դասերը և դասագրքերը, ավելի հակված են միանգամայն կամ որոշ չափով հավանական համարել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումը[36] (տես գծապատկեր 33), ավելին, նրանք նաև ավելի հակված են հավանություն տալ սահմանի բացմանը[37] (տես գծապատկեր 34):

36. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=47413, p-արժեք=0.02252, n=655

37. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=55149, p-արժեք=0.01351, n=671

Գծապատկեր 33. Հինգ տարվա ընթացքում կարգավորման հավանականության վերաբերյալ ընկալումները՝ ըստ Թուրքիայի և թուրքերի մասին պատմության դասերից ու դասագրքերից տեղեկացված լինելու (n=655)



Գծապատկեր 34. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ Թուրքիայի և թուրքերի մասին պատմության դասերից ու դասագրքերից տեղեկացված լինելու (n=671)



Մյուս կողմից, նրանք, ովքեր որպես տեղեկատվության միջոց նշել են ընտանեկան քննարկումներն ու պատմությունները, ավելի հաճախ են Թուրքիայի և Հայաստանի միջև առկա խնդիրները ընկալում որպես միանգամայն լուրջ (տե՛ս գծապատկեր 35)[38]:

Գծապատկեր 35. Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրների լրջության վերաբերյալ ընկալումները՝ ըստ Թուրքիայի և թուրքերի մասին ընտանեկան քննարկումների և պատմությունների միջոցով ծանոթ լինելու (n=693)



38. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=55560, p-արժեք=0.04211, n=693

Նկատվել է ուշագրավ միտում. կարգավորման գործընթացը սերտորեն ասոցացվում է սահմանի բացման հետ: Քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանների բացման վերաբերյալ ընկալումները մի փոքր անհստակ են, քանի որ հանրության մեկ երրորդի համար (37,8%) ընդհանրապես ընդունելի չէ սահմանի բացումը, մինչդեռ 34,3%-ի համար ավելի շուտ կամ լիովին ընդունելի է (տե՛ս գծապատկեր 36):

Գծապատկեր 36. N5. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը (n=801):



Ի լրումն՝ տղամարդիկ, Երևանի բնակիչները, տարեցները և Թուրքիայի բնակչության հետ շփման փորձառություն ունեցողները, ըստ տվյալների, ավելի են հավանություն տալիս սահմանների բացմանը, քան, համապատասխանաբար, կանայք[39] (տե՛ս գծապատկեր 37), գյուղաբնակները[40], երիտասարդները[41] (տե՛ս գծապատկեր 38) և նրանք, ովքեր չունեն շփման փորձառություն (տե՛ս գծապատկեր 39)[42]:

Գծապատկեր 37. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ հարցվողների սեռի (n=756)



39. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=78206, p-արժեք=0.01154, n=756

40. Թեստ՝ ըստ Դաննեթի. Երևան-գյուղական տարածքներ, z=-3.0737005, P. շտկ.=0.006342648, n=756

41. Սփիրմենի տարակարգային կորելացիայի գործակից, S=62968439, p-արժեք=0.0005372, n=756

42. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=64888, p-արժեք=0.0001146, n=755

Գծապատկեր 38. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=756)



Գծապատկեր 39. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ շփման փորձառության (n=755)



Ավելին՝ հասարակության 38%-ը կարծում է, որ սահմանի բացումը լիովին դրական կամ ավելի շուտ դրական ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա, և սա գլխավորում է առաջարկվող տարբերակների ցանկը, եթե դասակարգենք նվազման հաջորդականությամբ՝ սկսած ավելի դրականից: Փաստացի, բավականին բարձր է Հայաստանի անվտանգության վրա սահմանների բացման բացասական ազդեցության ընկալման մակարդակը (65,6%) (տե՛ս գծապատկեր 40):

Գծապատկեր 40. N6. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի ընդհանուր սահմանների բացումը ի՞նչ ազդեցություն կունենա (n=801):



Սահմանների բացման ազդեցությունը տնտեսության[43] և ներքին քաղաքականության[44] վրա տարբեր կերպ է ընկալվում ըստ բնակավայրի տեսակի: Հարցվածներն ինչպես Երևանից, այնպես էլ այլ քաղաքային բնակավայրերից ավելի հակված են լավատես լինել Հայաստանի տնտեսության վրա սահմանի բացման ազդեցության առումով, քան գյուղական բնակավայրերի բնակիչները[45] (տե՛ս գծապատկեր 41):

Գծապատկեր 41. Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի բացման ընկալվող ազդեցությունը տնտեսության վրա՝ ըստ բնակավայրի տեսակի (n=757)



43. Կռուսկալ-Ուոլլիսի խի–քառակուսի=11.211, p-արժեք=0.003678, n=757

44. Կռուսկալ-Ուոլլիսի խի–քառակուսի=10.479, df=2, p-արժեք=0.005303, n =698

45. Թեստ՝ ըստ Դաննեթի. այլ քաղաքային - գյուղական տարածքներ, z =2.5809539, P շտկ.=0.019705545, n=757, թեստ՝ ըստ Դաննեթի, Երևան - գյուղական տարածքներ, z =-3.1359297, P շտկ.=0.005139308, n=757

Էական տարբերություն է նկատվում միայն Երևանի և գյուղական բնակավայրերի համեմատության մեջ[46], երբ գյուղական բնակավայրերի բնակչությունն ավելի հակված է բաց սահմանի ազդեցությունը հարաբերությունների կարգավորման վրա համարել միանշանակ կամ ավելի շուտ բացասական (50,2%), քան Երևանի բնակիչները (37,9%) (տես գծապատկեր 42):

Գծապատկեր 42. Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի բացմանը ընկալվող ազդեցությունը հարաբերությունների կարգավորման վրա՝ ըստ բնակավայրի տեսակի (n=698)



Սահմանի բացման հնարավոր ազդեցությունների նկատմամբ վախը հստակորեն նկատվում է նաև խորին հարցազրույցների խոսույթներում: Այստեղ դեռևս առանցքային դեր է խաղում Թուրքիայի բնակչությանը որպես թշնամի ընկալող հավաքական հիշողությունը:

> …Ընդհանուր առմամբ կարող եմ ասել՝ ես դեմ եմ [սահմանները բացելուն]: Ընդհանրապես մտքովս չի անցնում, չեմ էլ կարծում, որ կարող ենք բարելավել հարաբերությունները ու ապրել իրար հետ: Ես իրենց չեմ ընդունում, իրենք դարերով մեր թշնամին են եղել, ինչ կարող ենք համակերպվել, չէ՞ որ այդ ամենը եղել է մեր հարազատների հետ: Պատմությունից եկած է, ամեն վայրկյան մենք հիշելու ենք մեր նախնիներին, հայ ազգին, որ կոտորել են, ջարդել են, սպանել են:
>
> Տղամարդ, 53 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան, թուրքերի հետ շփում չի ունեցել

46. Թեստ՝ ըստ Դաննեթի, Երևան – գյուղական տարածքներ, z =-3.226018, P շտկ.=0.003765764, n=698

Մերժման և վախի ավելի ուժեղ զգացում ունեն նաև Ադրբեջանին սահմանակից համայնքների բնակիչները, որոնք, հավանաբար, խոսում են ԼՂ հակամարտության, շարունակվող սահմանային լարվածության և Տավուշի մարզում սահմանազատման գործընթացի համատեքստում, ինչը, ոչ առանց հիմքերի, զգայունություն է հաղորդում կարգավորման հարցին:

> …Վատ եմ վերաբերում էն մարդկանց, ովքեր այցելում են Թուրքիա, շփվում են նրանց հետ, շատ վատ: Ես նման մարդկանց չեմ ընդունում: Իրենց հայրենիքը տեսնելով էս կարգավիճակով ու դեռ առնչություն ունենան, գնան նրանց մոտ, նրանց հետ բարեկամություն ստեղծեն, առևտուր անեն՝ ես շատ վատ եմ ընդունում: Ինձ թվում է՝ նրանք միշտ պայքարում են էս հողերի համար, նրանք չեն հանգստանա: Ասում էին Ղարաբաղը տան, ամեն ինչ կկարգավորվի, Ղարաբաղը տվեցին, հիմա էլ էս պահին Ոսկեպարը իրենցն է, հաջորդը մենք ենք, հաջորդը Լոռին է, ու էդպես, նրանք ոչնչի առաջ կանգ չեն առնի: Ես չեմ տեսնում հարևանական հարաբերությունների հնարավորություն մեր մեջ: էս վերջին Տավուշի դեպքերից հետո՝ ոչ:
>
> Կին, 36 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ, թուրքերի հետ շփում չի ունեցել

Խորին հարցազրույցները մատնանշում են նաև այն հիմնական մտավախությունները, որոնք մարդիկ ունենում են Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացման և հարաբերությունների կարգավորման մասին մտածելիս: Մասնավորապես, այդ վախերը կամ անապահովության զգացումը կարող են ընդհանուր առմամբ դասակարգվել չորս ուղղությունների: Անապահովության այս բոլոր դասակարգերը կարող են, թերևս, ակնարկել այն փաստի մասին, որ հավաքական անցյալի տրավմաները (կապված և՛ Ցեղասպանության, և՛ 2020 թվականի ԼՂ պատերազմի կորուստների հետ) դեռ բավականին ակտիվ են և ամբողջությամբ չեն ապաքինվել:

Նախ՝ ազդեցությունը թաղամասի և համայնքի վրա: Խորին հարցազրույցները ցույց են տալիս, որ իրենց թաղամասում ու համայնքում թուրքերի

բնակվելու հնարավոր հեռանկարը անապահովության զգացում է առաջացնում: Թուրքիայից եկած մարդկանց հետ առօրյայում առնչվելու, նույն թաղամասում ապրելու միտքը տագնապի զգացում է հարուցում հարցվողների մեջ:

> ...Բայց, օրինակ, որ գան, ու հարևաններիս մեջ թուրք լինի, էդ առումով ամեն դեպքում վախ կզգամ: 2020 թվից հետո, որ քայլում էի փողոցով, Կովկասյան արտաքինով մի տղամարդ, իմ կարծիքով ադրբեջաներեն խոսելով, գնում էր, ու ահավոր վախեցել էի: Էն որ՝ ես չեմ իմանա ինքը [թուրքը] ինչ կուզի անել էդ պահին: Առաջինը էդ վախի մասին եմ մտածում:
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Երկրորդ՝ Հայաստանի ընդհանուր անվտանգության մասին մտահոգությունը: Մարդկանց մեջ հստակ մտահոգություն է նկատվում, որ Հայաստանի ընդհանուր անվտանգությունը կխաթարվի: Թուրքերի՝ Հայաստան գալու միտքը ասոցացվում է անորոշության և անապահովության հետ: Այս հարցն ավելի զգայուն է դառնում, երբ խոսքը Թուրքիայի տարածքով ադրբեջանցիների՝ Հայաստան մուտքի հնարավորության մասին է:

> ...Եթե սահմանը բացվի, իրենք [թուրքերը] կգան, կամաց-կամաց կշատանան... Հայաստանը, հատկապես Երևանը համարվում է աշխարհի ամենաապահով քաղաքներից, դա էդպես չի լինի հետո, ինձ թվում է: Բացի էն, որ հայ ու թուրք իրար բզբզել կլինի անընդհատ, պլյուս իրենք ավելի շատ բզբզող կլինեն, ես չեմ կարծում, որ ապահով կլինի:
>
> Կին, 45 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

> ... Թուրքիայում շատ ադրբեջանցիներ կան թուրքերի անձնագրերով ու ամեն պահի ամեն բան կարող են անել: Մտահոգվում եմ, որ ադրբեջանցիները թուրքերի անձնագրերով կարող են Հայաստան գալ: Հիշում եմ, թե ոնց ադրբեջանցիները գլխատեցին անմեղ մարդկանց՝ ինչ-որ ծրագրերի շրջանակներում, կացինով, հասկանում ենք, որ մենք ապահովագրված չենք նման դեպքերից: Մենք կարող ենք լինել հաջորդ զոհը, եթե էս տարածքում իրենք լինեն: Կարգավորումները անվտանգություն չեն բերի:
>
> Կին, 23 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Լոռի,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Առաջին հերթին անվտանգությունը կխաթարվի, հետո դրանից բխած բոլոր բաները, ընդհուպ մինչև թրաֆիքինգ, մարդկանց առք ու վաճառք... Եթե սահմանները բացեն, նշանակում է Հայաստանը կորել է:
>
> Տղամարդ, 58 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Երրորդն անվստահությունն է Թուրքիայի կառավարության մտադրությունների նկատմամբ: Այս ընկալումը մտահոգություններ է հարուցում, որ «պատմության կրկնվելու» վտանգ կա, ինչը դիտվում է որպես կարգավորման գործընթացի հետևում թաքնված օրակարգ՝ Թուրքիայի տեսանկյունից:

> ...Ես ուզում եմ հարաբերությունները կարգավորվեն, բայց ես չեմ կարող վստահել իրանց... Դուք լսել եք իրենց ներկայիս ղեկավարների խոսքերը: Վրաստանից են հող ուզում, Հայաստանից են ուզում, Սիրիայից են ուզում, Իրաքից, Ռուսաստանից... էլ ո՞նց վստահես:
>
> Կին, 68 տ., առանցքային տեղեկատու, գործարար ոլորտի ներկայացուցիչ

> ...Մտավախություն, իհարկե, կա, որ եթե հարաբերությունները կարգավորվեն, էլի էդ նույնը կկրկնվի: Ներկա պահին էլ, որ նայում ես, իրենց խոսքը չի համընկնում ոչ մի բանի հետ:
>
> Տղամարդ, 53 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
> թուրքերի հետ շփում ունեցել է

> ...Կարող է իրենք փորձեն հայ բնակչությանը Հայաստանի մեջ չվնասել, բայց դա հետագայում կնպաստի, որ Հայաստանում տներ առնեն ու հաստատվեն, այսինքն՝ ներսից իրենք ավելի շատանան Հայաստանում, քան տարածքի հայերը, ու սա մի օր պանթուրքիզմի ներսից պայթող հրաբխի վերածվի: Այսինքն՝ մենք ստեղծելու ենք մի հատ հրաբուխ, որը մեր երկրի ներսում կպայթի ու կկործանի մեր երկիրը:
>
> Տղամարդ, 29 տ., սահմանամերձ բնակավայր, Վայոց ձոր,
> թուրքերի հետ շփում ունեցել է

Չնայած այս մտավախություններին՝ ուսումնասիրությունն, այնուամենայնիվ ի հայտ է բերում նաև երկխոսության ներուժ՝ այն առումով, որ որոշ դեպքերում հաստատվում է փաստը, որ հասարակությունները հարևան ժողովուրդներ են, որոնց հարաբերությունը հնարավոր է ճիշտ ինչպես դրկից հարևանների դեպքում՝ «դուռը թակելով»: Ըստ երևույթին, առկա է գիտակցում, որ Թուրքիայի հետ բաց սահմանային առևտրի հնարավորությունն անպայ-

մանորեն չի ենթադրում անցյալի մոռացում և կարող է հարաբերությունների կառուցման ելակետ լինել:

...Թուրքիայում շատ սիրուն ծովափնյա վայրեր կան, էնտեղ շատ ավելի սիրուն է, քան թե, որ, օրինակ, գնում ենք Վրաստան: Իրենք մեր երկիր այցելեն, ծանոթանան, ոչ թե, օրինակ, գաղտագողի գան Հայաստան: Ոնց է՝ մենք կարող ենք նոմալ գնալ Թուրքիա տուրիստի կարգավիճակով, իրենք չեն կարող գալ, ես էդ չեմ հասկանում: Էն որ ասում է՝ մինչև մարդու հետ չշփվես, ինչքան ուզում է իր մասին պատմեն, մինչև դու չշփվես, չես իմանա: Ինչ էլ ուզում է ասեն ինձ, մինչև իմ աչքով չտեսնեմ, էդ իմ համար միֆ է, թեկուզ ամենահարազատ մարդն ասած լինի, որովհետև մարդկանց ընկալումները տարբեր են: Կոմունիկացիան էսօր ամենակարևոր խնդիրն է, որ մենք ունենք, ու մենք կանգնած ենք, որովհետև մարդը մարդու հետ էսօր չի շփվում էլ դեմ առ դեմ:

Տղամարդ, 22 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Տնտեսական ոլորտը ամենահեշտը կլինի [կառուցել] կարծում եմ, որովհետև էն հումքն ու արտադրանքը, որը ունի Թուրքիան... ինչքան էլ որ մենք իրենց չսիրենք, բոլորս էլ կփաստենք, որ իրենք որակյալ արտադրանք ունեն: Ու դա Հայաստանի համար շատ մեծ դեր կունենար, որովհետև ներկրելը ավելի էժան կլիներ, հումքը ներկրելն ու հայկականը ստեղծելը էժան կլիներ:

Կին, 23 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

...[Տնտեսական համագործակցությունը հնարավոր է], եթե էդ ամեն ինչը խստացված ռեժիմով լինի, իրենց շատ արտոնություն չտրվի, հիմա էլ են խոսում, որ իրենք էստեղ տարածքներ ունեն, այգիներ ունեն նույնիսկ Արարատի մարզում, տներ ունեն երևի: Եթե էդ ամեն ինչը վերահսկվի, ու հարաբերությունները զուտ տնտեսական առումով լինեն, այսինքն՝ առևտուր, ոչ թե այլ գործարքներ կնքվեն իրենց հետ, երևի նորմալ կլինի էլի: Հիմա էլ կա էդ առևտուրը, ճիշտ է ուղիղ սահման չունենք Թուրքիայի հետ կապող, օդայինն է մենակ, բայց էդ առևտուրը մինչև հիմա էլ կա:

Տղամարդ, 28 տ., սահմանամերձ բնակավայր, Շիրակ,
թուրքերի հետ շփում չի ունեցել

Հետաքրքիր է, որ որակական ուսումնասիրության տեղեկատուներից միայն մեկն է որպես կարգավորման դրական արդյունք դիտարկում անվտանգությունն ու պատերազմի կանխումը, այլ ոչ թե տնտեսական աճը:

...Ես կարծում եմ, որ անվտանգությունը ավելի բարձր կլինի, ավելի ապահով կլինի, երբ որ լինենք լավ հարաբերությունների մեջ Թուրքիայի հետ, քան վատ: Մենք կունենանք դիպլոմատիկ հարաբերություններ, կկարողանանք իրենց հետ ուղիղ խոսել ու բանակցել... Ես անընդհատ լսում եմ, որ թուրքերը կգան Հայաստան, բայց իրենց համար էստեղ ապրելը դժվար կլինի, ես նման վախ չունեմ: Ես պատերազմից եմ վախենում, բայց սահմանների բացումը պիտի որ դա կանխի, ես էդպես եմ կարծում:

Կին, 44 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

Վերադառնալով համապետական ներկայացուցչական հետազոտությանը՝ ըստ տվյալների՝ հանրության 51,7%-ը նշել է, որ չէր գնի Թուրքիայում արտադրված ապրանք (տես գծապատկեր 43):

Գծապատկեր 43. P9. Կգնեի՞ք, արդյոք, ապրանք, որն արտադրված է Թուրքիայում (n=1201)։



Թուրքական ապրանքներ գնելու պատրաստակամության աստիճանը տարբերվում է՝ թե՛ ըստ բնակավայրի տեսակի[47], թե՛ ըստ տարիքի, թեպետ ավելի թույլ[48], քանի որ քաղաքային բնակավայրերի բնակիչները (51,5%) և տարեցները ավելի հակված են գնելու թուրքական ապրանքներ՝ ի տարբերություն գյուղական բնակավայրերի բնակիչների (39,1%) (տես գծապատկեր 44) և երիտասարդների՝ համապատասխանաբար:

Գծապատկեր 44. Թուրքիայում արտադրված ապրանքներ գնելու հակվածությունը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=1173)

Սա ուշագրավ դիտարկում է հատկապես այն փաստի պայմաններում, որ Հայաստան ներկրվող ապրանքների զգալի մասն արտադրվում է Թուրքիայում, իսկ ներմուծման տեմպերը չեն նվազել (բացառությամբ 2020-2021 թթ., երբ Հայաստանը սահմանեց Թուրքիայից ապրանքների ներմուծման սահմանափակում): 2022 թվականին սահմանափակումների վերացումից հետո ներմուծման ցուցանիշները վերադարձան գրեթե նույն մակարդակին, ինչ

47. Խի–քառակուսի թեստ, X2=15.893, p-արժեք=0.0003538, n=1173

48. Սփիրմենի տարակարգային կորելացիայի գործակից =0.0651, p-արժեք=0.02574, n=1173

նախքան սահմանափակումներն էին[49]: Սա ցույց է տալիս, որ հասարակական կարծիքը, հնարավոր է, ուղղակիորեն չարտացոլի այն, ինչ գոյություն ունի տնտեսության մեջ, քանի որ սովորական քաղաքացիների մեծ մասը սովորաբար չի մասնակցում երկրների միջև առևտրին, այլ ապրանքների վերջնական սպառողն է: Ուստի երբեմն նրանք գուցե այլընտրանք չունենան կամ իրազեկ չլինեն, թե որտեղ են արտադրվել ապրանքները: Ավելին՝ մարդկանց մեծամասնությունը, հավանաբար, ապրանքներ գնելու որոշում կայացնելիս նախ և առաջ հաշվի կառնի այլ գործոններ (այսինքն՝ գինը, որակը, ապրանքանիշը և այլն), այլ ոչ թե դրանց արտադրման երկիրը:

> …Եթե իմ ընտրելով լիներ, եթե ես կարողանայի էդ նույն որակի ապրանքը ուրիշ տեղ գտնել, ես Թուրքիա չէի գնա, էնտեղից ապրանք չէի բերի: Հունաստանից եմ փորձել, չստացվեց, Ռուսաստանից, բայց մեկ է՝ ապրանքները կամ չինական են, կամ թուրքական: Չինաստան դե չես կարող գնալ, շատ թանկ է, չես կարող գնաս քո ուզած ապրանքը ընտրես, գաս: Էնտեղից պիտի մեծ քանակով ներկրես, բայց էդ իմ պրոֆիլը չի: Իսկ Թուրքիայից ինչքան ուզես, կարող ես բերել:
>
> Կին, 68 տ., առանցքային տեղեկատու, գործարար ոլորտի ներկայացուցիչ

> …Հիմա էլ մեր տանը լիքը իրեր կան, որ թուրքական են: Ինչքան էլ պատերազմից հետո փորձում ենք չգնել, բայց լիքը բաներ կան, որ Հայաստանի շուկայում փոխարինող չունեն: Թեկուզ հագուստը՝ էժան է, ու մարդը թեկուզ հայրենասիրական նկրտումներ ունի, բայց որն իրեն մատչելի է, ստիպված դա կգնի:
>
> Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան, թուրքերի հետ շփում ունեցել է

Այս լույսի ներքո, գուցե զարմանալի չթվա, որ երկու երկրների միջև հնարավոր հարաբերությունների կոնկրետ ոլորտների վերաբերյալ հարցի պատասխաններից առաջատարը «տնտեսություն և էներգետիկա» ոլորտն է (74,1%): Դրան հաջորդում են «մշակույթ և տուրիզմ» (72,8%) և «տրանսպորտ և շրջակա միջավայր» (71,1%) ոլորտները: Կարևոր է նշել, որ ռազմական ոլորտը գտնվում է սանդղակի ներքևում՝ անհամաձայնության ամենաբարձր տոկոսով (80%) (տես գծապատկեր 45):

49. Փախլյան Ա., Աղաջանյան Ս., Վարդանյան Տ., Միքայելյան Տ., Հարությունյան Ա., Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները, «Ամբերդ» մատենաշար 57, Երևան, 2022, էջ 54:

Գծապատկեր 45. N8. Ի՞նչ եք կարծում՝ մեր երկրները հետևյալ ոլորտներում կարո՞ղ են ունենալ հարաբերություններ, թե՞ ոչ[50] (n=595)։



50. Նրանք, ովքեր նշել են, որ Հայաստանն ընդհանրապես չպետք է հարաբերությունների մեջ մտնի Թուրքիայի հետ կամ դժվարացել է պատասխանել (տես գծապատկեր 49), բաց են թողել այս հարցը:

Հատկանշական է, որ նրանք, ովքեր այցելել են Թուրքիա, ավելի շատ են հակված, որ երկրները հարաբերություններ ունենան մշակույթի և զբոսաշրջության ոլորտներում (այցելածների 90,7%-ը՝ չայցելածների 74,7%-ի դիմաց)[51] (տես գծապատկեր 46)։

Գծապատկեր 46. Հարաբերությունների հնարավորությունը մշակույթի և զբոսաշրջության ոլորտներում՝ ըստ Թուրքիա այցելելու փաստի (n=568)



Հասարակությունը Հայաստանի կառավարության դերը կարգավորման հարցում համարում է միանգամայն (60,4%) կամ ավելի շուտ (17,4%) կարևոր: Արդյունքները ցույց են տալիս, որ այլ երկրների կառավարությունների

51. Ֆիշերի ճշգրիտ թեստ, p-արժեք=0.0068, n=568

դերը, ընդհանուր առմամբ («5» և «4» արժեքները միասին վերցրած), ավելի է կարևորվում (69,3%), քան Թուրքիայի կառավարության դերը (միանգամայն կամ ավելի շատ կարևոր՝ 61,9%) (տես գծապատկեր 47):

Գծապատկեր 47. N9. Ձեր կարծիքով՝ հարաբերությունների կարգավորման հարցում որքանո՞վ է կարևոր թվարկվածներից յուրաքանչյուրի դերը (n=801)։



Ինչպես երևում է գծապատկերից՝ կարգավորման հասնելու հարցում Թուրքիայի կառավարության դերը ստացել է ամենաշատ «ընդհանրապես կարևոր չէ» պատասխանները (18%): Հետաքրքիր է, որ նրանք, ովքեր հակված

են հավանություն չտալ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը, հակված են նաև ավելի հաճախ նշել (45,4% ընդհանրապես կարևոր չէ և ավելի շուտ կարևոր չէ), որ սահմանի բացման գործընթացներում Թուրքիայի կառավարությունը ընդհանրապես կարևոր դեր չունի[52] (տես գծապատկեր 48):

Գծապատկեր 48. Թուրքիայի կառավարության դերի կարևորությունը՝ ըստ սահմանի բացման նկատմամբ վերաբերմունքի (n=669)



52. Սփիրմենի տարակարգային կորելացիայի գործակից=0.3074628, p-արժեք=0.000, n=669

Հարկ է նշել, որ գումարային առումով (արժեքներ «5» և «4») այլ երկրների կառավարությունների դերը (69,3%) ավելի կարևոր է ընկալվում, քան Թուրքիայի կառավարության դերը (61,9%): Այնուամենայնիվ, ըստ խորին հարցազրույցների՝ հաճախ համարվում է, որ կարգավորումն էլ ավելի մեծ հեռանկարներ կունենա, եթե հայերն ու թուրքերը փորձեն բանակցել առանց որևէ երրորդ կողմի:

> ...Եթե շատ հարցերում հայ ժողովուրդն անձամբ նստեր Թուրքիայի հետ բանակցման, ինքն իրավիճակից ավելի շահող դուրս կգար, քան իրեն բերեր երրորդ ինչ-որ մեկը, որ իր հարցերը լուծեր:
>
> Կին, 34 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Արմավիր,
> թուրքերի հետ շփում չի ունեցել

Ավելին՝ առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ Թուրքիայի կառավարության դերը էական գործոն է կարգավորման վերջնարդյունքի հարցում: Քաղաքականության հնարավոր փոփոխությունն իրագործելի չի համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրանք, ովքեր ներգրավված են որոշումների կայացման գործընթացներում երկու կողմերից, հատկապես՝ Թուրքիայից, համաձայնության չեն գա կարգավորման գործողությունների կոնկրետ ծրագրի շուրջ:

> ...ՔՀԿ-ների բոլոր նախաձեռնությունները կամ փոխանակման ծրագրերը կարևոր են, բայց իրենք շատ սեգմենտվորված են ու չեն կարող որևէ արդյունքի բերել, եթե չկա համապատասխան քաղաքականություն, որը էդ ամեն ինչը ուղեկցում է... Էս խնդիրները պետք է լուծվեն էն մարդկանց հետ, ովքեր որոշումների կայացման մեջ նշանակալի դեր ունեն: Օրինակ, եթե ձախականներին հետաքրքրում է էս հարցը Թուրքիայում, իրենք մարգինալացված են, ու իրենց կարծիքը որոշիչ ազդեցություն չի ունենա, իրենք չեն կարողանա փոխել քաղաքականությունը: Եթե հնարավոր լինի գրավել ճիշտ կողմի ուշադրությունը ու իրենց ներգրավել զրույցի մեջ, ապա դա կարող է ավելի արդյունավետ լինել:
>
> Տղամարդ, 40 տ., առանցքային տեղեկատու,
> մեդիա և ՔՀԿ ոլորտի ներկայացուցիչ

Հետևաբար, այն դեպքում, երբ պետությունները հանգում են փոխհամաձայնեցված որոշման, այս համատեքստում առաջ է գալիս համագործակցային և կառուցողական խոսույթների ստեղծման գործընթացը: Մասնավորապես, որպես սկզբնական քայլ ուրվագծվում են ինքնաճանաչման և միմյանց ճանաչելու խոսույթները, ինչպես, ասենք, «ինչպիսին ենք մենք, և ինչպիսին են նրանք իրականում», որին պետք է հաջորդեն կարգավորման խոսույթները:

> ...Մեդիան կարող է կարգավորման նարատիվներ ստեղծել, որոնք ապագայում քաղաքականության ներկայացուցիչները կարող են օգտագործել: Բայց եթե մյուս կողմից որևէ պայմանավորվածություն ու ցանկություն չկա, դա անիմաստ է: Հիմա հայ հասարակության համար կարևոր է ճանաչման նարատիվներ ստեղծելը [չի մասնավորեցում, բայց կոնտեքստից ենթադրվում է, որ խոսքը սոցիալական բնութագրիչների մասին է], ոչ թե նորմալիզացիայի: Մյուս կողմից՝ Թուրքիան պիտի հայերի մասին իր նարատիվը փոխի՝ որ իրենք վնասելու են իրենց, հետ են գալու իրենց հողերի հետևից, որովհետև համոզված եմ, որ կա նման բան:
>
> Տղամարդ, 40 տ., առանցքային տեղեկատու,
> մեդիա և ՔՀԿ ոլորտի ներկայացուցիչ

Մյուս կողմից՝ լայն հանրությունը հակված է կարծելու, որ Հայաստանը պետք է հարաբերություններ հաստատի Թուրքիայի հետ՝ չմոռանալով անցյալը (43,3%) կամ միայն որոշակի նախապայմաններով (20,5%): Թեպետ առանց որևէ նախապայմանի հարաբերություններ սկսելը ամենաքիչն է հիշատակվում (10,5%), բայց եթե ի մի բերենք այս երեք տարբերակները, ապա դրանք ընդհանուր առմամբ ցույց են տալիս հանրության հավանությունը և բաց լինելը, թեև՝ պայմանական և բավականին փխրուն՝ Թուրքիայի հետ հարաբերություններ սկսելու առումով, քանի որ գումարային տոկոսը (74,3%) զգալիորեն գերազանցում է ընդհանրապես հարաբերությունների մեջ չմտնելու տարբերակին (19,7%) (տես գծապատկեր 49):

Գծապատկեր 49. N7. Ձեր կարծիքով՝ Հայաստանն ինչպե՞ս պետք է դիրքավորվի Թուրքիայի հետ հարաբերություններում (n=801):



Ավելին՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ կարգավորման նկատմամբ վերաբերմունքը, հնարավոր է, կորելացված լինի տարիքի հետ[53]: Հետևաբար, մենք նկատում ենք, որ թեև հարցվողների մեծ մասը հավանություն է տալիս որոշակի նախապայմաններով հարաբերությունների մեջ մտնելուն, ավելի երիտասարդ հարցվողները ավելի հակված են կարծելու, որ Հայաստանը չպետք է հարաբերություններ հաստատի Թուրքիայի հետ, քան տարեց հարցվողները[54] (տե՛ս աղյուսակ 10):

53. Այս հաշվարկի համար «հարաբերությունների մեջ մտնել՝ չմոռանալով անցյալը» և «հարաբերությունների մեջ մտնել որոշակի նախապայմաններով» տարբերակները միացվել են, քանի որ երկուսն էլ ընդհանուր առմամբ արտացոլում են հարաբերությունների պայմանական հաստատման միտքը: Հետևաբար, այս տվյալների փոփոխությունից հետո մենք ստանում ենք 1-ից 3-ի կարգային սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է հարաբերություններ՝ առանց նախապայմանների, 2-ը նշանակում է հարաբերություններ նախապայմաններով և 3-ը նշանակում է ոչ մի հարաբերություններ:

54. Սփիրմենի տարակարգային կորելացիայի գործակից, S=79262896, p-արժեք=0.001749, n=753

Աղյուսակ 10. Թուրքիայի հետ հարաբերությունների նկատմամբ ընկալվող վերաբերմունքը՝ ըստ տարիքի (n=753)

	Հարաբերություններ առանց որևէ նախապայմանի	Հարաբերություններ որոշակի նախապայմաններով	Ոչ մի հարաբերություն
18-24 (n=70)	1,4%	75,1%	22,9%
25-34 (n=132)	7,6%	68,9%	23,5%
35-44 (n=159)	8,8%	67,9%	23,3%
45-54 (n=127)	14,2%	66,9%	18,9%
55-64 (n=129)	14,7%	66,7%	18,6%
65+ (n=136)	16,2%	64,7%	19,1%

Արժե ավելի մոտիկից քննել, թե կոնկրետ ինչ նախապայմաններ նկատի ունի հանրության 20,5%-ը: Հարցվողների պատասխանները բազմազան էին, այդ թվում՝ տնտեսական աճի հեռանկարների նախադրյալները, ռազմագերիների վերադարձը (թեև սա Ադրբեջանի հետ կապված խնդիր է) և Հայաստանի համար բարենպաստ պայմանների ստեղծումը (առանց հստակեցման), սակայն 164 պատասխանի մեջ ամենից շատ առանձնանում էր երկու պայման. (1) խաղաղության ու անվտանգության երաշխավորում և ապահովում՝ երբեմն միահյուսված ինքնիշխանության հարգման պահանջի հետ (32,9%, այսինքն՝ 54 պատասխան), և (2) Հայոց ցեղասպանության ճանաչում՝ երբեմն միահյուսված տարածքների վերադարձի պահանջի հետ (28%, այսինքն՝ 46 պատասխան): Բացի դրանից՝ 6 պատասխանում (3,7%) վերոնշյալ երկու նախապայմանները նշվել են միասին:

Հետաքրքիր է, որ խորին հարցազրույցների դեպքում, երկու հասարակությունների միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ձեռնարկվելիք անհրաժեշտ քայլերին անդրադառնալիս, հիմնականում չի հիշատակվում Ցեղասպանության ճանաչումը: Պատասխաններում գլխավորապես նշվում են անվտանգության և ապահովության երաշխավորումը և հնարավոր կոնֆլիկտի կանխումը: Ըստ այդմ, նկատում ենք, որ հարցազրույցների ժամանակ միայն փոքրաթիվ տեղեկատուներ են խոսում Ցեղասպանության ճանաչման մասին՝ որպես նախապայման, մինչդեռ թուրքերի նկատմամբ իրենց վերաբերմունքը նկարագրելիս մշտապես հիշատակում են Ցեղասպանությունը:

...Եթե կառավարության մակարդակով ընդունվի, ու ասեն՝ հա, մենք էդպիսի վատ բան ենք արել, դրանից հետո կարող ես էդ մարդու հետ խոսել ու ասել՝ հա, ձեր ղեկավարությունն ընդունել է, բայց մինչև էդ դու ապացուցողի դերում ես, խեղճի դերում ես, որ ասում ես գիտես ինչ՝ էսենց-էնենց:

Կին, 31 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Թող սահմանները փակվեն, թող չշփվենք, թող առևտուր չանենք, մինչև մի օր մեկը կզբաղվի Հայկական հարցով ու ճիշտ կլուծի: Մենք պետք է վերամիավորենք Հայաստանը, այսինքն՝ պահանջատեր լինելով՝ Թուրքիայից վերցնել էն, ինչը մեզ է պատկանում:

Տղամարդ, 29 տ., սահմանամերձ բնակավայր, Վայոց ձոր,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Պետք է երաշխավորված լինի անվտանգությունը, երբ որ դու հարաբերություն ես կարգավորում, այդ իսկ պատճառով, եթե միջազգայնորեն կառույցներով հաստատվի կապը, ու երկուսի առջև ինչ-որ ուլտիմատում դրվի կամ պահանջ դրվի, որպեսզի երկուսն էլ հարգեն ու պաշտպանեն իրար անվտանգությունը, կարծում եմ որևէ խնդիր չի լինի:

Կին, 23 տ., սահմանամերձ բնակավայր, Արագածոտն,
թուրքերի հետ շփում ունեցել է

Այնպես անենք, որ հայերի անվտանգությունն էնտեղ մաքսիմալ երաշխավորված լինի: Հա, կարող է հայերն էլ իրենց էնտեղ շատ վատ պահեն, բայց երկուստեք համաձայնությամբ իրենց անվտանգությունը մեր երկրում երաշխավորենք, մերն էլ իրենք իրենց երկրում երաշխավորեն:

Տղամարդ, 22 տ., սահմանամերձ բնակավայր, Տավուշ,
թուրքերի հետ շփում ունեցել է

...Հարցը Ցեղասպանության ճանաչումը չի, պարզ է, որ իրենք էլ պետք է առերեսվենք: Արդարացումներ են փորձում անել, բայց դա արդեն ճիշտ երևույթ չէ: Նույնը Գերմանիան, որ չընդուներ, մինչև հիմա չէր զարգանալու: Ամեն ազգի մեջ էլ լինում է, էնպես չի, որ մենք հայ ենք, մենք մեր պատմության մեջ բոլոր քայլերը իդեալական ճիշտ ու հեռանկարային արել ենք՝ էդպես չի: Մենք էլ շատ բաներ կա, որ պետք է ընդունենք, որ շտկենք:

Տղամարդ, 49 տ., ոչ սահմանամերձ բնակավայր, Երևան,
թուրքերի հետ շփում ունեցել է

Այս դիտարկումները ցույց են տալիս, որ հայաստանցիները ոչ միօրինակ զգացմունքներ ունեն Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Շատերը վախենում են ազդեցությունից՝ հատկապես տեղական համայնքների և ազգային անվտանգության վրա, ինչը վկայում է, որ անցյալի հավաքական հիշողությունները դեռևս կարևոր դեր են խաղում նրանց հայացքներում: Երկարաժամկետ հեռանկարում տնտեսական համագործակցությունը թվում է կարգավորման ամենահավանական մեկնարկային կետերից մեկը: Այնուամենայնիվ, չնայած զգալի մտահոգություններին, հանրությունը նաև ինչ-որ չափով բաց է երկխոսության համար՝ նախապատվությունը հատկապես տալով Հայաստանի և Թուրքիայի միջև ուղիղ բանակցություններին՝ առանց երրորդ կողմի ներգրավման:

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԻԱՆ ԽՈՇՈՐԱՑՈՒՅՑԻ ՏԱԿ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«KONDA» հետազոտական և խորհրդատվական ընկերություն

2.1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրել հասարակության և համապատասխան թիրախային խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը: Մասնավորապես, հետազոտությունը ձգտում է հասկանալ Թուրքիայի լայն հանրության ընկալումները Հայաստանի վերաբերյալ՝ հաշվի առնելով սոցիալ-ժողովրդագրական և աշխարհագրական տարբեր գործոններ: Ի լրումն՝ ձգտելով բացահայտել այս ընկալումների արմատները՝ հետազոտությունը նպատակ ունի պարզելու երկու ժողովուրդների միջև հարաբերությունների կարգավորման հնարավոր սցենարները:

Այս բաժինը ներկայացնում է հետազոտության նախագծման և իրականացման փուլերը, մեթոդներն ու գործիքները, որոնք օգտագործվել են վերը նշված խնդիրների լուծման համար:

Տվյալների հավաքագրման մեթոդներ

Քանակական ուսումնասիրության շրջանակում տվյալների հավաքագրման համար օգտագործվել է «KONDA»-ի միջնորդավորված պանելի մեթոդը: Հարցազրույցներն անցկացվել են հեռախոսով՝ միջնորդ զրուցավարների միջոցով: Այս համակարգում մենք աշխատել ենք միջնորդ զրուցավարների հետ, որոնք համաձայնել են համագործակցել «KONDA»-ի հետ՝ ըստ քանակական ուսումնասիրության կանոնների, և պանելի՝ ընտրանքում ընդգրկված մասնակիցների հետ, որն ըստ հարցման պահանջների կազմվել է գլխավոր համախմբությունից: Հարցումն անցկացնողների և «KONDA»-ի կողմից ուղղորդված մարդկանց կոնտակտային տվյալները ներառված են պանելի մասնակիցների համակարգում:

Միջնորդավորված պանելի համակարգում կան երեք տեսակի մարդիկ, որոնց միջոցով հավաքագրվել են քանակական տվյալները:

Պանելի համակարգող. Պանելի համակարգողը զրուցավարների հետ նախնական կողմնորոշիչ հանդիպում է անցկացնում տեսազանգի միջոցով կամ առերես և նրանց ավելացնում համակարգում: Նրանք դիտարկում են

միջնորդների՝ համակարգում պանելի մասնակիցներ ավելացնելու գործընթացը՝ ըստ պանելի մասնակիցների՝ համախմբում բացակայող բնութագրերի: Նրանք հետևում են պանելի մասնակիցների պահանջարկին ըստ տարածաշրջանների ու ժողովրդագրության և ըստ այդմ համալրում համակարգը: Այս մարդիկ «KONDA»-ի լրիվ կամ կես դրույքով աշխատողներ են:

Միջնորդ զրուցավարներն իրենց ցուցակները ստեղծում են ըստ հիմնական ժողովրդագրական բնութագրերի՝ սկզբում իրենց սեփական շրջանակներից, այնուհետև՝ պանելի՝ «KONDA»-ի կողմից ուղղորդված մասնակիցների տվյալների համաձայն: Պանելի համակարգողները ստուգում են այս ցուցակները և կատարում հսկիչ զանգեր՝ համոզվելու, որ համակարգում ճիշտ մարդիկ են: Այն միջնորդները, որոնց ցուցակները նրանք հաստատում են, ավելացվում են համակարգում:

Միջնորդ զրուցավարներ. Նրանք ղեկավարում են պանելի մասնակիցներին, որոնք կամ իրենց սեփական ցանցերից են կամ ուղղորդվում են «KONDA»-ի կողմից: Նախքան համակարգում ընդգրկելը, նրանք տեղեկացնում են պանելի մասնակիցներին և ստանում նրանց բանավոր համաձայնությունը: Այս մարդիկ կանոնավոր աշխատակազմի անդամներ են: Նրանց աշխատանքը վարձատրվում է:

Նրանք կարող են մասնակցել համակարգում, եթե նրանց ստեղծած ցուցակները և նրանց մոտ ուղղորդված պանելի մասնակիցները հաստատվեն պանելի համակարգողի կողմից: Նրանց պատասխանատվությունն է ապահովել պանելի կազմի ներկայացուցչականությունը դրա չափին համապատասխան՝ այդ նպատակով կանոնավոր դեմ առ դեմ կամ առցանց հարցազրույցներ անցկացնելով պանելի համակարգող թիմի հետ: Հարցման շրջանակում, նախքան հարցումը և դրանից հետո, պանելի համակարգող թիմը պարբերաբար զանգահարում և ստուգում է պանելի մասնակիցներին և միջնորդ զրուցավարներին:

Պանելի մասնակիցներ. Նրանք համակարգում ավելացվում են միջնորդ զրուցավարների կողմից: Նրանք հեռացվում են համակարգից, եթե չեն ցանկանում մասնակցել պանելային համակարգի հարցումներին կամ տվյալների և տրամաբանության ստուգումների ժամանակ ոչ հետևողական պատասխաններ են տալիս: Նախքան համակարգում ավելացվելը նրանք բանավոր համաձայնություն են տալիս, հարցմանը մասնակցում են կամավոր հիմունքով և չեն վարձատրվում:

Միջնորդավորված պանելում որպես պանելի մասնակից կարող են ընդգրկվել 15 տարեկանից բարձր անձինք: Պանելին կարող են մասնակցել բոլոր նրանք, ովքեր հեռախոսով խոսելու խոչընդոտ չունեն: Պանելի մասնակիցները հետազոտության այս մոդելում չեն վարձատրվում (վարձատրություն չկա՝ չեզոքացնելու հարցվողի կողմից կանխակալ պատասխաններ տալու միտումը՝ կանոնավոր վճարման ակնկալիքով):

Որակական ուսումնասիրության համար իրականացվել են խորին հարցազրույցներ, քանի որ հետազոտության շրջանակում անհրաժեշտ է հիմնավորապես հասկանալ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի և ընկալումների հիմքում ընկած պատճառները: Այս մեթոդները հատկապես արդյունավետ են անձնական փորձառությունները և գործելակերպերը մեծ խորությամբ ուսումնասիրելու առումով:

Տվյալների աղբյուրներ և դաշտային աշխատանքի ժամանակացույց

Այս հետազոտությունը հիմնվում է բացառապես առաջնային տվյալների վրա՝ որպես որակական և քանակական ուսումնասիրությունների աղբյուր ունենալով լայն հանրությունը:

Քանակական ուսումնասիրությունն իրականացվել է 2023 թվականի դեկտեմբերի 1-ից 4-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսազանգերի միջոցով այն անձանց հետ, ովքեր համաձայնել են ընդգրկվել «KONDA»-ի միջնորդավորված պանելում:

Որակական ուսումնասիրության համար հարցազրույցներն անցկացվել են մայիսի 5-ից հունիսի 16-ն ընկած ժամանակահատվածում փորձագետների կողմից՝ օգտագործելով կիսակառուցվածքայնացված խորին հարցազրույցի տեխնիկան:

Բացի վերը նշվածներից՝ ուսումնասիրվել են Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների, ինչպես նաև կարգավորման հնարավոր ուղիների վերաբերյալ տարբեր լրատվամիջոցների նյութեր, գրքեր և նախնական հետազոտություններ՝ վերլուծությունը հարստացնելու և հավաքագրված տվյալների համապարփակ մեկնաբանություն ապահովելու համար:

Ընտրանքի չափը, աշխարհագրական ծածկույթը և ընտրանքի ռազմավարությունները/ընթացակարգերը

Ընտրանքը կազմվում է «KONDA»-ի միջնորդավորված պանելի մասնակիցների քանակից՝ հաշվի առնելով ժողովրդագրական բաշխումը, քաղաքական նախապատվությունները և տարածաշրջանային բաշխվածությունը՝ համաձայն «KONDA բարոմետր»-ի տվյալների, որոնք հավաքագրվել են ստորև նկարագրված մեթոդով: Տվյալները հավաքագրվում են ըստ ընտրանքի չափի քանակական ուսումնասիրության մեջ ընդգրկված պանելի մասնակիցների հետ հարցազրույցներ անցկացնելու միջոցով:

Ընտրանքի գործընթացում բնակչության չափի ստրատիֆիկացման համար օգտագործվում են պետական համակարգից ստացված տվյալները: Համաձայն N. 5490 «Բնակչության ծառայությունների մասին» օրենքի՝ պարզվել են Թուրքիայի սահմաններում բնակվող բոլոր անձանց բնակության հասցեները. Թուրքիայի քաղաքացիների պարագայում այս հասցեները համադրվել են Բնակչության կառավարման կենտրոնական համակարգի (MERNIS) տվյալների բազայում առկա բնակչության ռեգիստրների հետ՝ օգտագործելով նրանց թուրքական նույնականացման համարները: Օտարերկրյա քաղաքացիների մասին տեղեկատվությունը նույնպես մուքագրվել է համակարգում՝ օգտագործելով նրանց անձնագրերի համարները՝ այդպիսով ստեղծելով Հասցեների հիման վրա բնակչության գրանցման համակարգը (Adrese Dayali Nüfus Kayit Sistemi)[1]: Ընտրանքը կազմվում է բնակչության թվաքանակը շերտավորելով՝ համաձայն այս համակարգի տվյալների, բնակավայրերի և գյուղերի կրթական աստիճանի վիճակագրության՝ ըստ բնակչության գրանցման համակարգի տվյալների, և բնակավայրերում ու գյուղերում 2023 թվականի մայիսի 14-ի համընդհանուր ընտրությունների արդյունքների: Բնակավայրերը սկզբում ստրատիֆիկացվում են որպես գյուղական/քաղաքային/մետրոպոլիս, և ընտրանքը կազմվում է 12 տարածաշրջանի հիման վրա: Շերտավորումից հետո պատահականության սկզբունքով համակարգչի միջոցով ընտրվում են յուրաքանչյուր կլաստերի՝ այցելության ենթակա թաղամասերն ու գյուղերը:

Այս ընտրանքի նպատակն է՝ ապահովել, որ հարցվողները լինեն Թուրքիայի 15 տարեկանից բարձր բնակչության ներկայացուցիչներ: Ընտրանքը կազմվում է բանաձևով, որը մշակվել է «KONDA»-ի կողմից՝ իր գիտելիքի և փորձի հիման վրա, հանդիսանում է «KONDA»-ի առևտրային գաղտնիքը և բացահայտման ենթակա չէ: «KONDA»-ն իր հայեցողությամբ կարող է ընտրանքի հետ կապված տեղեկություն տրամադրել թաղամասի, հարցվողի, դաշտային գործընթացի և այլն հանգամանքների վերաբերյալ:

Այս զեկույցը և դրա հիմքում ընկած տվյալները պատրաստվել են «KONDA» հետազոտական և խորհրդատվական ընկերության կողմից՝ Հրանտ Դինք հիմնարկի համար: Այս հետազոտական զեկույցի բովանդակությունն ուղղված է հասկանալու միմյանց վերաբերյալ Թուրքիայի և Հայաստանի հասարակությունների ընկալումները և հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ նրանց տեսակետները՝ Թուրքիայի 15 տարեկանից բարձր բնակչության շրջանում: Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի 2023 թվականի տարեվերջյան տվյալներով՝ Թուրքիայում 15-17 տարիքային խմբի անհատների թիվը մոտ 4 միլիոն է: Ըստ տվյալների՝ այս տարիքային խումբը կազմում է Թուրքիայի երիտասարդ բնակչության 30,3%-ը: Հետևաբար, մեր հարցման մեջ, որն ուղղված է բացահայտելու, թե ինչպես են Թուրքիայի և Հայաստանի հասարակությունները հասկանում և ընկալում միմյանց, մենք նպատակադրված պահպանել ենք Թուրքիայի բնակչության մեծ հատվածը ներկայացնող այս խումբը: Զեկույցում նշված թեմաները վերլուծվել են ըստ ժողովրդագրական տարբեր կլաստերների:

Հետազոտության շրջանակներում հեռախոսային հարցազրույց է անցկացվել 74 մարզի 1107 տարբեր թաղամասերում կամ գյուղերում բնակվող 2029 մարդու հետ:

Հետազոտությունը Թուրքիայում նախագծվել և իրականացվել է՝ պարզելու և դիտարկելու Թուրքիայի 15 տարեկան և բարձր տարիքի չափահաս բնակչությունը ներկայացնող անհատների նախընտրությունների միտումներն ու փոփոխությունները: Հետազոտության արդյունքների սխալի միջակայքը +/- 2,18 է՝ 95% վստահության միջակայքով, և +/- 2,86՝ 99% վստահության միջակայքով:

Ընտրանքը կազմվել է թաղամասերի և գյուղերի բնակչության չափն ու կրթական մակարդակը շերտավորելով՝ հիմնվելով Բնակչության գրանցման համակարգի տվյալների և 2023 թվականի մայիսի 14-ին կայացած համընդհանուր ընտրությունների՝ թաղամասերի և գյուղերի արդյունքների վրա: Բնակավայրերը նախ դասակարգվել են որպես գյուղական/քաղաքային/մետրոպոլիս, և ընտրանքը որոշվել է 12 տարածաշրջանի հիման վրա:

1. https://nip.tuik.gov.tr/Home/Adnks

Աղյուսակ 1. Տարածաշրջանային բաշխվածությունը և մասնակիցների բնակության մարզերը

Տարածաշրջան	Հաճախականություն	Տոկոս	Քաղաք
Ստամբուլ (TR1)	375	18,5	Ստամբուլ
Արևմտյան Մարմարա (TR2)	83	4,1	Բալըքեսիր, Չանաքքալե, Էդիրնե, Քըրքլարելի, Թեքիրդաղ
Էգեյան (TR3)	260	12,8	Աֆյոնքարահիսար, Այդըն, Դենիզլի, Իզմիր, Քյութահյա, Մանիսա, Մուղլա, Ուշաք
Արևելյան Մարմարա (TR4)	196	9,7	Բիլեջիք, Բոլու, Բուրսա, Էսքիշեհիր, Քոջաելի, Սաքարյա, Յալովա, Դյուզջե
Արևմտյան Անատոլիա (TR5)	219	10,8	Անկարա, Քոնյա
Միջերկրածովյան (TR6)	267	13,2	Ադանա, Անթալիա, Հաթայ, Ըսփարթա, Մերսին, Քահրամանմարաշ, Օսմանիյե
Կենտրոնական Անատոլիա (TR7)	118	5,8	Կայսերի, Քըրշեհիր, Նևշեհիր, Նիղդե, Սիվաս, Յոզգաթ, Աքսարայ, Քըրըքքալե
Արևմտասևծովյան (TR8)	110	5,4	Ամասիա, Չորում, Կաստամոնու, Սամսուն, Սինոփ, Թոքաթ, Զոնգուլդաք, Քարաբյուք
Արևելասևծովյան (TR9)	71	3,5	Արթվին, Գիրեսուն, Գյումուշհանե, Օրդու, Ռիզե, Տրաբզոն
Հյուսիսարևելյան Անատոլիա (TRA)	50	2,5	Աղրը, Էրզինջան, Էրզրում, Կարս, Բայբուրթ
Կենտրոնաարևելյան Անատոլիա (TRB)	88	4,4	Բիթլիս, Էլազըղ, Հաքքարի, Մալաթիա, Մուշ, Թունջելի, Վան
Հարավարևելյան Անատոլիա (TRC)	192	9,5	Ադըյաման, Դիարբեքիր, Գազիանթեփ, Մարդին, Սիիրթ, Շանլըուրֆա, Բաթման, Շըրնաք, Քիլիս
Ընդամենը	2029	100,0	

Որակական հետազոտության համար հրավիրվել է 200 մարդ, սակայն միայն 35-ն է համաձայնել մասնակցել: Այս գործընթացը սպասվածից երկար է տևել՝ այնպիսի խնդիրների պատճառով, ինչպիսիք են մարդկանց անհասանելի լինելը, թեմայի վերաբերյալ նրանց նախապաշարմունքները կամ թեմայի վերաբերյալ կարծիք չունենալը:

Որակական ուսումնասիրության փուլը նախատեսված էր լրացնելու և հարստացնելու քանակական ուսումնասիրությունից ստացված արդյունքները դրա ավարտից հետո:

Մասնավորապես, որակական ուսումնասիրության սևեռակետում հետևյալ թեմաներն էին.

- Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորումը կարևոր է: Ուսումնասիրվում են հարցվածների տեսակետները, թե որ ոլորտներն են ավելի կարևոր՝ քաղաքական, տնտեսական, մշակութային կամ էներգետիկ:
- Փորձում ենք հասկանալ Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորման հետ կապված հիմնական մտահոգությունները:
- Քննվում է, թե ինչպիսին է Թուրքիայի հասարակության շրջանում Հայաստանի և հայերի ընկալվող կերպարը:
- Ուսումնասիրվում են Հայաստանի և Թուրքիայի ընդհանուր շահերը, ինչպես նաև երկու երկրների ազգային շահերի մերձեցման կետերը:
- Որոշարկվում են այն ոլորտները, որոնցում, մասնակիցների կարծիքով, երկու երկրների միջև կան նմանություններ, ինչպես նաև սոցիալական և մշակութային ոլորտներում եղած ընդհանրությունները:
- Դիտարկվում են այն հնարավոր գործողությունները, որոնք կառավարությունը և հասարակությունը կարող են ձեռնարկել Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման համար:
- Գնահատվում է Թուրքիայի հասարակության կարծիքը Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացման վերաբերյալ:

Այս համատեքստում ընդհանուր առմամբ հարցազրույց է անցկացվել է 35 մարդու հետ, որոնցից 11-ը Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում ապրող անձինք են: Մասնակիցներին ընտրելիս առաջնահերթություն է տրվել հավասարակշռված բաշխմանը ըստ այնպիսի չափանիշների, ինչպիսիք են սեռը, տարիքը, կրթական մակարդակը և զբաղմունքը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ընտրանքի աշխարհագրական ծածկույթը (քանակը՝ 2029):

Աղյուսակ 2. Նկարագրական վիճակագրություն. տարածաշրջան և բնակավայրի տեսակ

Նկարագիր	Հաճախականություն
Տարածաշրջաններ	
Ստամբուլ	18,5%
Արևմտյան Մարմարա	4,1%
Էգեյան	12,8%
Արևելյան Մարմարա	9,7%
Արևմտյան Անատոլիա	10,8%
Միջերկրածովյան	13,2%
Կենտրոնական Անատոլիա	5,8%
Արևմտասևածովյան	5,4%
Արևելասևածովյան	3,5%
Հյուսիսարևելյան Անատոլիա	2,5%
Կենտրոնաարևելյան Անատոլիա	4,4%
Հարավարևելյան Անատոլիա	9,5%
Բնակավայրի տեսակ	
Գյուղական	7,9%
Քաղաքային	38,4%
Մետրոպոլիս	53,7%

Ներկայացուցչականության հիմքեր

Կարգավորման շուրջ Թուրքիայում առկա ընկալումների վերաբերյալ «KONDA»-ի հավաքած քանակական տվյալները երկրի կտրվածքով ներկայացուցչական են՝ ըստ սեռի, տարիքի և կրթության մակարդակի:

Որակի ապահովման միջոցառումներ

Քանակական տվյալների հավաքագրման համար օգտագործվել է «KONDA»-ի միջնորդավորված պանելի համակարգը: Մինչ հիմնական հարցումները, փորձնական հարցազրույց է անցկացվել 67 անձի հետ: Կատարվել են մի շարք ստուգումներ՝ համոզվելու, որ ուսումնասիրությունը համապատասխանում է կանոններին և տվյալների հավաստիության սկզբունքին: Վերահսկողության քայլերը ներկայացված են ստորև.

- տվյալների վերահսկում՝ դիտարկելով նախկին հարցումներին պատասխանների համապատասխանությունը,
- հարցման միջին տևողությունը և սկզբի ու ավարտի ժամանակը,
- օրինաչափությունից բեկվող տվյալներ,
- հետզանգ և մասնակիցների ստուգում հեռախոսի միջոցով,
- կասկածելի զրույցների հեռախոսային արձանագրությունների ստուգում:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է 2172 հարցազրույց, և տարբեր պատճառներով հարցազրույցների մի մասի՝ քանակական տվյալներից դուրս մնալուց հետո վերլուծվել են 2029 հարցազրույցի տվյալներ: Տվյալների վերահսկման և վերլուծության համար օգտագործվել են «SPSS» և «R» ծրագրերը: Ստացված տվյալների լրակազմի առանձնահատկությունները համահունչ են ինչպես «KONDA»-ի նախկին հետազոտությունների տվյալների, այնպես էլ Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի տվյալների հետ:

Սահմանափակումներ

«KONDA»-ի միջնորդավորված պանելի հետ անցկացված հարցումն ունի որոշակի ներհատուկ սահմանափակումներ:

Պանելի մասնակիցների նախկին և ներկա հարաբերությունները միջնորդ զրուցավարների հետ կարող են ազդել առաջադրված հարցերին նրանց

պատասխանների վրա: Սա կարելի է անվանել «ծանոթությամբ պայմանավորված կողմնակալություն»: Նմանատիպ կողմնակալություն կարող է դրսևորվել նաև այնպիսի սցենարի դեպքում, երբ պատասխանողն ու հարցազրուցավարը ծանոթ չեն: Քանի որ սոցիալական հետազոտության մեջ հնարավոր չէ չափել՝ ծանոթությամբ պայմանավորվածՀ կողմնակալություն է, թե ծանոթությամբ չպայմանավորված: Այս սահմանափակումները կարող են անտեսվել ցանկացած հետազոտության մեջ:

Որակական այնպիսի տարրերը, ինչպիսիք են հարցման շրջանակում հարցերին տրվող պատասխանների հիմքում եղած հուզական վիճակները, մտքերը և մոտիվները, հնարավոր է հասկացվեն և արդյունքներում արտացոլվեն ոչ ամբողջությամբ: Համաշխարհային կամ տեղական օրակարգերի ցանկացած փոփոխություն, քաղաքական իրադարձությունները կամ քաղաքական գործիչների դիսկուրսները, որոնք առնչվում են հետազոտության թեմային, Թուրքիայի և Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված աշխարհաքաղաքական իրողություններն այս հետազոտության համատեքստում կարող են ազդել հետազոտության շրջանակում տրված հարցերի պատասխանների վրա (թեպետ մենք կրճատել ենք տվյալների հավաքագրման գործընթացը մինչև 2 օր՝ հարցվողների պատասխանները պայմաններից զատելու համար, միշտ կա հավանականություն, որ վերոհիշյալ պայմանները հնարավոր է ի հայտ գան):

Հարցաթերթիկի ձևավորման մատչելիությունը հնարավոր է կատարյալ չլինի: Հնարավոր է հաշվի առնված չլինեն հատուկ հանգամանքներ, ինչպիսիք են լեզվական խոչընդոտները, ժեստերի լեզուն: Սա գուցե խոչընդոտ եղած լինի որոշ հարցվողների համար: Մեկ այլ սահմանափակում (թեև հետազոտության շրջանակներից դուրս) է, թե հարցվողների համար որքանով է հարմարավետ այն միջավայրը, որտեղ նրանք պատասխանել են հարցերին, և արդյոք նրանք անկեղծորեն են արձագանքել հարցմանը: Հնարավոր է՝ նրանց մի մասը ձեռնպահ է մնացել մասնակցելուց՝ միջավայրի կամ հարցմանն իրենց ընդհանուր մոտեցման պատճառով:

Հնարավոր է, որ այն հասկացությունները, որոնց մասին հարցեր կան հարցաթերթում, բոլորի համար նույն նշանակությունը չունենան: Սա կարող է հանգեցնել այս հասկացությունների իմաստի վերաբերյալ փոխհամաձայնության բացակայության:

Էթիկական նկատառումներ

Քանակական հետազոտության շրջանակում մասնակիցները տեղեկացվել են հետազոտության նպատակների մասին և նախքան մեկնարկը տվել են բանավոր համաձայնություն: Ընդգծվել է, որ ուսումնասիրության նպատակն է ներկայացնել հասարակական կարծիքի լայն պատկերը, ոչ թե առանձին տեսակետներ:

Որակական հետազոտության շրջանակում մասնակիցներին բանավոր ներկայացվել են հետազոտության նպատակները, և նրանք բանավոր համաձայնել են մասնակցել: Նրանք նաև տեղեկացվել են, որ հարցազրույցները ձայնագրվելու են, և տվել են իրենց համաձայնությունը:

Ինչպես քանակական, այնպես էլ որակական ուսումնասիրություններից ստացված բոլոր տվյալները անանունացվել են՝ ապահովելու, որ մասնակիցների ինքնությունը չբացահայտվի, և պահպանվել ու օգտագործվել են ըստ այդմ:

2.2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.2.1. Հարցման մասնակիցների ժողովրդագրական պատկերը

Զեկույցի այս բաժինը սկսվում է հարցման մասնակիցների հիմնական ժողովրդագրական տվյալների ներկայացմամբ: Հարցման մասնակիցների սեռային բաշխվածությունը գրեթե հավասար է: Ինչպես երևում է ստորև ներկայացված գծապատկերից՝ հարցվածների 50,1%-ը կին է, 49,9%-ը՝ տղամարդ:

Գծապատկեր 1. D1. Հարցվողների սեռը (n=2029)



Ամենամեծ մասնաբաժինը (33%) 51+ տարեկանների տարիքային խմբինն է: Հաջորդում են 34-50 տարիքային խումբը՝ 32,9%, և 18-33 տարեկանները՝ 29,2%: Ամենաերիտասարդ հարցվողը 15 տարեկան է, ամենատարեցը՝ 93: Հարցվողների միջին տարիքը 41,8 է (տես ստորև՝ աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 3. D2. Քանի՞ տարեկան եք (n=2028):

Միջին	Նվազագույն	Առավելագույն	Ստանդարտ շեղում	Վավեր քանակ
41,8	15	93	16,2	2028

Աղյուսակ 4. Տարիքային բաշխվածությունը՝ ըստ տարիքային 4 միջակայքերի

Տարիքային միջակայք	N	Հաճախականություն (հարցում)
15-17	100	4,9%
18-33	592	29,2%
34-50	667	32,9%
51+	670	33%

Բնակավայրերի տեսակները լրացուցիչ պատկերացումներ են տալիս հարցվածների ժողովրդագրական պատկերի վերաբերյալ, ըստ այդմ՝ նրանց 53,7%-ը բնակվում է մետրոպոլիսներում, 38,4%-ը՝ քաղաքային և 7,9%-ը՝ գյուղական բնակավայրերում:

Գծապատկեր 2. D45. Հարցվողների բնակավայրի տեսակը (n=2029)



Տարածաշրջանների մեջ ամենամեծ մասնաբաժինն ունի Ստամբուլը (18,5%): Հաջորդում են Միջերկրածովյան (13,2%) և Էգեյան (12,8%) տարածաշրջանները: Ամենափոքր մասնաբաժինը Հյուսիսարևելյան Անատոլիայինն է (2,5%):

Գծապատկեր 3. D46. Հարցվողների տարածաշրջանը (n=2029)



Հարցվածների թվում ամենամեծ մասնաբաժինը լրիվ դրույքով վճարովի աշխատողներինն է (25,7%): Հաջորդում են տնային տնտես/տնտեսուհիները (24,1%), կենսաթոշակառուները (16%) և ուսանողները (14,4%):

Գծապատկեր 4. D5. Ներկայումս ո՞րն է Ձեր հիմնական զբաղվածությունը (n=2016):



Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս կրոնական ներգրավվածության տարբեր աստիճաններ: Հարցման համաձայն՝ մասնակիցների 12,4%-ը հայտնել է, որ օրական մի քանի անգամ կարդում կամ լսում է իր կրոնի սուրբ տեքստերը, մինչդեռ 21,2%-ը շատ հազվադեպ է առնչվում սուրբ տեքստերի հետ, իսկ 13,6%-ը հայտնել է, որ երբեք չի առնչվել դրանց հետ:

Գծապատկեր 5. D34. Որքա՞ն հաճախ եք կարդում կամ լսում Ձեր կրոնի սուրբ տեքստեր, օրինակ՝ Ղուրան (n=2007):



Ինչպես երևում է ստորև ներկայացված գծապատկերից՝ հարցվածների 32,4%-ը շատ հազվադեպ է այցելել մզկիթներ և ջեմեվիներ[2], բացառությամբ հատուկ օրերի, մինչդեռ 21,9%-ը նշել է, որ երբեք չի այցելել նման վայրեր: Մյուս կողմից՝ կրոնական վայրեր պարբերաբար այցելողների տոկոսը կազմում է 6,5%:

Գծապատկեր 6. D35. Շատուկ օրերից բացի՝ որքա՞ն հաճախ եք այցելում կրոնական վայրեր, օրինակ՝ մզկիթներ և ջեմեվիներ (n=1997):



Իրենց երկրում մարդկանց եկամուտների և բարեկեցության մասին հարցին ի պատասխան՝ հարցվողների 58%-ը նշում է, որ մարդիկ միջին հատվածում են: Երկրորդ ամենաբարձր տոկոսը (25,9%) կազմում են այն հարցվածները, որոնք իրենց երկրում մարդկանց միջին հատվածից ավելի աղքատ են համարում: Մյուս կողմից՝ մենք նկատում ենք, որ Թուրքիայում մարդկանց բարեկեցությունը «շատ հարուստ» գնահատող մարդկանց մասնաբաժինը չափազանց ցածր է:

2. Ջեմեվիները Թուրքիայի ամենամեծ կրոնական փոքրամասնության՝ ալևիների աղոթատեղիներն են:

Գծապատկեր 7. D39. Եթե մեր երկրում մարդկանց բաժանեիք ըստ եկամտի ու բարեկեցության 5 շերտերի, Ձեր տնային տնտեսությունը, ըստ Ձեզ, ո՞ր շերտում կհայտնվեր, եթե 1-ը ամենաաղքատ շերտն է, իսկ 5-ը՝ ամենահարուստը (n=2021):



Ազատականության, պահպանողականության, ձախակողմյան և աջակողմյան գաղափարախոսությունների ընկալումների՝ երկու երկրների միջև հնարավոր տարբերությունների լույսի ներքո՝ Թուրքիայի համար մշակվեցին հարցման առանձին հարցեր: Այնուամենայնիվ, ստորև ներկայացված երկու գծապատկերները դիտարկելիս ակնհայտ է, որ պատասխանները զարմանալիորեն նման են բաշխվել:

Երբ հարցվողներին խնդրել են իրենց դասել պահպանողական-ազատական սանդղակում, զգալի մասը (40,5%) իրեն դիրքավորել է հենց մեջտեղում: Բացի դրանից՝ սանդղակի ծայրերում դիրքավորվողների մասնաբաժինը նվազում է՝ անկախ նրանից՝ նրանք պահպանողական, թե ազատական կողմում են:

Գծապատկեր 8. P9. Մարդիկ կարող են տարբեր դիրքորոշումներ ունենալ այն մասին, թե ինչպես պետք է աշխարհը գործի: Սա հաշվի առնելով՝ ինչպե՞ս կբնութագրեք ինքներդ Ձեզ: Ես ինձ համարում եմ... (n=1940):



Հարցվողների դիրքը քաղաքական սանդղակում դիտարկելիս նկատվում է պահպանողական-ազատական սանդղակին նման միտում: 39,5%-ն իրեն դիրքավորում է հենց մեջտեղում: Բացի դրանից, քաղաքական սանդղակի եզրերին դիրքավորվողների մասնաբաժինը նվազում է՝ անկախ այն բանից՝ նրանք ձախակողմյան են, թե՞ աջակողմյան:

Գծապատկեր 9. P8. Մարդիկ կարող են տարբեր դիրքորոշումներ ունենալ այն մասին, թե ինչպես պետք է աշխարհը գործի: Սա հաշվի առնելով՝ ինչպե՞ս կբնութագրեք ինքներդ Ձեզ: Ես ինձ համարում եմ... (n=1918):



2.2.2. Գիտելիք, ընկալումներ և վերաբերմունք

Այս բաժնում մանրամասն կուսումնասիրվեն հարցման մասնակիցների գիտելիքը, ընկալումները և վերաբերմունքը հայերի և Հայաստանի վերաբերյալ[3]: Թեև երկու երկրների հարաբերությունները շատ երկար պատմություն ունեն, սակայն դրանք դանդաղ են զարգանում, և այս զարգացումը մինչ այժմ հետևողականորեն կառուցողական չի եղել: Ավելին, չնայած ընդհանուր սահմաններին, երկրների միջև կապերը մնացել են նվազագույն մակարդակի:

Պատասխանելով «Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք, ըստ Ձեզ, տեղեկացված Հայաստանի և հայերի մասին» հարցին՝ հարցվողների 41,4%-ը նշել է, որ բավականին տեղեկացված է, իսկ 34,6%-ը՝ որ այնքան էլ տեղեկացված չէ: Հարցման մասնակիցների միայն 3,4%-ն է կարծում, որ շատ լավ տեղեկացված է Հայաստանի և հայերի մասին:

Գծապատկեր 10. P21. Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք, ըստ Ձեզ, տեղեկացված Հայաստանի և հայերի մասին (n=2019):



3. Կարևոր է նշել, որ նախքան փոփոխականների միջև վիճակագրական թեստեր կատարելը, բոլոր «դժվարանում եմ պատասխանել» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները դիտվել են որպես «կիրառելի չէ», ինչը պահանջվում էր վիճակագրական թեստերի ճշգրտության համար: Սա է պատճառը, որ դուք կարող եք նկատել տարբեր թվով դիտարկումներ՝ վիճակագրորեն կապակցված փոփոխականների հիման վրա:

Ի հավելումն վերը նշված բացահայտումների՝ մենք տեսնում ենք, որ հարցվածների կեսից ավելին (54,7%) Հայաստանը սահմանում է որպես փոքր երկիր, մինչդեռ մասնակիցների 23,4%-ն ասում է, որ տեղեկություն չունի Հայաստանի տարածքային չափերի մասին:

Գծապատկեր 11. P13. Ըստ Ձեզ՝ Հայաստանն այսօր տարածքային չափերով ինչպիսի՞ երկիր է. մեծ, ո՛չ մեծ, ո՛չ էլ փոքր, թե՞ փոքր (n=2013):



Հարցվողներին տրվել է նաև Հայաստանի մասին ավելի մանրամասնող հարց. «Ինչ եք կարծում՝ Հայաստանն այսօր մոտավորապես քանի՞ միլիոն բնակչություն ունի»: Ամենատարածված պատասխանը (35%) «Դժվարանում եմ պատասխանել»-ն է: Մյուս կողմից՝ հարցվողների 16,3%-ն ասում է, որ Հայաստանի բնակչությունը 2-ից 3 մլն է, իսկ 15,8%-ը՝ որ 3-ից 4 մլն է:

Գծապատկեր 12. P11. Ի՞նչ եք կարծում՝ Հայաստանն այսօր մոտավորապես քանի՞ միլիոն բնակչություն ունի (տարբերակները չեն կարդացվել, n=2016)։



Ինչպես ցույց է տալիս ստորև բերված գծապատկերը՝ Թուրքիայում Հայաստանի և հայերի մասին տեղեկացվածության ամենատարածված աղբյուրը ընտանեկան քննարկումներն ու սերունդներով փոխանցվող պատմություններն են (36,3%): Դրան հաջորդում են պատմության դասերն ու դասագրքերը դպրոցում (32,7%) և նորություններն ու ընթացիկ իրադարձությունները (32,2%):

Գծապատկեր 13. P22. Ինչպե՞ս կավարտեիք հետևյալ նախադասությունը. «Փոքրուց ես Հայաստանի և հայերի մասին տեղեկացել եմ հիմնականում...» (բազմակի ընտրությամբ հարց, տարբերակները չեն կարդացվել հարցվողի համար, n=2986)։



Անցում կատարելով որակական ուսումնասիրությանը՝ նկատում ենք, որ մասնակիցները հայերի մասին իմացել են տարբեր աղբյուրներից: Այդ աղբյուրներից են տեղեկությունները ընտանիքի ավագ անդամներից, դպրոցական կրթությունը, պատմական արտեֆակտները և տեղական պատմույթները: Ի լրումն՝ որոշ մասնակիցներ հայերի մասին իմացել են լրատվամիջոցների, սոցիալական ցանցերի և անձնական հետազոտությունների միջոցով:

Ըստ այդմ՝ հարցվող I14-ը նշում է տեղեկատվության տարբեր աղբյուրներ՝ ավագ սերունդ, սոցիալական մեդիա, Թվիթերի (X-ի) հեշթեգեր և իրադարձություններ: Սա ցույց է տալիս, որ հայերի վերաբերյալ նրանց ընկալումը ձևավորվում է բազմազան աղբյուրների ազդեցությամբ: Ավագներից լսելու իրողությունը ցույց է տալիս, որ ավանդական, բանավոր պատումները և անձնական կյանքի դրվագները կամ դիպվածները կարևոր դեր են խաղում ընկալումների ձևավորման գործում: Սա հաճախ արտացոլում է սերնդեսերունդ փոխանցված պատմամշակութային համատեքստը: Սոցիալական մեդիայի և Թվիթերում հեշթեգերի հիշատակումն ընդգծում է ժամանակակից թվային հարթակների ազդեցությունը կարծիքների ձևավորման և տեղեկատվության տարածման վրա: Սոցիալական մեդիան կարող է ինչպես տեղեկացնել, այնպես էլ ապատեղեկացնել՝ կախված սպառվող բովանդակությունից:

Հարց. Ինչպե՞ս եք փոքր ժամանակ իմացել հայերի մասին:

Պատասխան. Մեծերից, սոցիալական ցանցերից, Թվիթերի հեշթեգերից, տեղի ունեցած իրադարձություններից:

(I14. տղամարդ, 28տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

«Տեղի ունեցած իրադարձությունների» հիշատակումը հուշում է հայերի հետ կապված պատմական և, հնարավոր է, վերջին իրադարձությունների մասին իրազեկվածության մասին: Սա կարող է ներառել ինչպես պատմական իրադարձություններ, ինչպիսին է Հայոց ցեղասպանությունը, այնպես էլ ավելի թարմ քաղաքական կամ հասարակական դիպվածները: Ավանդական և ժամանակակից աղբյուրների զուգակցումը նշանակում է, որ I14-ի վրա, հավանաբար, ազդել են խառը պատմույթներ, որոնք կարող են ներառել ինչպես ճշգրիտ պատմական իրողություններ, այնպես էլ կողմնակալ կամ թերի տեղեկատվություն: Այս համադրությունը կարող է հանգեցնել հայերի վերաբերյալ ոչ միանշանակ և երբեմն հակասական ընկալման:

Հարցվածների զգալի մասը նշում է, որ հայերի մասին իրենց գիտելիքը հիմնականում գալիս է պատմության դասերից: Սա խոսում է այն մասին, որ ֆորմալ կրթությունը նշանակալի դեր է խաղացել հայերի վերաբերյալ նրանց պատկերացումների և ընկալման ձևավորման գործում:

Հարց. Ինչպե՞ս եք փոքր ժամանակ իմացել հայերի մասին:

Պատասխան. Պատմության դասերից, երևի թե:

(I13. կին, 59տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Նմանապես, հարցվողը, որը նույնականացված է որպես I29, որպես հայերի մասին իմանալու աղբյուր նշում է ֆորմալ կրթությանը, մասնավորապես՝ պատմության գրքերն ու դասախոսությունները: Նա ընդգծում է, որ հայերը վստահելի համայնք են եղել օսմանյան ժամանակաշրջանում, սակայն այդ վստահությունը վերացել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այս պատասխանն արտացոլում է պատմական նարատիվների ազդեցությունը ներկայիս ընկալումների վրա՝ ընդգծելով կրթության դերը փոխըմբռնման ձևավորման գործում: Այն, որ I29-ը ընդունում է վստահությունից անվստահության անցումը, ընդգծում է պատմական իրադարձությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության խոր ազդեցությունը թուրքերի և հայերի հարաբերությունների վրա: Այս տեսանկյունը մատնանշում է ավելի լավ մշակված և համապարփակ պատմական կրթության անհրաժեշտությունը, որն անդրադառնում է ինչպես համակեցության ժամանակաշրջաններին, այնպես էլ հակամարտություններին՝ խթանելու ավելի հավասարակշռված ըմբռնումը:

Հայերի մասին իմացել եմ պատմության գրքերից ու դասախոսություններից: Օսմանյան ժամանակաշրջանում հայերը վստահելի համայնք էին, սակայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո այդ վստահությունը վերացավ:

(I29. տղամարդ, 23տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Պատասխանը ենթադրում է, որ հարցվողը, ըստ ամենայնի, անձնական կամ ընտանիքից եկող սահմանափակ գիտելիք ունի հայերի մասին՝ փոխարենը հենվելով ինստիտուցիոնալ կրթության վրա: Մասնակիցների տեղեկատվության աղբյուրները հիմնված են պատմական իրադարձությունների և անձնական փորձառությունների վրա: Սա ցույց է տալիս, թե ինչպես են ձևավորվում Թուրքիայում ապրող անհատների պատկերացումները հայերի և Հայաստանի մասին և ինչպես են կրում տարբեր աղբյուրների ազդեցությունը:

Մենք հայերի մասին առաջին անգամ իմացանք կոտորածներից, որ, ըստ խոսակցությունների, տեղի էին ունեցել Վանի Էրջիշ թաղամասում[4], ինչպես նաև Դերեքյոյում ապրող մարդկանց դեմ իրականացված ջարդերից:

(I9. տղամարդ, 51 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Կարդալով, այսինքն՝ օբյեկտիվորեն... Տեղեկություն ստանում ենք կամ ընտանիքիս ավագներից, կամ շրջապատից, բայց գիտեք, ես գիտակցաբար գիտելիք եմ ստացել՝ ինքս ակտիվ կարդալով, բայց, ի վերջո, կան նաև բերնեբերան փոխանցված բաներ:

(I6. տղամարդ, 46 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

I15-ը նշում է, որ ընդհանուր գիտելիք չունի Հայաստանի և հայերի մասին, և որ իր վրա ազդել են մանկության տարիներին իր շրջապատից լսած օտարող (բացառող) խոսույթները: Հետևաբար հարցվածների մեծ մասը հայերի մասին իմացել է ավանդական աղբյուրների (ընտանիքի ավագների), ժամանակակից թվային հարթակների (սոցիալական մեդիա և Թվիթեր) և նշանակալի իրադարձությունների մասին տեղեկությունների միջոցով: Ազդեցությունների այս բազմազանությունը հուշում է, որ հայերի նկատմամբ նրանց կողմնորոշումը ձևավորվում է ինչպես պատմական նարատիվների, այնպես էլ ժամանակակից խոսույթի միջոցով: Գիտակցելով համադրված պատմույթների ներուժը՝ կարևոր է խթանել ճշգրիտ և հավասարակշռված տեղեկատվությունը՝ խթանելու հայերի վերաբերյալ ավելի տեղեկացված և նրբերանգները հաշվի առնող ընկալումը:

Ընդհանուր առմամբ՝ հարցվածների մեծ մասը նշում է, որ շատ բան չգիտի հայերի և Հայաստանի մասին (օրինակ՝ որպես I1, I2, I7, I8, I9, I12, I13, I14, I15, I16 նույնականացված և այլ հարցվողներ): Հայաստանի և Թուրքիա-Հայաստան հարաբերությունների մասին գիտելիքի սահմանափակությունը կարող է դժվարացնել խնդիրը խորությամբ հասկանալը: Օրինակ՝ I12-ը նշում է, որ ինքը շատ բան չգիտի հայերի և Հայաստանի մասին: Այն, ինչ նա լսել է հայերի մասին, ընդհանուր առմամբ, բացասական և բացառող խոսույթներ են եղել, բայց ինքը չունի նման նախապաշարմունքներ: Նա բերում է հայերի նկատմամբ ատելության պարունակող և բացառող խոսույթների օրինակ:

4. Հայերեն՝ Արճեշ:

Նկատի ունեմ՝ լսել եմ, որ հայերը «վատ մարդիկ» են, կներեք՝ «շներ» են և այլն:

(I12. կին, 33 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Չնայած իր պարագայում այս բացասական ազդեցությանը, հարցվողը որևէ խնդիր չի տեսնում՝ ունենալու հայ ընկեր կամ հարևան, և ասում է, որ թույլ կտա իր որդուն կամ աղջկան ամուսնանալ հայի հետ: Ընդհանուր առմամբ՝ ինչպես և I12-ը, մյուս հարցվողները նույնպես (բացառությամբ ազգայնականների) դրական և հանդուրժող վերաբերմունք ունեն առնվազն անհատական մակարդակում՝ չնայած ընդհանուր գիտելիքի պակասին:

I14-ի վերաբերմունքը հայերի նկատմամբ բնութագրվում է ամուր հավատարմությամբ հավասարության և խտրականության բացառման գաղափարներին: Նա ընդգծում է, որ բոլորի նկատմամբ նույն վերաբերմունքն ունի և հավատում է արդարության ու ներառականության հնարավորությանը: Այս չեզոք դիրքորոշումը, հատկապես պատմական լարվածության համատեքստում, հուշում է պատմական խնդիրները մի կողմ թողնելու և անհատական բնույթի վրա կենտրոնանալու ջանքերի մասին: Պատասխանողի տեսակետներն ընդգծում են ուրիշների նկատմամբ վերաբերմունքի ձևավորման հարցում անձնական արժեքների և սոցիալական նորմերի կարևոր դերը՝ խթանելով միջանձնային հարաբերությունների նկատմամբ առավել ներառական և արդար մոտեցում:

Հարց. Ընդհանրապես ինչ վերաբերմունք ունեք հայերի նկատմամբ:

Պատասխան. Ես բոլորի հանդեպ նույնն եմ, նույնը՝ բոլորի հանդեպ: Ես խտրականություն չեմ դնում անհատների միջև, ես խտրականություն չեմ դնում մարդկանց միջև:

(I14. տղամարդ, 28 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I15-ը նույնպես անհատական մակարդակում բացասական վերաբերմունք չունի հայերի նկատմամբ և խնդիր չունի՝ ունենալու հայ ընկերներ ու հարևաններ, նշում է, որ կարող է գնել Հայաստանում արտադրված ապրանքներ և թույլ տալ, որ իր որդին կամ դուստրը ամուսնանա հայի հետ: I18-ը նույնպես վնաս չի տեսնում հայ ընկեր ունենալու կամ հայի հետ ամուսնանալու մեջ: Նա Հայաստանում արտադրված ապրանքներ գնելու մեջ խնդիր չի տեսնում:

Հարց. Կարո՞ղ եք հայ ընկեր ունենալ:

Պատասխան. Կարող է պատահել, իհարկե, դա նորմալ է:

(I18. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ)

I20-ը ոչ մի վնաս չի տեսնում հայ ընկեր ունենալու կամ հայի հետ ամուսնանալու մեջ: Նա նաև չի վարանում Հայաստանում արտադրված ապրանքներ գնելու հարցում:

Հարց. Օրինակ՝ կգնե՞ք Հայաստանում արտադրված ապրանք:

Պատասխան. Դա կախված է ապրանքից: Բացառությամբ սննդի, կարծում եմ, որ կգնեի, եթե ապրանքը լինի որակյալ և մատչելի:

(I20. տղամարդ, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Որպես I25 նույնականացված հարցվողի արտահայտած տեսակետն ընդգծում է հայերի և թուրքերի միջև խոր պատմամշակութային կապերը: I25-ը ընդգծում է հայերի երկարամյա ներկայությունը Թուրքիայի մշակույթում և երկու խմբերի միջև մշակութային նշանակալի նմանությունները: Այս տեսակետը մատանշում է, որ առկա է դրական հարաբերությունների ներուժ՝ հիմնված ընդհանուր ժառանգության և փոխադարձ հարգանքի վրա, ինչը նշանակում է, որ պատմական և մշակութային կապերը կարող են հիմք ծառայել Թուրքիայի և Հայաստանի ներկայիս հարաբերությունների բարելավման համար:

Երբ մտածում եմ Հայաստանի մասին, մտածում եմ հենց Հայաստանի մասին, կարճ՝ Երևանի հայերի մասին: Նրանք մեր մշակույթում եղել են հին ժամանակներից, իրականում մենք ապրում ենք շատ նման մշակույթներով:

(I25. տղամարդ, 25 տ., համալսարանի շրջանավարտ)

Որպես I28 նույնականացված հարցվողը Հայաստանն ու հայերին ասոցացնում է հիմնականում ոչ մահմեդական լինելու հետ: Այս պատասխանն ընդգծում է, որ կրոնական ինքնությունն ընկալվում է որպես հայերի որոշիչ հատկանիշ, ինչը խոսում է նրանց բազմաբարդ ինքնության պարզունակացման մասին: Կրոնական տարբերությունների շեշտադրումը, հնարավոր է, ազդում է բանախոսի ընկալումների և հայերի նկատմամբ վերաբերմունքի վրա, ինչն ընդգծում է նման տեսակետները վերանայելու և դրանք ընդլայնելու կարևորությունը՝ խթանելու հայկական ինքնության ավելի համապարփակ և ընդգրկուն ըմբռնումը:

Հարց. Ի՞նչ է գալիս ձեր մտքին, երբ մտածում եք Հայաստանի և հայերի մասին:

Պատասխան. Ոչ մուսուլման լինելը:

(I28. տղամարդ, 31 տ., ավագ դպրոցից ցածր)

I29-ը բացասական և զգուշավոր վերաբերմունք ունի Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների վերաբերյալ: Թեև նշում է, որ կարող է գնել հայկական ապրանքներ և ունենալ հայ ընկեր՝ պայմանով, որ նա լավ մարդ է, սակայն դեմ է, որ իր երեխաները ամուսնանան հայի հետ: Թեև հանդես է գալիս Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման օգտին, սակայն կարծում է, որ այդ հարաբերությունները պետք է կառավարել Ադրբեջանի հետ միասին: Անվտանգության հետ կապված մտահոգությունները և պատմական վերապահումները դիտվում են որպես հարաբերությունների կարգավորման ամենամեծ խոչընդոտները:

Հարց. Ի՞նչ է գալիս Ձեր մտքին, երբ մտածում եք Հայաստանի և հայերի մասին:

Պատասխան. Դավաճանություն:

Հարց. Կարո՞ղ եք մի փոքր պարզաբանել, ի՞նչ դավաճանության մասին է խոսքը:

Պատասխան. Օսմանյան ժամանակաշրջանում հայերը մի համայնք էին, որին մենք անվանում էինք հավատարիմ ժողովուրդ: Հետագայում՝ Առաջին համաշխարհային պատերազմի և անկախության պատերազմի ժամանակ, նրանք դավաճանեցին:

(I29. տղամարդ, 23 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվողը, որը նույնականացվում է որպես I34, Հայաստանն իր մտքում գլխավորապես զուգորդում է Ադրբեջանի հետ վերջինիս հակամարտության հետ և հերքում է Հայոց ցեղասպանությունը՝ այն համարելով «բերնեբերան փոխանցված բաներ», որոնց «անհիմն լինելն» ապացուցված է: Այս տեսակետը շեշտադրում է հակամարտությունն ու հակասությունը՝ արտացոլելով ազգայնական տեսակետ, որը կենտրոնանում է պատմական և քաղաքական վեճերի վրա: Այս տեսակետը գերակշռում է ազգայնական հարցվողների մոտ: Պատասխանն ընդգծում է Հայաստան-Ադրբեջան հակամարտության և վիճարկվող պատմական նարատիվների էական ազդեցությունը Հայաստանի վերաբերյալ ընկալումների վրա: Այս վիճելի հարցերին անդրադառնալը և

ավելի հավասարակշռված ընկալման խթանումը կարող են էական քայլեր լինել՝ Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների և փոխըմբռնման բարելավման ուղղությամբ:

Հարց. Ինչ է Ձեր մտքին գալիս, երբ մտածում եք Հայաստանի և հայերի մասին:

Պատասխան. Առաջինը Ադրբեջանն է գալիս, Ադրբեջանի հետ խնդիրներ ունեին: Խոսակցություն կար նաև Հայոց ցեղասպանության մասին, որն արդեն ապացուցվել է, որ անհիմն է:

(I34. տղամարդ, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվող I35-ը նշում է անձնական ընկալման փոփոխության մասին՝ հայությունը («Armenianism») որպես աղանդ դիտելուց դեպի հայերին որպես առանձին ժողովուրդ ճանաչելը: Ընկալման այս շտկումն արտացոլում է տարածաշրջանում հայերի և իրենց համայնքի միջև պատմական համակեցության մասին ավելի լայն իրազեկվածությունը: I35-ի ընկալման առաջընթացը ընդգծում է կրթության և արտաքին ազդեցության ներգործությունը սխալ պատկերացումները շտկելու և էթնիկ ու մշակութային ինքնությունների վերաբերյալ ավելի հարգալից և զգայուն տեսակետ ձևավորեու վրա: Այս իրազեկվածությունը վճռորոշ նշանակություն ունի տարբեր համայնքների միջև հարաբերությունների բարելավման և փոխադարձ հարգանքի ձևավորման համար:

Մինչև մեկ տարի առաջ ես հայությունը գիտեի որպես աղանդ: Արդեն մեկ տարի է՝ գիտեմ, որ նրանք ժողովուրդ են: Այո, ես գիտեմ, որ հին ժամանակներից մենք միասին ենք ապրում այն աշխարհագրական տարածքում, որտեղ ես բնակվում եմ:

(I35. տղամարդ, 30 տ., համալսարանի շրջանավարտ)

I35-ը դրական վերաբերմունք ունի հայերի նկատմամբ և հաշվի է առնում նրանց պատմական զոհականացումը: Սա ցույց է տալիս, թե ինչպես են պատմական իրադարձությունները ձևավորում անհատների ապրումակցումն ու ըմբռնումը: Հարցվողը շատ լավատեսական և դրական վերաբերմունք է հայտնում հայերի նկատմամբ: Նա կարեկցանք ու համակրանք է զգում հայերի նկատմամբ՝ նրանց համարելով պատմական անարդարությունների զոհ: Անձնական կապերը Ստամբուլում և Դիարբեքիրում հայ մարդկանց հետ էլ ավելի են ամրապնդում այս դրական տեսանկյունը: Նրա վերաբերմունքը ներառում է դրական խտրականության տարր, երբ նրանք գիտակցաբար

լավ բաներ են մտածում հայերի մասին և աջակցում նրանց՝ միաժամանակ զգուշանալով, որ դա հովանավորչության տպավորություն չթողնի: Այս տեսակետն ընդգծում է կարեկցանքի, անձնական կապերի և անկեղծ դրական վերաբերմունքի կարևորությունը տարբեր համայնքների միջև փոխըմբռնման և հարաբերությունների բարելավման գործում:

Հարց. Իսկ ընդհանրապես ինչ վերաբերմունք ունեք հայերի նկատմամբ:

Պատասխան. Ես շատ լավատես եմ, չեմ ուզում հովանավորչական թվա, բայց ես այն կողմում եմ, որը մի քիչ ցավում է նրանց համար, քանի որ նրանք զոհ են: Ստամբուլում և Դիարբեքիրում հայ ծանոթներ ունեմ: Ես շատ դրական եմ, նույնիսկ մի քիչ դրական՝ հայերի նկատմամբ դրական խտրականության իմաստով, լավ բաներ եմ մտածում:

Հարց. Կարո՞ղ եք բացատրել, թե ինչ է նշանակում զոհականացում, ինչպիսի՞ զոհականացում:

Պատասխան. Կա այն, ինչ մենք լսել ենք 1915 թվականի դեպքերի մասին, կան մյուս կողմի թեզերը, կան նրանց սեփական թեզերը: Իհարկե, պատմաբանների հետ մենք կարող ենք ճշմարտության հասնել, պատմաբանները կարող են նստել և զրուցել, բայց դա ինձ ստիպում է զգալ, որ նրանք վատ վիճակում են և զոհականացված են:

Հարց. Ինչ եք կարծում՝ ինչպիսի՞ն է թուրքերի վերաբերմունքը հայերի նկատմամբ ընդհանուր առմամբ:

Պատասխան. Կարող եմ ասել, որ թուրքերի վերաբերմունքը հայերի նկատմամբ ահավոր է: Մանկուց նրանց սովորեցնում են, որ նրանք իսկական թշնամի են, նույնիսկ սոցցանցերում, որը մենք բոլորս տեսել ենք, կամ ինչ-որ մեկին վիրավորելիս օգտագործվում է «հայ» բառը և օգտագործվում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսին է «հայի վաստակը»:

(I35. տղամարդ, 30 տ., համալսարանի շրջանավարտ)

Վերադառնալով վիճակագրությանը՝ «Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք հայերի նկատմամբ Ձեր վերաբերմունքը» հարցին ամենահաճախ հանդիպող պատասխանը (39,8%)՝ «Ո՛չ բացասական, ո՛չ դրական»-ն է: Մյուս կողմից՝ մասնակիցների 11,1%-ը շատ բացասական վերաբերմունք է արտահայտում հայերի նկատմամբ, իսկ 30,4%-ը՝ բացասական: Հայերի նկատմամբ դրական վերաբերմունք արտահայտողների դեպքում, սակայն, համանման տոկոսներ չկան. հարցվածների միայն 9,9%-ն է նշում, որ դրական է վերաբերվում հայերին:

Գծապատկեր 14. P17. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք հայերի նկատմամբ Ձեր վերաբերմունքը (n=2010):



Եթե գյուղական բնակավայրերից տեղափոխվում ենք մետրոպոլիսներ, հայերի նկատմամբ դրական վերաբերմունք ունեցողների տոկոսը փոքր-ինչ ավելանում է:

Աղյուսակ 5. Հայերի նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=1878)

	Շատ բացասական	Բացասական	Ո՛չ բացասական, ո՛չ դրական	Դրական	Շատ դրական
Գյուղական (n=147)	17,8%	25,1%	48,2%	8,8%	0,0%
Քաղաքային (n=720)	11,7%	35,7%	40,4%	11,3%	1,0%
Մետրոպոլիսներ (n=1011)	11,5%	31,9%	44,1%	10,5%	2,0%

Ինչպես ցույց է տալիս ստորև բերված աղյուսակը՝ հայերի նկատմամբ շատ բացասական վերաբերմունք արտահայտողների ամենաբարձր ցուցանիշը 51 և ավելի տարեկանների շրջանում է (16%): Մյուս կողմից՝ հայերի նկատմամբ շատ դրական վերաբերմունք ունեցողների ամենաբարձր տոկոսը 15-ից 17 տարեկանների խմբինն է (3,1%):

Աղյուսակ 6. Հայերի նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ հարցվողների տարիքի (n=1877)

	Շատ բացասական	Բացասական	Ո՛չ բացասական, ո՛չ դրական	Դրական	Շատ դրական
15 – 17 (n=89)	5,1%	32,9%	50,5%	8,5%	3,1%
18 – 33 (n=558)	9,7%	26,2%	52,1%	10,3%	1,7%
34 – 50 (n=611)	11,2%	35,1%	43,2%	9,6%	0,9%
51+ (n=619)	16,0%	36,6%	33,5%	12,4%	1,6%

Հարցվածների զգալի մասը կարծում է, որ հայերը բացասական (46,8%) և շատ բացասական (20,5%) վերաբերմունք ունեն թուրքերի նկատմամբ: Ընդամենը 3,6 %-ն է կարծում, որ հայերը դրական են վերաբերվում թուրքերին:

Գծապատկեր 15. P18. Ըստ Ձեզ՝ ընդհանուր առմամբ՝ ի՞նչ վերաբերմունք ունեն հայերը թուրքերի նկատմամբ (n=2017):



Հարցվողներին տրված մեկ այլ հարց էլ հետևյալն է. «Ըստ Ձեզ՝ ընդհանուր առմամբ՝ ինչ վերաբերմունք ունեն թուրքերը հայերի նկատմամբ»: Մենք նկատում ենք ուշագրավ իրողություն, որ թուրքերի նկատմամբ հայերի վերաբերմունքի վերաբերյալ ընկալումները, ըստ երևույթին, փոխկապակցված են հայերի նկատմամբ թուրքերի վերաբերմունքի հետ[5]: Նկատելի է, որ այն հարցվածները, որոնք կարծում են, թե թուրքերը բացասական վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ, շատ հավանական է, որ մտածեն, թե հայերը նույնպես բացասական վերաբերմունք ունեն թուրքերի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ փոխկապակցվածություն կա երկու կողմերի՝ միմյանց վերաբերյալ բացասական ընկալումների միջև:

Ի լրումն՝ թեև տղամարդիկ ավելի շատ են կարծում, որ հայերը շատ բացասական վերաբերմունք ունեն թուրքերի նկատմամբ, քան կանայք, հակառակ միտումն է նկատվում նրանց շրջանում, ովքեր կարծում են, թե հայերը բացասական վերաբերմունք ունեն թուրքերի նկատմամբ:

Աղյուսակ 7. Թուրքերի վերաբերյալ հայերի ընկալվող վերաբերմունքը՝ ըստ հարցվողների սեռի (n=1742)

	Շատ բացասական	Բացասական	Ո՛չ բացասական, ո՛չ դրական	Դրական	Շատ դրական
Արական (n=910)	26,0%	51,8%	17,2%	5,0%	0,0%
Իգական (n=833)	21,6%	57,5%	17,4%	3,2%	0,3%

Ըստ ստորև բերված աղյուսակի՝ ամենից շատ քաղաքաբնակներն են կարծում, որ հայերը շատ բացասական/բացասական վերաբերմունք ունեն թուրքերի նկատմամբ:

5. Քենդալի գործակից=0.440, p-արժեք < 0.001, n=1766:

Աղյուսակ 8. Թուրքերի վերաբերյալ հայերի ընկալվող վերաբերմունքը՝ ըստ հարցվողների բնակավայրի տեսակի (n=1742)

	Շատ բացասական	Բացասական	Ո՛չ բացասական, ո՛չ դրական	Դրական	Շատ դրական
Գյուղական (n=133)	27,7%	42,8%	21,9%	7,6%	0,0%
Քաղաքային (n=648)	26,0%	54,7%	15,3%	3,7%	0,2%
Մետրոպոլիսներ (n=962)	21,9%	56,1%	18,0%	4,0%	0,1%

Ստորև բերված պնդումներին տրված պատասխանները վերլուծելիս երևում է, որ ամենից շատ «միանշանակ այո» պատասխան տրվել է «Ես հպարտ եմ, որ թուրք եմ» դատողությանը (70,6%):

Բացի դրանից՝ հարցվածների 54,6%-ը հավանություն է տալիս «Ես անհանգստացած կլինեի, եթե դուստրս ամուսնանար հայ տղամարդու հետ» պնդմանը, մինչդեռ «Ես անհանգստացած կլինեի, եթե որդիս ամուսնանար հայ կնոջ հետ» դատողությանը հավանություն է տալիս 49,7%-ը:

Ամենից շատ «Դժվարանում եմ պատասխանել» արձագանքը (16,4%) տրվել է «Հայերն ապրում էին Անատոլիայի որոշ շրջաններում մինչև թուրքերի այնտեղ գալը» պնդմանը: Այս պատկերի պատճառը կարող է լինել այն, որ այս դատողությունը պահանջում է գիտելիք պատմությունից:

Գծապատկեր 16. P20. Այժմ կկարդամ մի քանի դատողություն, իսկ Դուք ասացեք, թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է համապատասխանում Ձեր կարծիքին՝ օգտագործելով հետևյալ սանդղակը՝ 1 – միանշանակ ոչ, 5 – միանշանակ այո (n=1999):

Որպես I26 նույնականացված հարցվողն ընդունում և որպես բնականանոն իրողություն ճանաչում է հայերի պատմական ներկայությունը Անատոլիայի որոշ մասերում մինչև թուրքերի ժամանումը: Նա դա դիտարկում է Օսմանյան կայսրության համատեքստում՝ նշելով, որ հույները, ղրղզները և հայերը, հնարավոր է, եղել են առաջին հողատերերից: Ընդհանուր առմամբ՝ հարցվողներն ընդունում են տարածաշրջանի պատմական բազմամշակութայնությունը և հայերի պատմական ներկայությունը: Նմանապես, I26-ի տեսակետն ընդգծում է Անատոլիայի բազմազան էթնիկ ժառանգության ճանաչման և գնահատման կարևորությունը՝ որպես ժամանակակից հարաբերությունները հասկանալու և բարելավելու հիմք:

Հարց. Ինչ կարծիքի եք այն պնդման մասին, որ Անատոլիայի որոշ շրջաններում հայեր են ապրել մինչ թուրքերի այնտեղ գալը:

Պատասխան. Հնարավոր է, իհարկե, քանի որ օսմանյան ժամանակներից հույները, ղրղզները, հայերը, հնարավոր է, եղած լինեն առաջին հողատերերը, ուստի նման բանը նորմալ եմ համարում:

(I26. կին, 24 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցազրույցներից ստացված տվյալների համաձայն՝ մասնակիցների մեծամասնությունը զգուշավոր կամ բացասաբար է վերաբերվում իրենց որդիների կամ դուստրերի ամուսնությանը հայի հետ: Այնուամենայնիվ, որոշ մասնակիցներ ավելի բաց և դրական մոտեցում ունեին: Մյուսները բացասաբար են վերաբերվում հայերի հետ ամուսնությանը պատմական իրադարձությունների և մշակութային տարբերությունների պատճառով: Օրինակ՝ հայերի հանդեպ պատմական նախապաշարմունքները և անցյալի հակամարտությունները նպաստում են նման ամուսնությունների հարցում զգուշավորությանը: Մասնակիցները կարծում են, որ մշակութային և կրոնական տարբերությունները կարող են խնդիրներ առաջացնել: Որոշ մասնակիցներ բացահայտ հայտարարել են, որ անընդունելի է իրենց երեխաների ամուսնանալը հայի հետ:

Ես երբեք թույլ չեմ տա, որ իմ որդին կամ դուստրը ամուսնանան հայի հետ:

(I17. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Ես չեմ կարող հավանություն տալ նման ամուսնությանը կրոնական և մշակութային տարբերությունների պատճառով:

(I4. կին, 43 տ., ավագ դպրոցից ցածր կրթություն,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

I27-ի տեսակետներն արտացոլում են ազգայնական միտումները: Նա հայտարարում է, որ հայկական ապրանք չի գնի, հայ մարդու հետ չի ընկերանա և թույլ չի տա, որ իր երեխաները հայի հետ ամուսնանան: Նշում է, որ հայերին չի վստահում պատմաքաղաքական պատճառներով: Դեմ է սահմանների բացմանը և դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և կարծում է, որ այդ գործընթացները չեն ծառայում Թուրքիայի շահերին:

Հարց. Կգնե՞ք Հայաստանում արտադրված ապրանք:

Պատասխան. Ոչ:

Հարց. Ինչո՞ւ:

Պատասխան. Որովհետև նրանք կոտորում են անմեղ մարդկանց առաջին իսկ հնարավորության դեպքում, ինչպես Խոջալուում 1994 թ.:

Հարց. Կարո՞ղ էիք հայ ընկեր ունենալ:

Պատասխան. Ոչ:

Հարց. Դուք թույլ կտա՞ք, որ ձեր որդին կամ դուստրն ամուսնանա հայի հետ:

Պատասխան. Ոչ:

Հարց. Ինչո՞ւ:

Պատասխան. Ես նախընտրում եմ, որ իմ ազգից լինի:

Հարց. Ի՞նչ եք կարծում՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ընդհանուր սահմանի բացումը ինչպե՞ս կանդրադառնա մեր տնտեսության, մշակույթի կամ անվտանգության վրա:

Պատասխան. Նկատի ունեմ՝ կարծում եմ, որ դա կարող է անվտանգության առումով խնդիրներ առաջացնել: Տնտեսության մեջ դա կարող է մի փոքր մոբիլիզացնել զբոսաշրջությունը, բայց դա անհրաժեշտ չէ:

(I27. տղամարդ, 22 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվածների մի մասը նշել է, որ ամուսնությունը կախված է անհատների համատեղելիությունից և բնավորությունից, և որ իրենց որդին կամ դուստրը կարող են ամուսնանալ հայի հետ՝ անկախ էթնիկ և կրոնական պատկանելությունից: Այս մասնակիցները փաստարկում էին, որ անձնական հարաբերություններում կարևոր է համատեղելիությունը, և որ նախապաշարմունքները պետք է հաղթահարվեն:

Հարցազրույցների այլ մասնակիցներ նշել են, որ կարևոր է հայերի հետ ապրել խաղաղության և հանդուրժողականության պայմաններում, և որ իրենք թույլ կտան իրենց երեխաներին ամուսնանալ հայի հետ:

> Ես կարող եմ թույլ տալ, որ տղաս կամ աղջիկս ամուսնանան հայի հետ, կարևորը անհատների ներդաշնակությունն է:
>
> (I6. տղամարդ, 46 տ., համալսարանի շրջանավարտ, բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Ամուսնության մեջ կարևորը բնավորությունն է, ոչ թե էթնիկ պատկանելությունը կամ կրոնը:
>
> (I8. կին, 22 տ., ավագ դպրոցի շրջանավարտ, բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Մասնակիցների մեծ մասը զգուշավոր կամ բացասական դիրքորոշում է ցուցաբերում հայի հետ իրենց որդիների կամ դուստրերի ամուսնության հարցում: Այնուամենայնիվ, որոշ մասնակիցներ ավելի բաց և հանդուրժող տեսակետի կրող են: Այս տարբեր վերաբերմունքները հիմնված են պատմական իրադարձությունների, մշակութային և կրոնական տարբերությունների և ներդաշնակության ու հանդուրժողականության անհատական ըմբռնումների վրա:

Հարցվածների մեծամասնությունը դրական կամ չեզոք է վերաբերվում հայ ընկեր կամ հարևան ունենալուն: Հայ ընկերներ կամ հարևաններ ունենալուն դրական վերաբերմունքն ընդգծում է անհատական հարաբերություններում ներդաշնակության և հանդուրժողականության կարևորությունը: Այնուամենայնիվ, որոշ հարցվողներ ավելի զգուշավոր են՝ պայմանավորված պատմաան և մշակութային վերապահումներով:

> Իհարկե կարող է լինել: Նկատի ունեմ՝ մարդկանց ազգային պատկանելությունը կամ կրոնական համոզմունքները ինձ համար խոչընդոտ չեն: Ես կարող եմ ընկեր լինել բոլոր նրանց հետ, ում հետ կարող եմ լավ հարաբերություններ ունենալ, վստահել և գնահատել:
>
> (I3. կին, 26 տ., համալսարանի շրջանավարտ, բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Հարց. Ենթադրենք, հանդիպում եք մի մարդու, որը շատ համակրելի է, բայց հայ է, կարո՞ղ եք ընկերություն անել նրա հետ:
>
> Պատասխան. Ես կարող եմ ընկերություն անել:
>
> (I12. կին, 33 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

> Կարող է լինել: Կարևոր է մարդկանց վերաբերմունքը, բնավորությունը, պահվածքը միմյանց նկատմամբ: Հայ ընկեր ունենալն ինձ համար խնդիր չէ:
>
> (I11. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ, բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

I23-ի պատասխաններն արտացոլում են իրատեսական և ոչ խտրական մոտեցում ինչպես որպես սպառող կատարվող ընտրությունների, այնպես էլ անձնական հարաբերությունների առումով: Հայաստանում արտադրված օգտակար ապրանքներ գնելու նրա պատրաստակամությունը և հայ ընկերներ ունենալու հարցում բաց լինելը վկայում են, որ հարցվողը կարևորում է պրակտիկությունն ու անհատական արժանիքները, փոխանակ առաջնորդվելու պատմական կամ էթնիկական կանխակալությամբ: Այս վերաբերմունքը վճռորոշ նշանակություն ունի տարբեր հենք ունեցող մարդկանց միջև դրական փոխազդեցությունների խթանման և փոխըմբռնման ձևավորման համար: Պատասխանողի դիրքորոշումը ցույց է տալիս կառուցողական և ներդաշնակ հարաբերությունների ներուժի առկայությունը՝ ի նպաստ հաշտեցման և համագործակցության:

> Հարց. Կգնե՞ք Հայաստանում արտադրված ապրանք:
>
> Պատասխան. Եթե դա օգտակար է, կգնեմ:
>
> Հարց. Կարո՞ղ եք հայ ընկեր ունենալ:
>
> Պատասխան. Իհարկե, կարող եմ:
>
> (I23. տղամարդ, 61 տ., համալսարանի շրջանավարտ)

I25 հարցվողը ներկայացնում է հայ ընկերների հետ իր հարաբերությունների անձնական պատմությունը: Նա ընդգծում է այդ ընկերների դրական հատկությունները և մշակութային առումով իրենց ընդհանրություններն ու մոտ լինելը: Այս տեսակետն ընդգծում է տարբեր մշակութային խմբերի միջև ինտեգրման և փոխընդունման ներուժը՝ ցույց տալով, որ ընդհանուր մշակութային տարրերը և դրական անձնական հարաբերությունները կարող են

կամրջել պատմական խզվածքները: I25-ի փորձն ընդգծում է կարծրացած էթնիկական ինքնությունների շրջանակներից դուրս նայելու կարևորությունը՝ ընդհանուր լեզու գտնելու և փոխադարձ հարգանքն ու փոխըմբռնումը խթանելու համար:

> Ես ունեմ հայ ընկերներ, բայց այսօր նրանք իրենց որպես հայ չեն տեսնում, այլ որպես քուրդ: Նրանք լավ մարդիկ են, նրանք շատ մոտ են մեր մշակույթին, ես ինքս քուրդ եմ և նրանց տեսնում եմ որպես իմ քրդական մշակույթին շատ մոտ մարդիկ:
>
> (I25. տղամարդ, 25 տ., համալսարանի շրջանավարտ)

Վերադառնալով վիճակագրությանը՝ հարցվածների 21,8%-ը կարծում է, որ թուրքական և հայկական մշակույթները ընդհանրապես մոտ չեն: «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի տոկոսը նույնպես բավականին բարձր է (18,5%): Ի լրումն՝ մենք տեսնում ենք տոկոսների աստիճանական նվազում, երբ մեջտեղի «5» արժեքից (12,9%) շարժվում ենք դեպի «9» (3%-ից պակաս):

Գծապատկեր 17. N25. Ի՞նչ եք կարծում՝ հայկական և թուրքական մշակույթները որքանո՞վ են մոտ միմյանց (n=2012):



Անդրադառնալով որակական ուսումնասիրությանը՝ նկատում ենք, որ մասնակիցների տեսակետները՝ թուրքական և հայկական մշակույթների մոտ լինելու վերաբերյալ, տարբերվում են: Մինչ ոմանք ընդունում են մշակութային նմանությունները, մյուսները նշում են, որ այս երկու մշակույթների միջև զգալի տարբերություններ կան:

> Փաստը, որ մենք ընդհանուր մշակույթից ենք գալիս, թեև մեր կրոնները տարբեր են, մեր սննդի մշակույթը գրեթե նույնն է, հալայները[6], մեր խոսելաձևը, մեր ապրելաձևը, մեր մշակութային կոդերը, փաստը, որ մենք նույն տարածքի օդն ենք շնչում: Այս ամենի առումով՝ ոչ մի տարբերություն չկա Թուրքիայի արևմուտքի և Կենտրոնական Անատոլիայի արևելքի միջև, ես սա ասում եմ գրեթե բոլոր հողերի համար, քանի որ, օրինակ, դուք գիտեք, թե ինչ է լահմաջունը, և նրանք գիտեն, թե ինչ է լահմաջունը:
>
> (I8. կին, 22 տ., ավագ դպրոցի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Այսպես ասեմ՝ մերձությունը միջին մակարդակի վրա է, այսինքն՝ այստեղ նրանց ազդեցությունները կան, հատկապես քրդերի վրա՝ լինեն դրանք հարսանիքներ, թե տարբեր ավանդույթներ: Սնահավատությունները, սնոտիապաշտ հավատալիքները, օրինակ, ասենք ֆոլկլորային իրողությունների առումով, օրինակ՝ հարսանիքները, ուրեմն դրանք էլ իրենց ազդեցությունն ունեն, այսինքն՝ նրանցից մնացած հավատալիքները դեռ այստեղ են... Այո, կան:
>
> (I2. տղամարդ, 33 տ., համալսարանի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Մշակութային առումով մերձություն չեմ տեսնում:
>
> (I4. կին, 43 տ., ավագ դպրոցից ցածր կրթություն,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

6. Հալայը ավանդական ժողովրդական պար է, որը տարածված է Թուրքիայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքի, Բալկանների և Կովկասի տարածաշրջաններում: Դա խմբակային պար է, որը կատարվում է գծով կամ շրջանաձև շարված, երբ պարողները ձեռք ձեռքի կամ թև թևի են տալիս:

Ինչ վերաբերում է հարցմանը, երբ ուսումնասիրում ենք թուրքական և հայկական մշակույթների մերձության մակարդակն՝ ըստ բնակավայրերի տեսակների, նկատում ենք, որ արձագանքները հատկապես տարբերվում են մետրոպոլիսների և քաղաքային բնակավայրերի բնակիչների միջև[7]: Նաև տեսնում ենք, որ ամենից շատ գյուղական բնակավայրերի բնակիչներն են կարծում (33,7%), որ երկրների մշակույթներն ընդհանրապես մոտ չեն:

Գծապատկեր 18. Թուրքական և հայկական մշակույթների մերձության ընկալվող մակարդակը՝ ըստ բնակավայրի տեսակի (n=1637)



7. Թեստ՝ ըստ Դաննեթի, քաղաքային - մետրոպոլիս, P շտկ.=0.009, n=1637

Ի լրումն՝ մենք նպատակ ունեինք որոշարկելու մշակութային նմանությունները՝ մասնակիցներին հարցնելով, թե մշակութային որ ոլորտները, ըստ նրանց, նմանություններ ունեն: Ըստ քանակական ուսումնասիրության արդյունքների՝ ամենաշատ տրված պատասխանը խոհանոցն է (28,6%): Հաջորդում են պատմական ժառանգությունը և ճարտարապետությունը (24,2%), ավանդական հագուստն ու հանդերձանքը (12,9%): Բացի դրանից, կարևոր է նշել, որ ամենաբարձր տոկոսը «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակինն է:

Գծապատկեր 19. N26. Ի՞նչ եք կարծում՝ երկու երկրների միջև մշակույթի ո՞ր ոլորտներում կան նմանություններ (բազմակի ընտրություն, պատասխանները չեն կարդացվել հացվողների համար, n=3755):



Հարցվածների կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց աճում է նաև նրանց տոկոսը, ովքեր խոհանոցը համարում են մշակույթի համանման ոլորտ (21,1%-ից մինչև 43,7%)[8]: Համալսարանի շրջանավարտ ամեն 5 հարցվածից 2-ը կարծում է, որ խոհանոցը երկու ժողովուրդների մշակութային նման ոլորտներից է:

Գծապատկեր 20. Խոհանոցը՝ որպես մշակույթի համանման ոլորտ՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի (n=577)



8. Խի–քառակուսի թեստ Չ, X2=76.254, p < 0.001, n=577

2.2.3. Գոյություն ունեցող գործելակերպեր և փորձառություններ

Զեկույցի այս բաժնում մենք ուսումնասիրում ենք հայերի առնչությամբ հարցվածների գործելակերպերն ու փորձառությունը:

«Երբևէ այցելե՞լ եք Հայաստան» հարցին ի պատասխան գրեթե բոլոր հարցվողները նշել են, որ երբեք չեն այցելել Հայաստան (98,8%):

Գծապատկեր 21. P17. Երբևէ այցելե՞լ եք Հայաստան (n=2022):



Ավելին՝ շփման փորձառությունը կարող է նշանակալից գործոն լինել մարդկանց միջև հարաբերություններում: Քանի որ հայերի վերաբերյալ Թուրքիայի ժողովրդի ընկալումներն ու տեսակետները դիտարկվել են զեկույցի ուսումնասիրության շրջանակում, հարցվողներին նաև հարց է ուղղվել՝ «Երբևէ շփում ունեցե՞լ եք որևէ հայի հետ»: Մինչ հարցվածների 78,2%-ը նշել է, որ երբեք հայի հետ չի շփվել, 19,7%-ը նշել է, որ շփվել է:

Գծապատկեր 22. P15. Երբևէ շփում ունեցե՞լ եք որևէ հայի հետ (n=2024):



Հայերի հետ շփում ունեցածներն ավելի հավանական է, որ դրական վերաբերմունք արտահայտեն նրանց նկատմամբ[9]: Իրենց կյանքի ընթացքում հայի հետ շփում ունեցածների 32,3%-ը (շատ դրական և դրական պատասխանների հանրագումարը) հայտնել է, որ դրական վերաբերմունք ունի հայերի նկատմամբ: Ի հակադրություն՝ հայերի հետ երբևէ չշփվածներից ոչ մեկը «շատ դրական» պատասխան չի տվել, իսկ «դրական» պատասխան տվել է 6,6%-ը: Ավելին՝ շփում չունեցածների 50,8%-ը (շատ բացասական և բացասական պատասխանների հանրագումարը) հայտնել է, որ բացասական վերաբերմունք ունի հայերի նկատմամբ:

Ամփոփելով՝ այս բացահայտումները հուշում են, որ հայերի հետ անձնական շփումները զգալիորեն խթանում են նրանց նկատմամբ դրական վերաբերմունքը, մինչդեռ նման շփումների բացակայությունը կարող է նպաստել բացասական ընկալումների առաջացմանը: Սա ընդգծում է միջանձնային հարաբերությունների և երկխոսությունների խթանման կարևորությունը՝ տարբեր համայնքների միջև խզվածքները կամրջելու և փոխըմբռնումը բարելավելու համար:

Գծապատկեր 23. Վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ ըստ շփման փրձառության (n=1842)



9. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=1300204.500, p-արժեք < 0.001, n=1842

Հարցվողներին տրվել է մեկ այլ հարց՝ հայերի և Հայաստանի նկատմամբ նրանց ընկալումն ու վերաբերմունքը պարզելու համար. «Կգնեիք, արդյոք, ապրանք, որն արտադրված է Հայաստանում»: Մինչ մասնակիցների 46,5%-ը նշել է, որ չի գնի Հայաստանում արտադրված ապրանք, 40,8%-ը հակառակն է ասել:

Գծապատկեր 24. P16. Կգնեի՞ք, արդյոք, ապրանք, որն արտադրված է Հայաստանում (n=2001):



Շարունակելով անդրադառնալ որակական ուսումնասիրության արդյունքներին՝ նկատում ենք, որ, ընդհանուր առմամբ, հայերի հետ մասնակիցների շփումների ինտենսիվությունն ու որակը սահմանափակ է: Այս շփումները հազվադեպ են տեղի ունենում անձնական մակարդակում և հաճախ ստվերվում են պատմական իրադարձություններով:

Հարց. Ինչ է ձեր մտքին գալիս, երբ մտածում եք Հայաստանի և հայերի մասին:

Պատասխան. Ինչ է մտքիս գալիս: Ես այս պահին ոչ մի տեղեկություն չունեմ այդ մասին:

Հարց. Դուք որևէ հայի գիտեք:

Պատասխան. Հմ, ոչ, ես նրանց չեմ տեսել, երբեք չեմ հանդիպել, չգիտեմ:

Հարց. Եղել եք Հայաստանում:

Պատասխան. Իհարկե ոչ:

Հարց. Այսինքն՝ հայկական ապրանքների նկատմամբ կանխատրամադրվածություն չունեք:

Պատասխան. Չունեմ, բայց մտքովս չէր անցնի օգտագործել դրանք, ճիշտն ասած:

Շատ մասնակիցներ նշել են, որ իրենք անձնական մակարդակով քիչ են շփվել հայերի հետ կամ ընդհանրապես չեն շփվել: Մասնակիցներից ոմանք նշել են, որ չունեն հայ ծանոթներ կամ ընկերներ, իսկ մյուսները նշել են, որ աշխատանքի մեջ կամ առօրյա կյանքում չեն հանդիպում հայերի.

Հարց. Հայերի ճանաչել եք, եղել եք Հայաստանում:

Պատասխան. Չեմ եղել, բայց նրանց ճանաչել եմ հեռուստատեսությամբ:

Հարց. Հեռուստատեսությամբ. իսկ ձեր սեփական կյանքում:

Պատասխան. Չէ, գուցե իմ սեփական կյանքում ճանաչել եմ նրանց, բայց ոչ ոք չկա, որ կասի «Ես հայ եմ»:

Այն շրջանները, որտեղ ապրում են մասնակիցները, և պատմական իրադարձությունները ազդում են հայերի հետ նրանց շփման վրա:

Այո, ես նրանց ճանաչում եմ: Ես Կարսից եմ, Կարսում հիմա էլ դեռ շատ հայեր են ապրում:

(18. կին, 22 տ., ավագ դպրոցի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Օրինակ՝ Վանում և դրա շրջակայքում ապրող մասնակիցները նշել են, որ իրենց վրա պատմականորեն ազդել են հայերի հետ հակամարտությունները: Հայերի մասին նրանց լսած պատմությունները և տարածաշրջանի պատմությունը նրանց դրդել են հեռու մնալ հայերից: Կային նաև մասնակիցներ, որոնք ասել են, թե հնարավոր է, որ ունենան հայ հարևաններ կամ ընկերներ, սակայն նրանք հիմնականում նշել են, որ իրենց շփումները սահմանափակ են:

Հարցազրույցներից ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանում արտադրված ապրանքի գնման հարցում հարցվողների վերաբերմունքը տարբեր է: Սակայն, ընդհանուր առմամբ, որոշակի օրինաչափություններ կարելի է նկատել. որոշ հարցվողներ նշել են, որ կգնեն Հայաստանում արտադրված ապրանքը, եթե այն օգտակար և անհրաժեշտ լինի: Այս հարցվողներն առաջնահերթություն են տալիս իրենց պրակտիկ կարիքներին՝ անկախ ապրանքի ծագման երկրից: Օրինակ՝ եթե Հայաստանում արտադրված ապրանքը Թուրքիայում չկա կամ ավելի որակյալ ու մատչելի է, կգնեն:

Եթե Հայաստանում արտադրված ապրանքն արտադրվում է նաև Թուրքիայում, ես, իհարկե, չեմ գնի, բայց եթե այլ տեղ չի արտադրվում, ու պետք է գնենք, ամեն դեպքում կգնենք:

(I9. տղամարդ, 51 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Որոշ հարցվողներ Հայաստանում արտադրված ապրանք չեն ցանկանում գնել պատմական իրադարձությունների և քաղաքական վերապահումների պատճառով: Այս հարցվողները հեռու են Հայաստանում արտադրվող ապրանք գնելու մտքից՝ անցյալի հակամարտությունների և ցեղասպանության հետ կապված պատմույթների պատճառով:

Ես կվարանեի գնել Հայաստանում արտադրված ապրանք, որովհետև Հայաստանից հեռու եմ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների և ցեղասպանության մասին պնդումների պատճառով:

(I11. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Կան նաև հարցվողներ, որոնք հակված են նույն ապրանքը գնել այլ երկրից՝ ապրանքի հայաստանյան ծագման պատճառով: Չեզոք վերաբերմունք ունեցող մասնակիցները նշել են, որ կգնեն Հայաստանում արտադրված ապրանք, եթե դրա որակն ու գինը գոհացնող լինեն: Այս մասնակիցներն ընդգծել են, որ կարևոր չէ, թե որ երկրում է արտադրվել ապրանքը, գլխավորը հենց ապրանքն է: Որոշ մասնակիցներ նշել են, որ իրենք որևէ նախապաշարում չունեն Հայաստանում արտադրվող ապրանքների նկատմամբ և անհրաժեշտության դեպքում կգնեն դրանք:

Ես կգնեի Հայաստանում արտադրված ապրանք, կարևորը ապրանքի որակն ու գինն է: Ծագման երկիրը կարևոր չէ:

(I7. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Հարցվածներից ոմանք բավականին դրական են վերաբերվում Հայաստանում արտադրված ապրանքների գնմանը.

Հարց. Կգնեի՞ք Հայաստանում արտադրված որևէ ապրանք:

Պատասխան. Կգնեի:

(I12. կին, 33 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվողների վերաբերմունքը Հայաստանում արտադրված ապրանք գնելու հարցում տարբերվում է՝ կախված պատմական, քաղաքական և պրակտիկ գործոններից: Ընդհանուր առմամբ՝ միտում կա գնելու ապրանքը, եթե այն օգտակար է և որակյալ: Սակայն հարցվածների մի մասը պատմական իրադարձությունների և քաղաքական վերապահումների պատճառով հեռու է մնում այդ ապրանքներից:

Որոշ հարցվողների (օրինակ՝ I19, I20 և I21) ընկալումը Հայաստանի մասին ամբողջությամբ բացասական է՝ ձևավորված լինելով պատմական իրադարձությունների ազդեցությամբ, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությունը և շարունակվող քաղաքական հակամարտությունները: Այս տեսանկյունն ընդգծում է չլուծված պատմական խնդիրների և ընթացիկ քաղաքական լարվածության խոր ազդեցությունը անհատների վերաբերմունքի վրա: Ուժեղ զգացմունքային արձագանքը և բացասական զուգորդումներն ընդգծում են Հայաստանի և Թուրքիայի միջև հաշտեցման և փոխըմբռնման խթանման հարցում նշանակալի մարտահրավերների առկայությունը: Այս խոչընդոտների հաղթահարման համար անհրաժեշտ կլինի անդրադառնալ պատմական դժգոհություններին, խթանել երկխոսությունը և վստահություն ձևավորել համագործակցային ջանքերի միջոցով՝ ուղղված ընդհանուր եզրեր գտնելուն և կայուն լուծումների հասնելուն:

Երբ մտածում եմ Հայաստանի մասին, առաջին բանը, որ գալիս է մտքիս, ցեղասպանությունն է, համաձայնության բացակայությունը, համաձայնության հասնելու անկարողությունը, երկրների միջև կռիվ, հակամարտություն, նման վատ բառեր:

(I19. կին, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Ըստ I21-ի՝ Հայաստանի և հայերի մասին ընկալումը հիմնականում ձևավորվում է Հայոց ցեղասպանության պատմական իրադարձության ազդեցությամբ.

Երբ մտածում ենք Հայաստանի և հայերի մասին, սովորաբար մտածում ենք ցեղասպանության մասին:

(I21. կին, 31 տ., համալսարանի շրջանավարտ)

Այս խնդիրների լուծումը պահանջում է ջանքեր՝ ընդլայնելու հեռանկարները կրթության, մշակութային փոխանակման և բաց երկխոսության միջոցով, որոնք հաշվի են առնում պատմական դժգոհությունների փաստը՝ միաժամանակ խթանելով միմյանց ինքնության և պատմության ավելի համապարփակ ըմբռնումը:

Հարց. Ինչը կբարձրացներ հայերի և թուրքերի միջև փոխվստահության մակարդակը:

Պատասխան. Մարդիկ պետք է հասկանան միմյանց:

(I21. կին, 31 տ., համալսարանի շրջանավարտ)

I22-ի՝ Հայաստանի մասին ունեցած ընկալման մեջ գերակշռում են փակ սահմանները և երկու երկրների միջև հաղորդակցության բացակայությունը: Այս տեսակետն ընդգծում է ֆիզիկական և խորհրդանշական խոչընդոտները, որոնք խանգարում են շփմանն ու փոխըմբռնմանը: Փակ սահմանները չլուծված պատմական և քաղաքական խնդիրների հետևանք են, ինչը նպաստում է մեկուսացման և տարանջատվածության զգացմանը: Դիվանագիտական ջանքերի միջոցով այս խոչընդոտների լուծումը և հաղորդակցության ու փոխանակման խթանումը կարող է ճանապարհ հարթել հարաբերությունների բարելավման և ընկալումների փոփոխության համար: Հարցվողի պատասխանն ընդգծում է սահմանների բացման, երկխոսության խթանման և երկու հանրությունների միջև կամուրջների կառուցմանն ուղղված նախաձեռնությունների հրատապ անհրաժեշտությունը:

Երբ մտածում եմ Հայաստանի մասին, մտածում եմ փակ սահմանների մասին. ոչ մի հաղորդակցություն, ոչ ոք չի կարող այնտեղից այստեղ գալ, և ոչ ոք չի կարող գնալ այստեղից այնտեղ:

(I22. կին, 23 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I22-ի տեսակետն այն մասին, թե արդյոք Թուրքիան և Հայաստանը պետք է խաղաղ ապրելու ճանապարհ գտնեն, կրում է Թուրքիայի համար օգուտների պրագմատիկ գնահատականի ազդեցությունը: Նա Հայաստանն ընկալում է որպես Թուրքիային սահմանափակ գլոբալ ներդրումներ առաջարկող երկիր, սակայն ընդունում է, որ առևտրային ուղիների բացումը կարող է շահավետ լինել Հայաստանի համար: Այս հեռանկարն ընդգծում է խաղաղության նկատմամբ գործարքային մոտեցումը, որտեղ տնտեսական համագործակցությունը՝ հատկապես առևտրի միջոցով, դիտվում է որպես բարելավված հարաբերությունների առավել շոշափելի և շահավետ արդյունք: Հարցվողի դիրքորոշումն արտացոլում է նրա կենտրոնացումը պրակտիկ օգուտների վրա, այլ ոչ թե ավելի լայն դիվանագիտական կամ մշակութային հաշտեցման ջանքերի՝ ենթադրելով, որ տնտեսական խթանները կարող են հիմնական շարժիչ ուժը լինել՝ երկու երկրների միջև հարաբերությունների հնարավոր բարելավման համար:

Հարց. Կարծո՞ւմ եք, արդյոք, որ Թուրքիան և Հայաստանը հարևաններ են, և պետք է խաղաղ ապրելու ճանապարհ գտնեն:

Պատասխան. Այլ կերպ ասած՝ քանի որ Հայաստանը կարծես թե այն կետը չէ, որ գլոբալ առումով Թուրքիային օգուտ է տալու, կարծում եմ, որ Հայաստանի համար է ավելի ձեռնտու, որ Թուրքիան առևտրային ճանապարհի հնարավորություն ապահովի Հայաստանի համար, այսինքն՝ դրա կարիքն այնքան էլ չկա:

(I22. կին, 23 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվողը, որը նույնականացված է որպես I29, հոռետեսական տեսակետ է հայտնում Թուրքիայի և Հայաստանի միջև խաղաղության և հակամարտության կարգավորման հնարավորության վերաբերյալ: I29-ը որպես Հայաստանի հետ խաղաղ ապրելու ճանապարհ գտնելու դեմ իր դիրքորոշման հիմնական պատճառներ մատնանշում է Ադրբեջան-Հայաստան շարունակվող լարվածությունը և Թուրքիայի բարեկամությունը Ադրբեջանի հետ: Բացի դրանից՝ հարցվողն անդրադառնում է Թուրքիայի և Հայաստանի միջև երկարատև թշնամանքին, ինչը վկայում է այն ընկալման մասին, որ խոր արմատներ ունեցող այս պատմական հակադրությունը դժվար է հաղթահարել: Այս տե-

սակետն ընդգծում է տարածաշրջանային դաշինքների և պատմական հակամարտությունների զգալի ազդեցությունը ներկայիս վերաբերմունքի վրա և ցույց է տալիս, որ այս խոչընդոտների հաղթահարումը կպահանջի էական ջանքեր՝ հաղթահարելու ինչպես պատմական դժգոհությունները, այնպես էլ ժամանակակից քաղաքական շարժընթացը:

Հարց. Քանի որ հայերը մեր հարևաններն են, ի՞նչ եք կարծում՝ մենք պե՞տք է նրանց հետ հաշտ ապրելու ճանապարհ գտնենք:

Պատասխան. Ոչ, քանի որ Ադրբեջան-Հայաստան լարվածությունը դեռ շարունակվում է, և Ադրբեջանը մեր բարեկամն է:

Հարց. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները լուծելի՞ են:

Պատասխան. Չեմ կարծում, որովհետև մենք շատ երկարամյա թշնամություն ունենք:

(I29. տղամարդ, 23 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվողը, որը նույնականացված է որպես I30, կարծում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմի ավարտը կարևոր նախապայման է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման համար: Այս տեսակետն ընդգծում է Հայաստան-Ադրբեջան հակամարտության զգալի ազդեցությունը Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վրա և արտացոլում է տարածաշրջանային խնդիրների փոխկապակցվածությունը: Պատասխանն ընդգծում է տարածաշրջանում խաղաղության և կայունության անհրաժեշտությունը՝ որպես երկկողմ հարաբերությունների բարելավման հիմնարար քայլ: Այս տեսակետը հուշում է, որ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերը կարող են ճանապարհ հարթել Թուրքիայի և Հայաստանի ավելի կառուցողական հարաբերությունների և հաշտեցման համար:

Հարց. Ձեր կարծիքով՝ ի՞նչ նախապայմաններ պետք է կատարվեն Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման համար:

Պատասխան. Դա կարող է լինել Ադրբեջանի հետ պատերազմի ավարտը:

(I30. կին, 49 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I23-ի վերաբերմունքը հայերի նկատմամբ բնութագրվում է ընդհանրական և ոչ խտրական մոտեցմամբ: Նա ընդգծում է, որ հայերին վերաբերվում է այնպես, ինչպես բոլորին, ինչը ցույց է տալիս, որ նրա տեսակետը հիմնված է հավասարության և ներառականության սկզբունքի վրա: Այս վերաբերմունքը ենթադրում է հայերի հետ դրական մոտեցմամբ շփվելու պատրաստակամություն՝ մի կողմ թողնելով պատմական դժգոհությունները և կենտրոնանալով անհատական բնույթի վրա: Նման դիրքորոշումը ամուր հիմք է ստեղծում մշակութային կամ էթնիկ տարբեր հենք ունեցող անհատների հաշտեցման և նրանց միջև կառուցողական հարաբերություններ հաստատելու համար:

Հարց. Իսկ ընդհանրապես ի՞նչ վերաբերմունք ունեք հայերի նկատմամբ:

Պատասխան. Նույն կերպ եմ վերաբերվում, ինչպես բոլորին ընդհանրապես:

(I23. տղամարդ, 61 տ., համալսարանի շրջանավարտ)

2.2.4. Համագործակցության հնարավոր ոլորտներ

Այս բաժինը տեղեկություն է տրամադրում հասարակությունների և երկրների միջև հնարավոր համագործակցության մասին: Քանի որ հարցումը նաև ձգտում է հասկանալ հասարակությունների և երկրների միջև հնարավոր համագործակցության ներուժը, կարևոր է կենտրոնանալ այն ոլորտների վրա, որոնք կարող են շարժիչ ուժ լինել այս համագործակցության համար: Բաժնի քանակական և որակական բացահայտումներով մենք փորձում ենք լույս սփռել հարաբերությունների կարգավորման գործընթացի առաջընթացի հնարավոր ուղիների վրա:

Հիմնվելով որակական ուսումնասիրության արդյունքների վրա՝ մենք նկատեցինք, որ հարցվողների տեսակետները Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացման տնտեսական հետևանքների վերաբերյալ բազմազան են և համապարփակ:

> Անվտանգության առումով չեմ կարծում, որ որևէ բացասական բան կլինի, քանի՞ խնդիր կարող ենք ունենալ: Կարծում եմ՝ տնտեսական և մշակութային առումով դա դրական ազդեցություն կունենա:
>
> (I8. կին, 22 տ., ավագ դպրոցի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Տնտեսական առումով, կարծում եմ, դա չեզոք է դրական մշակութային իմաստով, քանի որ, ինչպես ասացի, որոշ բաներ արդեն մոտ են իրար: Գուցե շատ մոտ տարածաշրջանի մեկ-երկու փոքր բնակավայր կարող են մեր ու նրանց ազդեցության տակ ընկնել, բայց անվտանգության առումով ես որոշ կասկածներ ունեմ:
>
> (I9. տղամարդ, 51 տ., համալսարանի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Հարցվածների մեծ մասը համաձայն էր, որ սահմանի բացումը դրական տնտեսական ազդեցություն կունենա: Այդ դրական ազդեցությունների թվում են առևտրի աճը, զբոսաշրջության աշխուժացումը և տնտեսական համագործակցության բարելավումը: Մասնավորապես, կարող են ընդլայնվել սահմանամերձ շրջաններում ապրող մարդկանց տնտեսական շփումները: Այնուամենայնիվ, որոշ հարցվողներ անվտանգության հետ կապված մտահոգություններ են հայտնել և կարծում են, որ սահմանի բացումը կարող է անվտանգությանն առնչվող խնդիրներ ստեղծել: Սակայն կան նաև տեսակետներ, որ անվտանգության հետ կապված մտահոգությունները կարող են նվազագույնի հասնել, եթե սահմանը բացվի վերահսկելի ձևով:

I12-ը մերժում է հայերի մասին բացասական խոսույթները և նշում, որ բաց է անհատական մակարդակով հարաբերությունների համար: Սակայն հայաստանցիների՝ Թուրքիայում բնակություն հաստատելուն նրա դեմ լինելն արտացոլում է նրա մշակութային և ժողովրդագրական մտահոգությունները:

> Հարց. Դուք հավանություն տալի՞ս եք Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը:
>
> Պատասխան. Սահմանի բացո՞ւմ: Մշակույթի և զբոսաշրջության առումով խնդիր չեմ տեսնում, բայց չէի ցանկանա բնակեցումներ և այլն:
>
> (I12. կին, 33 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվողը, որը նույնականացված է որպես I24, հանգամանալից տեսակետ ունի Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման հնարավորության վերաբերյալ: Ընդունելով պատմական լարվածությունը՝ նա համոզմունք է հայտնում, որ կարգավորումը հնարավոր է մեր օրերում: Այնուամենայնիվ, ընդգծում է, որ այս գործընթացը խորապես քաղաքական է և պահանջում է ավելի լայն միջազգային համագործակցություն՝ նշելով, որ Թուրքիան միայնակ, հատկապես ներկայիս կառավարության օրոք, չի կարող հասնել դրան: Այս տեսակետն ընդգծում է դիվանագիտական ջանքերը խոչընդոտող բարդություններն ու մարտահրավերները և երկարատև հակամարտությունների կարգավորման հարցում միջազգային կոնսենսուսի կարևորությունը:

> Նկատի ունեմ՝ կարելի է կարգավորել, իհարկե, նախկինում եղել են միջադեպեր, կարելի է կարգավորել մեր օրերում… Սա մի քիչ քաղաքականության հետ կապված բան է: Պետք է ընդհանուր կոնսենսուս ձեռք բերել այլ երկրների հետ: Դա այն բանը չէ, որ Թուրքիան կարող է միայնակ անել ներկայիս իշխանության պայմաններում:
>
> (I24. կին, 48 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Նրա՝ Թուրքիայում հայաստանցիների բնակեցմանը ընդդիմանալն արտացոլում է մշակութային բազմազանության և ժողովրդագրական փոփոխությունների վերաբերյալ մտահոգությունները: Այնուամենայնիվ, նա դեմ է հայերի հանդեպ նախապաշարմունքներին: Պարզ է, որ ավելի շատ տեղեկատվության և կրթության դեպքում նախապաշարմունքները կարող են ամբողջությամբ հաղթահարվել, և կարող է ավելի ներառական մոտեցում ձևավորվել: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացվող մշակութային միջոցառումներին մասնակցելը կա-

րող է օգնել, որ I12-ի նման անհատներն ավելի շատ գիտելիք ձեռք բերեն և հաղթահարեն իրենց նախապաշարմունքները:

Ընդհանուր առմամբ՝ հարցվողների տեսակետներն արտացոլում են հանդուրժողական և կառուցողական վերաբերմունք: Թեև նրանք գիտելիք չունեն, սակայն նկատելի է, որ այդ վերաբերմունքը կարող է ավելի դրականորեն զարգանալ կրթության և իրազեկման բարձրացման միջոցով: Թուրքիայի ակտիվ դերը դիվանագիտական հարաբերություններում և միջոցառումների կազմակերպումը ոչ կառավարական կազմակերպությունների կողմից կարող է նպաստել Թուրքիայի ժողովրդի՝ ավելի գիտակից և ոչ նախապաշարմունքային մոտեցումների ձևավորմանը:

Պատասխանողը, որը նշված է որպես I25, միանշանակ կողմ է Հայաստանի և հարևան այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը: Նա ընդգծում է ընդհանուր աշխարհագրությունը և մշակութային նմանությունները՝ որպես նման հարաբերությունների համոզիչ պատճառներ, և քննադատում է դիվանագիտական գործընթացների ներկայիս բացակայությունը՝ համարելով այդ իրավիճակը չպատճառաբանված: Այս տեսակետը շեշտում է տարածաշրջանային համագործակցության կարևորությունը և քաղաքականության փոփոխության անհրաժեշտությունը՝ առաջնահերթություն տալու դիվանագիտական հարաբերություններին՝ ի շահ ներգրավված բոլոր կողմերի: Բանախոսի տեսակետն ընդգծում է, որ առկա է փոխըմբռնման և համագործակցության ներուժ՝ հիմնված ընդհանրությունների վրա՝ պաշտպանելով ավելի բաց և համագործակցող տարածաշրջան ունենալու հեռանկարը:

> Հարց. Հայաստանի հետ պե՞տք է դիվանագիտական հարաբերություններ հաստատել:
>
> Պատասխան. Իհարկե, դրանք պետք է հաստատվեն ոչ միայն Հայաստանի, այլև բոլոր հարևանների հետ: Ի վերջո, մենք կիսում ենք նույն աշխարհագրությունը, ունենք նման մշակույթներ, ուստի ծիծաղելի է, որ դա տեղի չի ունեցել մինչ այսօր:
>
> (I25. տղամարդ, 25 տ., համալսարանի շրջանավարտ)

Հարցման քանակական արդյունքների հիման վրա՝ հարցվածների 36,6%-ն այնքան էլ հավանական չի համարում առաջիկա 5 տարիներին երկխոսության և հաղորդակցության միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը, մինչդեռ հարցվածների 21,4%-ն ավելի լավատես է՝ նշելով, որ կարգավորումը որոշ չափով հավանական է:

Գծապատկեր 25. N23. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք երկխոսության և հաղորդակցման միջոցով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հավանականությունը առաջիկա 5 տարիներին (n=2007):



Հարցվածների 36,8%-ն ասում է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրները որոշ չափով լուրջ են, իսկ 22,6%-ը խնդիրները միանգամայն լուրջ է համարում: Մյուս կողմից՝ մարդկանց 14,3%-ը կարծում է, որ խնդիրներն այնքան էլ լուրջ չեն:

Գծապատկեր 26. N24. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները որքանո՞վ են լուրջ (n=1997):



Հարցվածների կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ ավելանում է նաև երկրների միջև առկա խնդիրները միանգամայն լուրջ համարողների տոկոսը[10]: Այն 25,6% է ավագ դպրոցից ցածր կրթություն ունեցողների շրջանում: Ավագ դպրոցի շրջանավարտների շրջանում այն հասնում է 30,9%-ի, իսկ բուհերի շրջանավարտների մոտ՝ 31,2%-ի:

Գծապատկեր 27. Թուրքիայի և Հայաստանի միջև խնդիրների լրջությունը՝ ըստ հարցվածների կրթական մակարդակի (n = 1586)



10. Կռուսկալ-Ուոլլիսի թեստ, H=9.781, p-արժեք=0.008, n=1586

Ինչպես երևում է ստորև ներկայացված գծապատկերից՝ հարցվածնե-րի 27,2%-ի համար ընդհանրապես ընդունելի չէ երկրների միջև սահմանի բացումը: Ամենացածր տոկոսը պատկանում է այն հարցվածներին, որոնք լիովին հավանություն են տալիս Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը (11,8%):

Գծապատկեր 28. N28. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը (n=2016):



Պատասխաններն ըստ հարցվածների սեռի վերլուծելիս նկատում ենք, որ երկրների միջև սահմանի բացմանը հավանություն տվողների տոկոսն ավելի բարձր է տղամարդկանց շրջանում, քան կանանց[11]: Մյուս կողմից՝ կին հարցվածների 34,4%-ի համար սահմանի բացումն ընդհանրապես ընդունելի չէ, մինչդեռ տղամարդ հարցվողների մոտ այդ ցուցանիշը 26,9% է:

Գծապատկեր 29. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ հարցվածների սեռի (n=1817)



11. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=740966.500, p-արժեք < 0.001, n=1817

Ավելին՝ երկրների միջև սահմանի բացմանը հավանություն տվողների տոկոսը շատ ավելի մեծ է այն հարցվածների շրջանում, որոնք երբևէ շփում ունեցել են հայերի հետ[12]: Մինչ նրանց 29,6%-ի համար լիովին ընդունելի է սահմանի բացումը, այդ ցուցանիշը 9% է այն մարդկանց շրջանում, ովքեր երբեք չեն շփվել հայերի հետ:

Գծապատկեր 30. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը հավանություն տալու մակարդակը՝ ըստ շփման փորձառության (n=1788)



Մենք փորձել ենք մանրամասնել այս հարցը՝ հարցվողներին հարցնելով, թե ինչի վրա կազդի երկրների միջև սահմանների փոխադարձ բացումը: Հարցման արդյունքների համաձայն՝ մարդկանց 40,9%-ը կարծում է, որ այս զարգացումը միանշանակ բացասական կլինի Թուրքիայի անվտանգության համար: Սա ամենաբարձր ցուցանիշն է մյուս տարբերակների համեմատ: Երկրորդ ոլորտը, որի վրա, ըստ հարցվողների, ազդեցությունը միանշանակ բացասական կլինի, Թուրքիայի մշակույթն է (30,4%):

Մյուս կողմից՝ մարդկանց 15,1%-ը կարծում է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի փոխադարձ բացումը լիովին դրական ազդեցություն կունենա Թուրքիայի տնտեսության վրա: Երկրորդ ոլորտը, որի վրա լիովին դրական ազդեցություն է ենթադրվում, ըստ հարցվողների, երկրների միջև հարաբերությունների կարգավորումն է (12,5%):

Գծապատկեր 31. N29. Ձեր կարծիքով՝ Հայաստանի և Թուրքիայի ընդհանուր սահմանների բացումը ի՞նչ ազդեցություն կունենա... (n=1999):



12. Թեստ՝ ըստ Ուիլքոքսոնի, W=1246226.500, p-արժեք < 0.001, n=1788

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման վերաբերյալ մասնակիցների շրջանում տարբեր տեսակետներ կան: Որոշ մասնակիցներ կարծում են, որ կարգավորումը հնարավոր է, և որ դրա համար կարևոր են ապրումակցումը, մշակութային գործունեությունը և քաղաքացիական հասարակության նախագծերը: Մյուս կողմից՝ որոշ մասնակիցներ նշում են, որ կարգավորումը դժվար է կամ հնարավոր չէ աշխարհաքաղաքական իրավիճակների և արտաքին ուժերի ազդեցության պատճառով: Այս տարբերություններն արտացոլում են Թուրքիայի և Հայաստանի ժողովուրդների միջև պատմական, մշակութային և քաղաքական շարժընթացի բազմաբարդությունը:

Նրանք կարող են շատ բաների հասնել՝ ապրումակցելով: Նույնիսկ եթե մենք փորձենք կարգավորել, դրսից ինչ-որ մեկը իր իշխանության սահմաններում ամեն ինչ կանի՝ ազդելու կամ կանխելու այդ կարգավորումը:

(I9. տղամարդ, 51 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Չեմ կարծում, որ դա հնարավոր է լուծել ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում:

(I7. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ,
բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

I18-ի հարցազրույցը ցույց է տալիս, որ նա դրական է վերաբերվում Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը: Անհատական մակարդակով նա բացասական վերաբերմունք չունի հայերի նկատմամբ և կողմ է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը.

Այս դիվանագիտական հարաբերությունը հաղորդակցություն է, լինի դա դրական, թե բացասական, կարելի է հաստատել, ինչո՞ւ ոչ:

(I18. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ)

I19-ը պայմանական աջակցություն է հայտնում Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում՝ ընդգծելով իրական և փոխշահավետ փոխգործակցության անհրաժեշտությունը: Նա զգուշացնում է պատեհապաշտության անթույլատրելիության մասին և կարևորում հարաբերություններին դրական տրամադրվածությամբ մոտենալը: Արձագանքն արտացոլում է հանգամանալից տեսակետ, որը հավասարակշռում է լավատեսությունը զգուշավորությամբ՝ ջատագովելով դիվանագիտական արդյունքների հասնելու հարցում ակտիվ և կշռադատված մոտեցումը: Այս տեսակետն ընդգծում է երկկողմ հարաբերությունների բարելավման ներուժը՝ պայմանով, որ երկու կողմերն էլ իրենց փոխհարաբերություններում հավատարիմ կմնան արդարության և բարեխղճության սկզբունքներին:

Հարց. Ի՞նչ եք կարծում՝ Հայաստանի հետ պե՞տք է դիվանագիտական հարաբերություններ հաստատել և ինչպե՞ս:

Պատասխան. Կարող է լավ լինել, եթե հաստատվեն, բայց դա չպետք է հիմնված լինի սեփական շահի վրա: Մի՛ թողեք, որ վատ լինի, այնպես արեք, որ լավ լինի և մնա լավ:

(I19. կին, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I22 հարցվողի տեսակետը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ անորոշ է և պայմանականորեն աջակցող: Նրա դիրքորոշումը երկիմաստ է՝ ընդունում է հնարավոր օգուտները, սակայն կասկածի տակ է դնում նման հարաբերությունների անհրաժեշտությունն ու իրագործելիությունը: Այս տեսակետը ձևավորող էական գործոններ են Ադրբեջանի հետ սերտ հարաբերությունները և ազգայնական տրամադրությունների ազդեցությունը: Հարցվողն ակնարկում է, որ եթե Թուրքիան ընկալեր, որ Հայաստանից զգալի քաղաքական կամ տնտեսական օգուտներ կարող են լինել, նրա դիրքորոշումը կարող էր տարբերվել: Սակայն նման օգուտների բացակայության պայմաններում հարաբերությունների ներկայիս սահմանափակ վիճակը դիտվում է որպես ընդունված իրողություն: Այս վերլուծությունն ընդգծում է պրագմատիկ նկատառումների, պատմական դաշինքների և ազգայնական տրամադրությունների բարդ փոխազդեցությունը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքի ձևավորման գործում:

Հարց. Ինչ եք կարծում՝ Հայաստանի հետ պետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատել:

Պատասխան. Նկատի ունեմ՝ չգիտեմ, թե ինչ շահերից ելնելով կարելի է զարգացնել դիվանագիտական հարաբերությունները: Կարծում եմ՝ ավելի լավ կլիներ, որ հաստատվեին, բայց պետք է հաստատվեն: Կարծում եմ՝ Թուրքիան չէր բռնի այդ դիրքը, եթե նույնիսկ անհրաժեշտ լիներ հաստատումը: Նկատի ունեմ՝ ազգայնականների մեծամասնության համար Ադրբեջանի դիրքորոշումը կամ Ադրբեջանի կողմից լինելը կարևոր է, բայց երբ մտածում ես այդ մասին, կարծում եմ, որ Թուրքիան չէր բռնի այդ կողմը, եթե Հայաստանից քաղաքական կամ տնտեսական օգուտ ունենար: Այնպես որ՝ կարծում եմ՝ դա այնքան էլ կարևոր չէ:

(I22. կին, 23 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I13-ը վստահ է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները պետք է կարգավորվեն, և կարծում է, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը շահավետ կլինի: Այնուամենայնիվ, նա երկմտում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության առումով և նշում է, որ պատմական վեճերը դժվար է լուծել: Նա կարծում է, որ տնտեսական և էներգետիկ համագործակցությունը կարելի է խթանել փոխշահավետ համագործակցության շրջանակներում:

Հարց. Ինչ եք կարծում՝ Հայաստանի հետ պետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատել:

Պատասխան. Հետագայում, կարծում եմ, դա մեզ համար կարող է ձեռնտու լինել, ի վերջո, դա հարևան երկիր է, ինչո՞ւ պետք է պատերազմի մեջ լինենք կամ վատ հարաբերություններ ունենանք: Դա կարող է շահավետ լինել նաև մեր երկրի համար:

(I13. կին, 59 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Թեև I16-ը հստակ տեսակետ չունի այն մասին՝ պետք է հաստատել դիվանագիտական հարաբերություններ, թե ոչ, նա կարծում է, որ բոլորը պետք է խաղաղ ապրեն, քանի որ ինքը չարամիտ մարդ չէ:

Ես չգիտեմ, նկատի ունեմ՝ մենք բոլորս մարդ ենք, չգիտեմ, ես չեմ կարող վատ մտածել, որովհետև ես երբեք հետին միտք ունեցող վատ մարդ չեմ եղել:

(I16. կին, 40 տ., ավագ դպրոցից ցածր կրթություն)

Որպես I26 նույնականացված հարցվողը Թուրքիայի և Հայաստանի միջև ընդհանուր սահմանի բացումը հիմնականում դիտարկում է՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Նա կարծում է, որ նման գործողությունը կարող է հանգեցնել Հայաստանի կողմից եկող՝ անվտանգության հետ կապված խնդիրների: Այս տեսակետն ընդգծում է զգալի անվստահությունն ու վախը, որը պահպանվում է պատմական հակամարտությունների և քաղաքական լարվածության պատճառով: Բանախոսի ուշադրության սևեռումը անվտանգության խնդիրների վրա ընդգծում է վստահության ամրապնդման միջոցառումների և երաշխիքների անհրաժեշտությունը՝ այս մտահոգությունները հաղթահարելու, սահմանների բացման ու երկկողմ հարաբերությունների բարելավման շուրջ քննարկումների համար առավել բարենպաստ միջավայր ստեղծելու համար:

Հարց. Ինչ եք կարծում՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ընդհանուր սահմանի բացումը ինչպես կանդրադառնա մեր տնտեսության, մշակույթի կամ անվտանգության վրա:

Պատասխան. Նկատի ունեմ՝ կարծում եմ, որ դա կարող է անվտանգության առումով խնդիրներ առաջացնել:

Հարց. Ո՞ւմ կողմից դա կարող է խնդիր լինել:

Պատասխան. Կարծում եմ՝ Հայաստանից:

(I26. կին, 24 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցման մասնակիցներին հարց է տրվել նաև, թե Թուրքիան և Հայաստանը որ ոլորտներում կարող են հարաբերություններ հաստատել: Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից՝ «Ոչ» պատասխանի ամենաբարձր ցուցանիշ ունեցող ոլորտը ռազմականն է (65,8%): Այս տարբերակին հաջորդում է քաղաքականությունը (40,9%): Մյուս կողմից՝ «Այո» պատասխանի ամենաբարձր ցուցանիշ ունեցող ոլորտներն են, համապատասխանաբար՝ «տնտեսություն և էներգետիկա» (53,9%), «տրանսպորտ և շրջակա միջավայր» (51%) և «մշակույթ և տուրիզմ» (50,2%):

Գծապատկեր 32. N32. Ի՞նչ եք կարծում՝ մեր երկրները հետևյալ ոլորտներում կարո՞ղ են ունենալ հարաբերություններ, թե՞ ոչ (n=1980):



Այն մարդկանց թիվը, որոնք կարծում են, թե երկրները կարող են հարաբերություններ հաստատել ռազմական ոլորտում, մի փոքր ավելի բարձր է տղամարդկանց շրջանում, քան կանանց:

Աղյուսակ 9. Երկու երկրների միջև ռազմական հարաբերությունների հաստատման վերաբերյալ տեսակետները՝ ըստ հարցվողների սեռի (n=1588)

	Այո	Ոչ
Կին (n=729)	13,8%	86,2%
Տղամարդ (n=859)	17,8%	82,2%

Ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողների շրջանում ավելի շատ են մարդիկ, որոնք կարծում են, թե երկու երկրները կարող են համագործակցել ռազմական ոլորտում (տարբերությունը, թեպետ, փոքր է):

Աղյուսակ 10. Երկու երկրների միջև ռազմական հարաբերությունների հաստատման վերաբերյալ տեսակետները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի (n=1584)

	Այո	Ոչ
Ավագ դպրոցից ցածր (n=645)	14,5%	85,5%
Ավագ դպրոց (n=559)	15,4%	84,6%
Համալսարան (n=380)	19%	81%

Հարցվածները միանգամայն կարևոր (47,8%) կամ ավելի շուտ կարևոր (17,4%) են համարում Թուրքիայի կառավարության դերը հարաբերությունների կարգավորման հարցում: «Միանգամայն կարևոր է» պատասխանի երկրորդ ամենաբարձր տոկոսը կազմում են նրանք, ովքեր նշել են հարաբերությունների կարգավորման հարցում Հայաստանի կառավարության դերը (29,3%): Այսպիսով՝ նկատում ենք, որ հարցվողները կարգավորման գործում ամենակարևոր դերակատարներ են համարում Թուրքիայի և Հայաստանի կառավարություններին: Կարևոր է նաև նշել, որ «Դժվարանում եմ պատասխանել» պատասխանն ամենից շատ նշվել է «Քաղաքացիական հասարակություն» տարբերակի վերաբերյալ: Դրա պատճառը կարող է լինել նման հաստատությունների մասին հանրության գիտելիքի պակասը:

Գծապատկեր 33. N33. Ձեր կարծիքով՝ հարաբերությունների կարգավորման հարցում որքանո՞վ է կարևոր թվարկվածներից յուրաքանչյուրի դերը (n=1971):



Թուրքիայի կառավարության դերը կարևոր համարողների տոկոսն ավելի բարձր է կին հարցվողների շրջանում, քան տղամարդկանց:

Աղյուսակ 11. Կարգավորման գործում Թուրքիայի կառավարության դերի գնահատումը՝ ըստ հարցվողների սեռի (n=1693)

	1. Ընդհանրապես կարևոր չէ	2	3	4	5. Միանգամայն կարևոր է
Կին (n=792)	4,1%	3,7%	9,9%	25,1%	57,2%
Տղամարդ (n=901)	4,7%	5,4%	10,7%	21,8%	57,4%

Եվ վերջապես, մենք գնահատում ենք մեր բացահայտումները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի: Ինչ վերաբերում է հարաբերությունների կարգավորման գործընթացում Թուրքիայի կառավարության դերին, դիտարկելով «4»-ի և «5»-ի գումարային արժեքը, նկատում ենք, որ ամենամեծ մասնաբաժինը միջնակարգ կրթությամբ հարցվողներինն է:

Աղյուսակ 12. Կարգավորման գործում Թուրքիայի կառավարության դերի գնահատումը՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի (n=1690)

	1. Ընդհանրապես կարևոր չէ	2	3	4	5. Միանգամայն կարևոր է
Ավագ դպրոցից ցածր (n=718)	4,4%	4,9%	8,2%	25,3%	57,1%
Ավագ դպրոց (n=559)	4,6%	5,0%	12,2%	21,1%	57,1%
Համալսարան (n=413)	4,1%	3,8%	11,1%	23,1%	57,9%

Ուսումնասիրելով որակական բացահայտումները՝ նկատում ենք, որ մասնակիցների տեսակետները բազմազան և ընդգրկուն են այն քայլերի վերաբերյալ, որոնք Թուրքիան պետք է ձեռնարկի՝ Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու համար:

I2-ն ընդգծում է, որ Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու համար Թուրքիան պետք է կազմակերպի մշակութային միջոցառումներ, բացի սահմանները և ապահովի առանց վիզայի մուտքն ու ելքը:

I9-ը փաստարկում է, որ պետք է զարգացնել համագործակցությունը տնտեսական և էներգետիկ ոլորտներում և նշում, որ երկրները պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց շահերը:

I1-ն ընդգծել է, որ նախապաշարմունքները կարող են նվազել երեխաների կրթության և կրթության ու իրազեկման բարձրացմանն ուղղված ծրագրերի կարևորման միջոցով: Նա նշում է, որ «մեծ ուժերը» կարող են միջամտել և խաղաղ լուծումներ գտնել: Հարցազրույցի մասնակիցն օգտագործել է «մեծ ուժեր» արտահայտությունը, սակայն հստակության համար նշենք, որ խոսքը վերաբերում է համաշխարհային քաղաքական համակարգի գերիշխող երկրներին, այսինքն՝ համաշխարհային մասշտաբով նշանակալի տնտեսական, ռազմական և քաղաքական ազդեցություն ունեցող երկրներին:

Հարցվողը, որը նույնականացված է որպես I24, կարծում է, որ Թուրքիայում հասարակությունն արդեն իսկ հակված է հայերի հետ դրական հարաբերությունների, և որ միայն հասարակության գործողությունները բավարար չեն փոփոխությունների համար: Նա ընդգծում է, որ բաժանարար գծեր ստեղծող և պահպանող քաղաքական հռետորաբանությունն ու գործողություններն են հարաբերությունների բարելավման իրական խոչընդոտները: Այս տեսակետն ընդգծում է քաղաքական առաջնորդության և դիվանագիտական ջանքերի կարևորությունը պատմական լարվածության հաղթահարման և երկկողմ հարաբերությունների բարելավման գործում: Նա կոչ է անում փոխել քաղաքական հռետորաբանությունը և գործողությունները՝ արտացոլելու հասարակության, հատկապես ավելի երիտասարդ սերունդների շրջանում եղած ավելի ներդաշնակ և ներառական տրամադրությունները:

> Հարց. Ինչ պետք է անեն Թուրքիայի քաղաքական գործիչները և հասարակությունը Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները բարելավելու համար:
>
> Պատասխան. Ինչ պետք է անի հասարակությունը: Հասարակությունն իրականում շատ բան չունի ասելու: Հասարակությունն արդեն, գիտեք ինչ, օրինակ, սկզբում հարցնում էիք՝ կամուսնանացնեիք ձեր ընկերների..., հասարակությունն արդեն երիտասարդ է, ուրեմն ինչ կարող է անել հասարակությունը: Հասարակությունն արդեն անում է դա, հասարակության մեջ իրականում տարանջատում չկա, պետություններն են տարանջատում, քաղաքականն է, սա քաղաքականության լեզուն է:
>
> (I24. կին, 48 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Վերադառնալով հարցման արդյունքներին՝ հարցվածների 45,4%-ը կարծում է, որ Թուրքիան պետք է հարաբերություններ հաստատի՝ չմոռանալով անցյալը: Սա ամենաբարձր տոկոսն է՝ պատասխանների մնացած տարբերակների համեմատ: Երկրորդ տեղում այն պատասխանն է, ըստ որի, Թուրքիան չպետք է հարաբերությունների մեջ մտնի Հայաստանի հետ:

Գծապատկեր 34. N30. Ձեր կարծիքով՝ Թուրքիան ինչպե՞ս պետք է դիրքավորվի Հայաստանի հետ հարաբերություններում (n=1999):



Մասնակիցներից ոմանք կարծում են, որ Հայաստանի կառավարությունը կարող է կարևոր դեր խաղալ կարգավորման գործընթացում, և որ հարաբերությունները կարող են բարելավվել ապրումակցման, փոխըմբռնման և մշակութային գործողությունների միջոցով: Այս տեսակետներն ընդգծում են երկու երկրների ակտիվ մասնակցության և համագործակցության անհրաժեշտությունը:

> Եթե գործող իշխանությունը մնա, տպավորություն է, որ դրական քայլեր կանի: Ես չգիտեմ, թե ինչքան կմնա և ինչքան ժամանակ կկարողանա պահել այն:
>
> (I7. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Այն պետք է բացի սահմանները, մշակութային ու զբոսաշրջային միջոցառումներ կազմակերպի: Սպորտային և մշակութային միջոցառումները մոտեցնում են երկրներին:
>
> (I2. տղամարդ, 33 տ., համալսարանի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Մյուս հարցվողներն ավելի կասկածանքով կամ բացասաբար են վերաբերվել Հայաստանի կառավարության դերին: Այս հարցվածները կարծում են, որ արտաքին գործոնները և մեծ տերությունների ազդեցությունը տարածաշրջանում կարող են բարդացնել հարաբերությունների կարգավորումը: Որոշ մասնակիցներ էլ նշել են, որ այս հարցի վերաբերյալ բավարար տեղեկատվություն չունեն:

Մասնակիցները համակարծիք էին, որ Թուրքիայի կառավարությունը պետք է ակտիվ դեր ստանձնի Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործում: Ընդգծվել է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, ատելության խոսքի նվազեցման և կառուցողական մոտեցման անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, որոշ մասնակիցներ նշել են նաև, որ Հայաստանը բավարար համագործակցող չէ:

> Նրանք կարող են հանձնաժողով կազմակերպել երկու երկրների ղեկավարների հետ, նստել զրուցել:
>
> (I3. կին, 26 տ., համալսարանի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

Մասնակիցներն ընդհանուր առմամբ դրական և կառուցողական մոտեցում ունեն քաղաքացիական հասարակության դերի վերաբերյալ: Նշվում է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է հանդիպեն հանրության հետ, կազմակերպեն մշակութային և ինտեգրմանն ուղղված ճամփորդություններ, համագործակցեն առողջապահության և կրթության ոլորտներում: Սակայն որոշ մասնակիցներ կարծում են, որ Հայաստանում հասարակական կազմակերպությունները գտնվում են արտաքին ուժերի ազդեցության տակ:

> Եթե արյան կարիք լինի, Կարմիր մահիկը կարող է գնալ այնտեղ հիմնարկ բացել ու տեղի ժողովրդին աջակցել իրենց երկրում:
>
> (I2. տղամարդ, 33 տ., համալսարանի շրջանավարտ,
> բնակվում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում)

> Հարց. Ինչ եք կարծում՝ ինչ պետք է արվի հայերի և թուրքերի միջև փոխվստահության մակարդակը բարձրացնելու համար:
>
> Պատասխան. Ուսանողների փոխանակման ծրագրեր պետք է լինեն, դրսից մարդիկ գան ու ծանոթանան այստեղի մեր ապրելակերպին:
>
> (I14. տղամարդ, 28 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

> Ես կարծում եմ, որ Հայաստանի բոլոր ՀԿ-ները... Ես կարծում եմ, որ ֆրանսիական մտավորականությունը վերահսկում է հայկական ՀԿ-ներին:
>
> (I13. կին, 59 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

> Դե, Ռուսաստանը նույն Ռուսաստանն է, և Հայաստանին աջակցող շատ երկրներ կան, չգիտեմ:
>
> (I17. կին, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I19-ը դեմ է երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը՝ վստահ լինելով, որ այն կշահագործվի այլ նպատակներով: Այս տեսակետն արտացոլում է վստահության զգալի բացակայությունը և մտահոգությունները չարաշահման և թաքնված դրդապատճառների վերաբերյալ: Այս թերահավատությանը, հավանաբար, նպաստում են պատմական դժգոհությունները և քաղաքական լարվածությունը: Հարցվողի դիրքորոշումն ընդգծում է հաշտեցման խոչընդոտները և հիմքում ընկած անվստահությունը հաղթահարելու կարևորությունը՝ խթանելու անկեղծ և արդյունավետ համագործակցություն քաղաքացիական հասարակությունների միջև: Այս մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է վստահության

և թափանցիկության խթանում, ինչպես նաև երկու կողմերի հավատարմությունը փոխըմբռնման և խաղաղության իրական նպատակներին:

Հարց. Կաջակցեի՞ք երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը:

Պատասխան. Ո՛չ, ես դրան չէի աջակցի: Կարծում եմ՝ այն կօգտագործվի տարբեր նպատակների համար:

(I19. կին, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I18-ի աջակցությունը Թուրքիայի և Հայաստանի քաղաքացիական հասարակությունների միջև համագործակցությանը պայմանական է և կշռադատված: Նա ընդգծում է համագործակցության համար ընդհանուր եզրեր և բովանդակալից թեմաներ գտնելու կարևորությունը, հատկապես մշակութային փոխանակման ոլորտում: Ընդգծելով ընդհանուր պատմական և աշխարհագրական արմատները՝ հարցվողը նշում է, որ հարաբերությունները երկու հասարակությունների միջև բնական են և պետք է կարգավորվեն: Այս տեսակետն արտացոլում է զգուշավոր լավատեսություն, որ նպատակաուղղված և հարգալից երկխոսության միջոցով կարելի է հասնել դրական արդյունքների՝ խթանելով փոխըմբռնումն ու հարգանքը:

Հարց. Կաջակցեի՞ք երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը:

Պատասխան. Կախված է նրանից, թե ինչ ընդհանուր հայտարարի կգան, այսինքն՝ ի՞նչ թեմայով կաշխատի քաղաքացիական հասարակության կազմակերպությունը: Դա կարող է լինել միմյանց մշակույթներին ծանոթացնելը, հայոց լեզվին, մշակույթին... Դա նշանակում է շփում, կարող են լինել շփումներ, ինչու չէ, որովհետև մենք ծնվել ենք Միջագետքում՝ նույն հողի վրա, և այս շփումը շատ նորմալ է:

(I18. տղամարդ, 34 տ., համալսարանի շրջանավարտ)

I20-ը միանգամայն կողմ է երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը՝ ընդգծելով հակամարտությունների անիմաստ ու վնասակար լինելը: Նա պնդում է, որ խաղաղությունն ավելի տրամաբանական և շահավետ ընտրություն է՝ կասկածի տակ առնելով, թե իրականում ում է ձեռնտու պատերազմն ու կռիվը: Այս տեսակետն ընդգծում է փոխադարձ օգուտի համար միասին աշխատելու կարևորությունը և արտացոլում է բարոյական և էթիկական դիրքորոշում, որն առաջնահերթություն է տալիս խաղաղությանն ու համագործակցությանը, քան խզմանն ու հակամարտություններին: Հարցվողի աջակցությունն ընդգծում է երկու հասարակությունների համար դրական արդյունքների հասնելու հարցում համատեղ ջանքեր գործադրելու կարևորությունը:

Հարց. Կաջակցեի՞ք երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը:

Պատասխան. Ես միանշանակ կաջակցեի, ինչո՞ւ պետք է պատերազմ լինի խաղաղության փոխարեն, ո՞ւմ է ձեռնտու պատերազմը, ո՞վ է մինչև հիմա կռվից օգուտ ունեցել:

(I20. տղամարդ, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

I13-ի՝ երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը դեմ լինելը, չնայած հայերի վերաբերյալ նրա դրական տեսակետին, հիմնված է այն համոզմունքի վրա, որ պատմական հակասությունները չափազանց նշանակալից են և չեն կարող անտեսվել: Այս տեսակետը շեշտում է պատմական դժգոհությունների խոր ազդեցությունը ներկայիս վերաբերմունքի վրա և ընդգծում է հաշտության ու համագործակցության խթանման մարտահրավերները: Անցյալի հակամարտությունների թափանցիկ և կառուցողական լուծումն ու ճանաչումը կարող են անհրաժեշտ քայլեր լինել՝ փոխելու նման ընկալումները և ճանապարհ հարթելու ապագա համագործակցության համար:

Հարց. Կաջակցեի՞ք երկու երկրների քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը:

Պատասխան. Ո՛չ, չէի աջակցի:

Հարց. Ինչո՞ւ:

Պատասխան. Կարծում եմ, որ դա ճիշտ չի լինի, քանի որ անցյալից եկող հակասություն կա:

(I13. կին, 59 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Որոշ հարցվածների կարծիքով՝ եթե Ադրբեջանի հետ հարաբերությունները բացասաբար են ազդում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքի վրա, դա կարող է բարդացնել կարգավորման գործընթացը:

Հարց. Ինչ եք կարծում՝ որքանո՞վ է Ադրբեջանը, ենթադրաբար, ազդում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա:

Պատասխան. Կարծում եմ՝ այն [Ադրբեջանը] շատ է ազդում նրանց վրա, որովհետև մեր երկիրը չափից դուրս է սրբացնում Ադրբեջանին... նրանք չափից դուրս են սրբացնում այդ մարդկանց:

(I12. կին, 33 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հայաստանի վերաբերյալ I14-ի ընկալումը մեծապես կրում է Ադրբեջանի դեմ վայրագությունների մասին այն պատմությունների ազդեցությունը, որ փոխանցվում են նրանց իրենց ընտանիքի ավագների և սոցիալական ցանցերի միջոցով: Այս տեսակետն ընդգծում է ժամանակակից հայացքների ձևավորման հարցում հակամարտային հիշողությունների միջսերնդային փոխանցման ուժեղ ազդեցությունը և սոցիալական մեդիայի դերը: Այս պատմությունների հուզական կշիռը կարող է զգալի խոչընդոտներ ստեղծել ապրումակցման, փոխըմբռնման և հաշտեցման ճանապարհին: Խորապես արմատացած այս ընկալումների հաղթահարման համար անհրաժեշտ է ճանաչել և հասկանալ պատմական համատեքստը, խթանել բաց երկխոսությունը և խրախուսել չմիջնորդավորված, անձնական շփումները՝ հակամարտությունը և դրանում ներգրավված մարդկանց ավելի հավասարակշռված և համակողմանիորեն հասկանալուն նպաստելու համար:

Երբ մտածում եմ Հայաստանի մասին, մտքիս գալիս են Ադրբեջանի դեմ իրականացված վայրագությունները: Ինչքան լսել եմ իմ մեծ ծնողներից և սոցիալական ցանցերից, շատ վատ բաներ են տեղի ունեցել:

(I14. տղամարդ, 28 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Որպես I34 նույնականացված հարցվողն Ադրբեջանի հետ պատերազմի ավարտը դիտարկում է որպես Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման վճռորոշ նախապայման: Այս տեսակետն ընդգծում է հայ-ադրբեջանական հակամարտության էական ազդեցությունը Թուրքիայի դիվանագիտական դիրքորոշման վրա, ինչպես նաև տարածաշրջանային կայունության կարևորությունը երկկողմ հարաբերությունների բարելավման հարցում: Հարցվողի պատասխանից բխում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հասնելը էական է Թուրքիայի և Հայաստանի համար՝ իրենց խնդիրները լուծելու և հարաբերությունների կարգավորման համար բարենպաստ միջավայր ստեղծելու առումով:

Հարց. Ձեր կարծիքով՝ ի՞նչ նախապայմաններ պետք է կատարվեն Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման համար:

Պատասխան. Դա կարող է լինել Ադրբեջանի հետ պատերազմի ավարտը:

(I34. տղամարդ, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Որպես I25 նույնականացված հարցվողն ընդգծում է Թուրքիայի և Հայաստանի միջև խաղաղության հաստատման զգալի խոչընդոտները, մասնավորապես՝ ղարաբաղյան հակամարտությունը և պատմական տեղահանության մասին օրենքը: I25-ն ընդգծում է նսեմացնող խոսույթի և հասարակության վերաբերմունքի վնասակար ազդեցությունը Թուրքիայում, որոնք սնում են հայերի վերաբերյալ բացասական կարծրատիպերի հարատևությունը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ խորապես արմատացած այս խնդիրների լուծումը և խոսույթի փոփոխությունը վճռորոշ քայլեր են երկու ժողովուրդների միջև խաղաղության և հաշտության հաստատման համար: Այս տեսակետն ընդգծում է պատմական դժգոհություններին դիմակայելու և հասարակական ավելի հարգալից ու նրբանկատ վերաբերմունք խթանելու կարևորությունը՝ հարաբերությունների բարելավման ուղղությամբ հիմքեր ստեղծելու համար:

Առաջինը Ղարաբաղն է, երկրորդը 100 տարի առաջ ընդունված տեղահանության մասին օրենքն ու մարդկանց նախատինքները, համենայնդեպս որքան ես տեսել եմ այստեղ՝ Թուրքիայում, նույնիսկ երբ մարդիկ միմյանց վիրավորում են, ասում են՝ այ հայ, հայի վաստակ և այլն, և այլն, ուստի այս խոսույթը երբեք թույլ չի տվել այս երկու ազգերին խաղաղություն հաստատել:

(I25. տղամարդ, 25 տ., համալսարանի շրջանավարտ)

I17-ը, որպես ազգությամբ ադրբեջանցի անհատ, որն ապրում է Թուրքիայում արդեն 18 տարի, ընդհանուր առմամբ, բացասական հայացքներ ունի Հայաստանի և հայերի վերաբերյալ: Նա խոր անվստահություն և զայրույթ է տածում հայերի նկատմամբ՝ կապված Ադրբեջան-Հայաստան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների հետ: Նա նշում է, որ մինչ պատերազմը հայ ընկերներ է ունեցել, սակայն պատերազմից հետո հարաբերությունները խզվել են: Նա թերահավատորեն է վերաբերվում Հա-

յաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը և կարծում է, որ խաղաղության հասնելը դժվար է: Նա կողմ է քաղաքացիական հասարակության համագործակցությանը, սակայն ընդգծում է, որ դժվար է հաղթահարել վստահության պակասը:

Իրենց հետ միշտ պատերազմներ ենք ունեցել, Ադրբեջան-Հայաստան, չգիտեմ, էդ տեսակ մտերմություն չունենք, բայց մեր գյուղում շատ են ապրել, միշտ մեր ընկերներն են եղել, բայց մենք չենք սիրում նրանց այս պատերազմի պատճառով, ահա այդպիսի երկիր է:

(I17. կին, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարց. Թուրքիան և Հայաստանը հարևաններ են, բայց ինչ եք կարծում՝ նրանք պե՞տք է խաղաղ ապրելու ճանապարհ գտնեն:

Պատասխան. Դե, պետք է, բայց չեն գտնի, չեն գտնի:

(I17. կին, 35 տ., ավագ դպրոցի շրջանավարտ)

Հարցվողը, որը նույնականացվում է որպես I25, բազմակողմ մոտեցում ունի հայերի և թուրքերի միջև փոխադարձ վստահության բարձրացման հարցի շուրջ: Նա ընդգծում է, որ կարևոր են բարձր մակարդակի այցերը (մասնավորապես՝ Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից) Հայաստան՝ որպես բարի կամքի խորհրդանշական դրսևորում: Բացի դրանից, նա պաշտպանում է առևտրային համաձայնագրերի ստորագրման գաղափարը՝ խթանելու տնտեսական համագործակցությունը և փոխկախվածությունը: Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և ՁԼՄ-ներում դրա վերաբերյալ խոսույթի փոփոխությունը նույնպես համարում է ընկալումների բարելավման և թշնամանքը նվազեցնելու կարևորագույն քայլեր: Հարցվողի առաջարկությունները ընդգծում են քաղաքական առաջնորդների և լրատվամիջոցների և՛ խորհրդանշական, և՛ պրակտիկ գործողությունների անհրաժեշտությունը՝ երկու ժողովուրդների միջև փոխվստահության ձևավորման և հարաբերությունների բարելավման հիմքեր ստեղծելու առումով:

Հարց. Ինչ պետք է արվի հայերի և թուրքերի միջև փոխվստահությունը բարձրացնելու համար:

Պատասխան. Դե, երկու երկրների նախագահները, հատկապես Էրդողանը պետք է այցելի Հայաստան, պետք է ստորագրվեն առևտրային համաձայնագրեր, կամ կա Ղարաբաղյան հակամարտությունը, որը շատ է արտացոլվում լրատվամիջոցներում: Պետք է փոխվի լրատվամիջոցներում այս արտացոլման ընկալումը:

(I25. տղամարդ, 25 տ., համալսարանի շրջանավարտ)

I35-ը խորապես հավատում է հայերի հետ խաղաղ ապրելու ուղիներ գտնելու կարևորությանը՝ վկայակոչելով ինչպես ընդհանուր աշխարհագրական տարածքը, այնպես էլ երկու ժողովուրդների միջև խոր պատմական հարաբերությունները: Նրա պատասխանն արտացոլում է նախաձեռնողական և դրական վերաբերմունք հարաբերությունների բարելավման հարցին՝ ընդգծելով պատմական կապերի նշանակությունը և խաղաղ համակեցության գործնական օգուտները: Այս տեսակետն ընդգծում է ընդհանուր պատմության ճանաչման, ինչպես նաև երկխոսության ու համագործակցության պատրաստակամությունը խթանելու կարևորությունը երկու համայնքների համար ավելի լավ ապագա կառուցելու հարցում:

Հարց. Քանի որ հայերը մեր հարևաններն են, ինչ եք կարծում՝ մենք պե՞տք է նրանց հետ հաշտ ապրելու ճանապարհ գտնենք:

Պատասխան. Ես միանշանակ այդպես եմ կարծում: Բացի դրացի լինելուց, մենք անցյալից շատ խոր հարաբերություններ ունենք, ապրել ենք նույն հողի վրա: Անպայման ցանկանում եմ բարելավել հարաբերությունները:

(I35. տղամարդ, 30 տ., համալսարանի շրջանավարտ)

Ամփոփելով՝ այս 35 խորին հարցազրույցները բացահայտում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ կարծիքների բազմաբարդ գունապնակը, որը ձևավորվել է պատմական նարատիվների, անձնական փորձառությունների և ժամանակակից քաղաքական շարժընթացի ազդեցությամբ: Թեև առկա է հարաբերությունների բարելավման և խաղաղ գոյակցության նկատելի ցանկություն, դեռևս կան զգալի խոչընդոտներ, այդ թվում՝ խորացած անվստահությունը, Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը և ազգայնական պատմույթների ազդեցությունը: Իրական պատմության ուսուցման և անձնական փոխհարաբերությունների խթանումը, ինչպես նաև դիվանագիտական նախաձեռնությունների խրախուսումը վճռորոշ քայլեր են՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ավելի դրական և կառուցողական հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ: Այս մարտահրավերներին դիմակայելը պահանջում է բազմակողմ մոտեցում, ներառյալ քաղաքական առաջնորդություն, մեդիա ոլորտի բարեփոխումներ և լայն հանրության ջանքերը՝ խթանելու ապրումակցումն ու փոխըմբռնումը:

Հարցազրույցները ցույց են տալիս, որ թեև հարցվածները հուսով են, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները կկարգավորվեն, նրանք ունեն որոշ պատմական և մշակութային վերապահումներ: Անհատական մակարդակում հարաբերությունների նկատմամբ նրանք հանդուրժողական մոտեցում ունեն, մինչդեռ ազգային մակարդակի դեպքում ավելի զգուշավոր են: Թուրքիայի և Հայաստանի միջև պատմական լարվածությունը և ներկայիս քաղաքական շարժընթացը բացասաբար են անդրադառնում հարցվողների՝ մակրոմակարդակին վերաբերող տեսակետների վրա:

Շատ մասնակիցների համար Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման հարցում մեծ խոչընդոտ է Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող հակամարտությունը: Հակամարտությունն ազդում է ընկալումների վրա և խոչընդոտում դիվանագիտական ջանքերին: Այս հակամարտությունը դիվանագիտական ջանքերով և վստահության ամրապնդման քայլերի միջոցով լուծելը կարևոր է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բարելավման համար: Տարածաշրջանում խաղաղությանն ուղղված նախաձեռնություններին աջակցելը կարող է հաշտեցման համար ավելի բարենպաստ միջավայր ստեղծել:

Ընդհանուր առմամբ՝ հարցվողները հանդուրժող վերաբերմունք ունեն հայ ընկերներ և հարևաններ ունենալուն: Բայց Հայաստանի և հայերի մասին սահմանափակ գիտելիքը դժվարացնում է հիմնախնդիրը խորությամբ հասկանալը:

Հարցվողների տեսակետներն ընդհանուր առմամբ կարող են ձևավորվել բարդ հույզերի և նախապաշարմունքների ազդեցությամբ: Թեև նրանք բավարար գիտելիք չունեն, սակայն նկատելի է, որ այդ վերաբերմունքը կարող է ավելի դրական հունով զարգանալ կրթության և իրազեկման բարձրացման միջոցով: Դիվանագիտական հարաբերություններում Թուրքիայի ակտիվ դերը և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից միջոցառումների կազմակերպումը կարող է նպաստել, որ հարցվողների մոտեցումները դառնան ավելի գիտակից և ոչ կանխակալ:

Հայերի մասին շատ մասնակիցների պատկերացումները ձևավորվում են նրանց կրթությամբ և ընտանիքի ավագներից փոխանցված պատմույթներով: Մասնակիցների իրազեկվածությունը և պատկերացումները հայկական ինքնության և պատմության վերաբերյալ բավականին տարբեր են: Որոշ մասնակիցներ դրական վերաբերմունք են արտահայտում հայերի նկատմամբ՝ ընդգծելով ընդհանուր պատմությունն ու մշակույթը: Մյուսները բացասական ընկալումներ ունեն՝ հաճախ պատմական հակամարտությունների և ազգայնական պատմույթների ազդեցությամբ:

Խաղաղ համակեցության ընդհանուր ցանկություն կա: Մասնակիցների զգալի մասը հավատում է հայերի հետ խաղաղ ապրելու ուղիներ գտնելու կարևորությանը՝ վկայակոչելով ընդհանուր աշխարհագրությունը և պատմական կապերը: Այս տրամադրությունն ընդգծում է հաշտեցման ներուժը՝ հիմնվելով պատմական և մշակութային կապերի վրա: Այս կապերը կարող են հենք դառնալ երկխոսության և համագործակցության համար:

Մի շարք հարցվածներ կարծում են, որ քաղաքական առաջնորդները պետք է ակտիվ քայլեր ձեռնարկեն կարգավորման ուղղությամբ, այդ թվում՝ բարձր մակարդակի այցերի և առևտրային համաձայնագրերի միջոցով: Քաղաքական առաջնորդությունը և դիվանագիտությունը կարևոր դեր են խաղում երկկողմ հարաբերությունների ձևավորման գործում: Երկխոսությանն ու համագործակցությանը նպաստող քաղաքական նախաձեռնությունների խրախուսումը կարող է նպաստել պատնեշների հաղթահարմանը և վստահության կառուցմանը: Հարցվողները կողմ են տնտեսական և մշակութային շփումների աճին՝ որպես վստահություն ձևավորելու և հարաբերությունները բարելավելու միջոց: Առևտրային և մշակութային փոխանակումները դիտվում են որպես կարգավորմանն ուղղված գործնական քայլեր:

Լրատվամիջոցների խոսույթը և քարոզչությունը դիտվում են որպես հայերի նկատմամբ հանրային ընկալումների և վերաբերմունքի ձևավորման կարևոր գործոններ: Որոշ մասնակիցներ ապրումակցում են հայերին՝ ընդունելով նրանց պատմական զրկանքները և հաշտեցման անհրաժեշտությունը: Անձնական շփումները հայերի հետ՝ ճամփորդությունների կամ ընկերական հարաբերությունների միջոցով, դրականորեն են ազդում մասնակիցների տեսակետների վրա և նպաստում են նրանց ավելի լավ ըմբռնելուն:

Հարցվածներից շատերը տարբեր աստիճանի իրազեկվածություն ունեն հայերի պատմության և 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ: Ոմանք անցյալի վերաբերյալ սխալ պատկերացումները շտկել են կրթության և ինքնակրթության միջոցով[13]: Ըմբռնման այս փոփոխությունն արտացոլում է ընկալումների ձևավորման գործում կրթության և պատմական ճշմարտացի նարատիվների կարևորությունը: Պատմության ուսուցման բարելավմանն ուղղված ջանքերը կարող են օգնել սխալ պատկերացումները շտկելուն և ավելի հանգամանալից ըմբռնման խթանմանը:

13. Մինչև մեկ տարի առաջ ես հայությունը գիտեի որպես աղանդ: Արդեն մեկ տարի է՝ գիտեմ, որ նրանք ժողովուրդ են (I25):

Հավելված

Աղյուսակ 13. Տեղեկություններ խորին հարցազրույցների մասնակիցների մասին

Նույնականացում	Սեռ	Տարիք	Կրթական մակարդակ	Արդյոք ապրում է Թուրքիա-Հայաստան սահմանամերձ գոտում
I1	Տղամարդ	30	Համալսարան	Այո
I2	Տղամարդ	33	Համալսարան	Այո
I3	Կին	26	Համալսարան	Այո
I4	Կին	43	Ավագ դպրոցից ցածր	Այո
I5	Կին	56	Ավագ դպրոցից ցածր	Այո
I6	Տղամարդ	46	Համալսարան	Այո
I7	Տղամարդ	34	Համալսարան	Այո
I8	Կին	22	Ավագ դպրոց	Այո
I9	Տղամարդ	51	Համալսարան	Այո
I10	Տղամարդ	62	Ավագ դպրոցից ցածր	Այո
I11	Տղամարդ	34	Համալսարան	Այո
I12	Կին	33	Ավագ դպրոց	Ոչ
I13	Կին	59	Ավագ դպրոց	Ոչ
I14	Տղամարդ	28	Ավագ դպրոց	Ոչ
I15	Կին	35	Ավագ դպրոց	Ոչ
I16	Կին	40	Ավագ դպրոցից ցածր	Ոչ
I17	Կին	35	Ավագ դպրոց	Ոչ
I18	Տղամարդ	34	Համալսարան	Ոչ
I19	Կին	35	Ավագ դպրոց	Ոչ
I20	Տղամարդ	35	Ավագ դպրոց	Ոչ
I21	Կին	31	Համալսարան	Ոչ
I22	Կին	23	Ավագ դպրոց	Ոչ
I23	Տղամարդ	61	Համալսարան	Ոչ
I24	Կին	48	Ավագ դպրոց	Ոչ
I25	Տղամարդ	25	Համալսարան	Ոչ
I26	Կին	24	Ավագ դպրոց	Ոչ
I27	Տղամարդ	22	Ավագ դպրոց	Ոչ
I28	Տղամարդ	31	Ավագ դպրոցից ցածր	Ոչ
I29	Տղամարդ	23	Ավագ դպրոց	Ոչ
I30	Կին	49	Ավագ դպրոց	Ոչ
I31	Տղամարդ	21	Ավագ դպրոց	Ոչ
I32	Տղամարդ	23	Ավագ դպրոց	Ոչ
I33	Կին	66	Համալսարան	Ոչ
I34	Տղամարդ	35	Ավագ դպրոց	Ոչ
I35	Տղամարդ	30	Համալսարան	Ոչ

ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ. ՍԻՆԹԵԶԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էրման Բաքրոջը, Սոնա Բալասանյան

Ներածություն

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը, թեև հաճախ կրում է քաղաքական բարդությունների և պատմական դժգոհությունների ազդեցությունը, փոխակերպող դիվանագիտության եզակի հնարավորություն է ընձեռում: Այս գլուխը ներկայացնում է փորձագետների հայացքը հասարակությունների միջև երկկողմ հարաբերությունները ձևավորող բազմագործոն դինամիկայի վերաբերյալ:

Չնայած երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ Հայաստանի և Թուրքիայի մտադրությունների առումով պարբերական հապաղումներին և թերահավատությանը, կովկասյան տարածաշրջանում վերջին զարգացումները երկխոսության և հաշտության հնարավորությունների բացահայտման ազդակ են ստեղծել: Ժամանակակից Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիների կարծիքները կողք կողքի դնելով՝ այս գլուխը սինթեզում է ընդհանրությունները, ինչպիսիք են փոխադարձ տնտեսական օգուտներն ու ռազմավարական շահերը, ինչպես նաև կրոնական ու քաղաքական տարամետ դիրքորոշումներն ու պատմական նարատիվները:

Այս վերլուծությունը ձգտում է սոցիալական հետազոտության տվյալների մեկնաբանության միջոցով պատկերացում ապահովել հարաբերությունների կարգավորման հնարավոր ուղիների և հասարակական այն գործոնների մասին, որոնք կարող են կամ նպաստել, կամ խոչընդոտել այս գործընթացին: Այս գլխում առանցքային է այն թեզը, որ ինչքան շատ լինի շփումը հասարակությունների միջև, այնքան մեծ կլինի փոխադարձ դրական վերաբերմունքի հավանականությունը:

Մեկնաբանող այս գլուխը հիմնված է սույն զեկույցում ներկայացված ուսումնասիրության վրա և ներկայացված է ըստ ենթաթեմաների, որոնք բացահայտվել են վերլուծական սինթեզի (թեմատիկ վերլուծության) միջոցով՝ Հայաստանի և Թուրքիայի բնակիչների կարծիքները կողք կողքի դնելով: Ենթավերնագրերը հետևյալն են. «Առաջ դեպի անցյալ», «Հայելային ուրիշը», «Պատմական տրավմայից՝ արդի ընկալումներ» և «Ի՞նչ կլինի, եթե կարգավորումը տեղի ունենա, և ինչպե՞ս է դա հնարավոր»:

Առաջ դեպի անցյալ

Չնայած դեպի ապագան նայելու բոլոր ջանքերին՝ Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների ներկայացուցիչները հակված են միմյանց մասին կարծիքներ կազմելիս անդրադառնալու անցյալին: Թուրքերի մասին հայերի ընկալման արմատները ձգվում են դեպի պատմական նարատիվներ և ընտանեկան գիտելիքի փոխանցում: Հայաստանյան հարցումը ցույց է տվել, որ հայաստանցիների զգալի մասը՝ 85%-ը, Հայոց ցեղասպանության մասին իմանում է մինչև 11 տարեկանը՝ հիմնականում ընտանիքի անդամներից (70%) և դպրոցից (62%): Այս վաղ տարիքում նման ազդեցության ենթարկվելը ձևավորում է նրանց պատկերացումներն ու վերաբերմունքը թուրքերի նկատմամբ: Պատմության դասերին և դասագրքերում թուրքերը հաճախ ներկայացվում են որպես «դաժան», «սառնասիրտ» և «թշնամի»՝ ամրապնդելով բացասական կարծրատիպերը[1]:

Այս առումով կարելի է ասել, որ Թուրքիայի հասարակությունը շատ չի տարբերվում հայաստանյանից: Խոսքերանգը կամ հաճախականությունը կարող են տարբեր լինել, սակայն այս հետազոտությունը ցույց է տալիս, որ թեև թուրքական դասագրքերում Հայաստանի մասին բացասական երանգը նվազել է, սակայն բացասական խոսույթը պահպանվում է: Դ. Գյուրփընարի (2013) կատարած ուսումնասիրությունը դիտարկում է[2] թուրքական պատմության դասագրքերի առաջընթացը ժամանակի մեջ՝ ընդգծելով, որ ավելի վաղ դասագրքերում (2000-ից առաջ) հայերին ավելի միանշանակ բացասաբար են պատկերել: Չնայած վերջին հրատարակություններում մի փոքր շարժ է նկատվում դեպի ավելի հավասարակշռված նարատիվ, սակայն հիմքում ընկած ազգայնական տեսանկյունը հիմնականում մնացել է նույնը: Նմանապես, Մ. Հովհաննիսյանն (2014) իրականացրել է Թուրքիայի պատմության դասագրքերի բովանդակային վերլուծություն[3]՝ բացահայտելով, որ ուշ օսմանյան ժամանակաշրջանի համատեքստում հայերը հաճախ են ներկայացվում որպես «դավաճաններ» կամ «թշնամիներ»: Այս դասագրքերում հաճախ շեշտվում է հայկական ապստամբության և ռուսական ուժերի հետ համագործակցության պատմությունը, ինչը ծառայում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան կառավարության գործողությունների արդարացմանը:

1. Gürpinar, Ö. (2018). Teaching the Armenian Genocide: a Comparative Analysis of National History Curriculums and History Textbooks in Turkey, Armenia and France. Remembrance and Solidarity: Studies in 20th-Century European History. 6, 145-168. https://enrs.eu/uploads/media/5c24d1752fb50-studies-6.pdf; and Mkrtchyan, S. (2015). The Memory of the Armenian Genocide as Taught in Armenian Schools: Textbooks, School Rituals and Iconography. https://ge.boell.org/en/2015/04/23/memory-armenian-genocide-taught-armenian-schools-textbooks-school-rituals-and-iconography

2. Gürpinar, D. (2013). Ottoman/Turkish visions of the nation, 1860-1950. Palgrave Macmillan.

3. Hovhannisyan, M. (2014). Armenians in Turkish textbooks: A study of textbook representation. International Journal of Armenian Genocide Studies, 1(1), 23-34.

Չնայած այս պատկերացումներին՝ երկվություն կա Թուրքիայի և Հայաստանի հանրույթների՝ միմյանց վերաբերյալ ընկալումներում: Թեև պատմական և կրթական նարատիվները բացասական են, շատ հայեր Թուրքիայի հասարակ մարդկանց համարում են ավելի բարեհաճ և բաց սովորական շփման համար: Որքան շատ են նրանք շփվում, այնքան բարձր է բաց լինելու մակարդակը, իսկ առաջ գնալու հնարավորությունը՝ մեծ: Նույն օրինաչափությունը նկատվում է նաև Թուրքիայի բնակիչների մոտ: Սա խոսում է այն մասին, որ բացասական ընկալումը հաճախ ձևավորվում է ոչ թե անձնական փորձով, այլ պատմական և միջսերնդային տեսանկյան միջնորդությամբ: Թեև պատմականորեն բացասական այս նարատիվներն ազդում են երկու հանրությունների՝ միմյանց վերաբերյալ ընկալումների վրա, այսօր այդ հանրույթներից ոչ մեկը մյուսի նկատմամբ միակերպ բացասական զգացմունքներ չի տածում:

Հասարակության տրամադրությունները շարունակում են ոչ միատարր լինել. Հայաստանի բնակչության մոտավորապես 65,4%-ը բացասական վերաբերմունք ունի թուրքերի նկատմամբ, ընդ որում՝ գյուղական բնակչության և երիտասարդ սերնդի շրջանում բացասական տրամադրություններն ավելի ընդգծված են արտահայտվում: Գյուղ-քաղաք, երիտասարդ-տարեց այս բաժանումն ընդգծում է, որ պատմական նարատիվները և անմիջական անձնական շփումները տարբեր աստիճանի ազդեցություն ունեն Հայաստանում ընկալումների ձևավորման վրա: Այս արմատացած պատմական ընկալումները հայերի և թուրքերի միջև ավելի դրական, անձնական շփումների ներուժի հետ հաշտեցնելը շարունակում է մարտահրավեր լինել:

Թուրքիայի բնակչության շրջանում հայերի նկատմամբ բացասական վերաբերմունք ունեցողները կազմում են մոտ 41%: Հետևաբար հայերի նկատմամբ թուրքերի բացասական վերաբերմունքի մակարդակն ավելի ցածր է, քան հայերինը թուրքերի նկատմամբ: Կարևոր է նաև արձանագրել, որ թուրքերի 40%-ը նշել է, թե ոչ բացասական, ոչ էլ դրական վերաբերմունք ունի հայերի նկատմամբ, մինչդեռ հայերի շրջանում այդ ցուցանիշը 25% է: Այլ կերպ ասած՝ թեև Թուրքիայի և Հայաստանի հանրությունների միջև բացասական վերաբերմունքի մակարդակները տարբեր են, այս տարբերակումը պայմանավորված է ոչ թե թուրքերի առավել դրական վերաբերմունքով, այլ ավելի չեզոք վերաբերմունքով կամ չեզոք վերաբերմունք արտահայտելով:

Ապագայագիտությունը (ֆուտուրոլոգիան) և ուտոպիստական մտածողությունը մեծապես անտեսվում են պատմությունը հասկանալու և երկու հասարակություններում պատմության ուսուցման կամ փոխանցման հարցերում: Մինչդեռ ապագայագիտության ինտեգրումը պատմության ընկալման և ուսուցման մեջ շատ կարևոր է, քանի որ այն մարդկանց զինում է պատմական դասերը ապագայի սցենարներում կիրառելու ունակությամբ՝ խթանելով նախաձեռնողական և հեռատես մտածելակերպ: Օգտագործելով ֆուտուրիստական մեթոդներ՝ երկու հասարակությունների ներկայացուցիչները կարող են զարգացնել քննադատական մտածողության հմտություններ, որոնք նրանց հնարավորություն կտան կանխատեսելու և կառավարելու հնարավոր սոցիալական ու քաղաքական մարտահրավերները: Այս մոտեցումը ոչ միայն մեծացնում է պատմական գիտելիքի արդիականությունը, այլև հող է նախապատրաստում ավելի կայուն և արդար ապագա ունենալուն նպաստելու համար:

Ապագայագիտությունը խրախուսում է պատմական օրինաչափությունների ուսումնասիրությունը՝ կանխատեսելու և ձևավորելու ապագա արդյունքները՝ այդպիսով պատմությունը դարձնելով դինամիկ և պրակտիկ առարկա, որն ավելին է, քան սոսկ հետհայացքը՝ օրինաչափություն, որն առկա է երկու հասարակություններում էլ[4]: Պատմությանը զուտ հետահայաց մոտեցումը չի նպաստի հասարակությունների և նրանց առանձին ներկայացուցիչների միջև փոխգործակցությանը:

Մինչդեռ պատմության ընկալման մեջ ուտոպիստական մտածողությունն էական է, քանի որ խրախուսում է մտապատկերել կատարյալ ապագա և քննադատաբար գնահատել ներկան: Ուսումնասիրելով ուտոպիստական գաղափարներ՝ անհատները ոգեշնչվում են մտածել գոյություն ունեցող հասարակական սահմանափակումներից դուրս և պատկերացնել փոխակերպման հնարավորությունները: Սա խթանում է ստեղծագործական մոտեցումը խնդիրների լուծմանը և խրախուսում սեփական կարևորության զգացումը՝ հնարավորություն տալով մարդկանց կամ հասարակություններին մարտահրավեր նետել ստատուս քվոյին և աշխատել ավելի լավ ապագայի ուղղությամբ: Ուտոպիստական մտածողությունը պատմության դասերն ինտեգրում է ապագայակենտրոն տեսանկյունների հետ՝ պատմությունը դարձնելով դինամիկ և վերաբերելի առարկա: Այն հնարավորություն է տալիս կապեր ստեղծելու անցյալի փորձառության և ապագայի ձգտումների միջև՝ զարգացնելով մտածելակերպ, որը հավասարակշռում է քննադատական վերլուծությունը և լավատեսական երևակայությունը[5]:

4. Cairns, R., & Garrard, K. A. (2024). 'Learning from history is something that is important for the future': Why Australian students think history matters. Policy Futures in Education, 22(3), 369-382. https://doi.org/10.1177/14782103231177615.

5. Kertz-Welzel, A. (2022). The power of utopian thinking. In Rethinking music education and social change (online ed.). Oxford Academic. https://doi.org/10.1093/oso/9780197566275.003.0003.

Հայելային «ուրիշը»

«Հայելային ես»-ի («looking-glass self») հայեցակարգը մշակվել է սոցիոլոգ Չարլզ Քուլիի կողմից (1902 թ.): Չ. Քուլին պնդում է[6], որ այն, թե ինչպիսին է անհատը տեսնում իրեն, ձևավորվում է ըստ նրա ընկալման, թե ինչպես են իրեն տեսնում ուրիշները: Այս տեսությունը ներառում է երեք հիմնական բաղադրիչ: Առաջին՝ մենք պատկերացնում ենք, թե ինչպիսին ենք ուրիշների աչքում: Երկրորդ՝ մենք պատկերացնում ենք, թե ինչպես են դատում ուրիշները մեր մասին: Եվ երրորդ՝ ձևավորվում է մեր ինքնաընկալումը կամ ինքնագնահատականը՝ հիմնվելով այդ դատողությունների մեր ընկալման վրա: Ըստ էության, «հայելային ես»-ի տեսության համաձայն՝ մեր ինքնանույնականացումը կամ ինքնաընկալումը արտացոլումն է այն բանի, թե ինչպես են, ըստ մեզ, ուրիշներն ընկալում մեզ: Սոցիալական փոխազդեցության այս գործընթացը նշանակում է, որ մեր ինքնագնահատականի, արժեքների և վարքագծի վրա մեծապես ազդում են ուրիշների արձագանքների մեր ընկալումները:

Հիմնվելով Չարլզ Քուլիի «հայելային ես»-ի հայեցակարգի վրա՝ կարելի է առաջ քաշել «հայելային ուրիշ»-ի («looking-glass other») հասկացությունը: Ճիշտ ինչպես «հայելային ես»-ը բացատրում է, թե ինչպես է անհատի ինքնաընկալումը ձևավորվում՝ հիմնվելով իր նկատմամբ ուրիշների վերաբերմունքի իր ընկալման վրա, «հայելային ուրիշության» հասկացությունն ընդլայնում է այս գաղափարը՝ ուսումնասիրելու, թե ինչպես են անհատներն ընկալում և յուրացնում իրենց շրջապատողների ինքնություններն ու դերերը: «Հայելային ուրիշություն»-ը ենթադրաբար ներառում է երեք քայլ. նախ՝ պատկերացնել, թե ինչպես են ուրիշներն ընկալում իրենք իրենց, երկրորդ՝ պատկերացնել, թե ինչպես են, ուրիշների կարծիքով, իրենք ընկալվում ուրիշների կողմից, և երրորդ՝ հասկանալ կամ դիտարկել, թե ինչպես են այդ ընկալումներն ազդում նրանց վարքագծի և հարաբերությունների վրա (ինչպես են ուրիշները շփվում ուրիշների հետ): Ճանաչելով ուրիշների ինքնաընկալումների արտացոլումները՝ անհատները կարող են զարգացնել ավելի խոր ապրումակցում և պատկերացում կազմել սոցիալական շարժընթացի վերաբերյալ՝ բարելավելով բազմաբարդ սոցիալական շփումները կառավարելու և ավելի իմաստալից հարաբերություններ զարգացնելու իրենց կարողությունը:

Հետևաբար Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման վերաբերյալ հետազոտությունը, նայելով «հայելային ուրիշության» պրիզմայով (ուրիշի «դուռը թակելը»՝ ինչպես նկարագրվել է հայաստանցի հարցվողի կողմից), առանձնանշում է երկու ազգերի միջև ընկալումների և փոխադարձ արտացոլումների բազմաբարդ փոխազդեցությունը: Հարցումներն ընդգծեցին, որ հասարակությունները տեղյակ են միմյանց կառավարությունների դիրքորոշումներից, և բացահայտեցին, թե դրանք ինչպես կարող են անդրադառնալ նրանց հարաբերությունների վրա: Հենց այն փաստը, որ մի երկրի ժողովուրդը մյուսին ընկալում է այնպես, ինչպես, իր կարծիքով, նրանք են ընկալում իրենց՝ «Մենք կարծում ենք՝ նրանք մտածում են մեր մասին այն, ինչ մենք մտածում ենք նրանց մասին», կարգավորման գործընթացին ուրիշին ներկայացնելու («other-representation») տեսանկյունից նայելու նախապայման է: Չնայած զգուշավորությանը և վախին, որ երկու հասարակությունների անդամները զգում են քաղաքական հարաբերությունների հնարավոր սցենարների նկատմամբ՝ «ուրիշին» միմյանց ներկայացնելու միտումը նույնքան կարևոր է, որքան «ինքն իրեն» ներկայացնելը: Ասել է թե՝ նախաձեռնությունները, որտեղ թուրքերը կարող են հայերին ներկայացնել հայկական խոհանոցն ու արվեստը և հակառակը, փոխադարձ ցուցահանդեսների կամ ներկայացումների միջոցով, որոնք խթանում են ուրիշների սուբյեկտիվ ընկալումները, կարող են հասարակությունների միջև շփման ակտիվացման հնարավոր ուղիներ լինել: Օրինակ՝ միմյանց առօրյա մշակութային դրսևորումներն իրար ներկայացնելը կարող է միմյանց ավելի իրական կերպով հասկանալու ստեղծարար միջոց լինել:

Պատմական տրավմայից՝ արդի ընկալումներ

Հետազոտությունը մատնանշում է, որ Հայաստանում գերակշռող է հայերի՝ որպես պատմական զոհերի, իսկ թուրքերի՝ որպես ագրեսորի կամ թշնամու ընկալումը: Իրենց հերթին, Թուրքիայում հարցվածները պնդել են, որ իրենց նախնիները տուժել են հայկական ապստամբությունների պատճառով: Հայերն իրենց զոհ լինելու արմատները տեսնում են պատմական իրադարձություններում, մինչ թուրքերի զոհականացման զգացումն ավելի թարմ է՝ հիմնված վստահության վրա, որ իրենց ազգն անարդարացիորեն մեղադրվում է ցեղասպանություն իրականացնելու մեջ[7]: Այս ընկալման արմատները ձգվում են դեպի պատմական և շարունակվող լարվածություն, ինչպես նաև երկու հասարակությունների միջև կրոնական տարբերություններ:

Ավելին, հետազոտությունը ցույց տվեց ուժերի գործող դասավորվածությունը, երբ Թուրքիան հայերի շրջանում պատկերանում է որպես Հայաստանի

6. Cooley, C. H. (1902). The looking-glass self (189). In C. Lemert (Ed.), Social theory: The multicultural readings. Philadelphia: Westview Press.

7. Demirel, C., & Eriksson, J. (2019). Competitive victimhood and reconciliation: The case of Turkish–Armenian relations. Identities, 1–20. https://doi.org/10.1080/1070289X.2019.1611073.

համեմատ ավելի ուժեղ պետություն: Ուժերի այս անհամաչափությունը նպաստում է երկու հասարակությունների միջև բազմաբարդ դինամիկային և ազդում նրանց շփման, միմյանց մասին պատկերացումների և կարգավորման գործընթացին նրանց կողմից տրվող կարևորության վրա: Թուրքիայի ժողովուրդը Հայաստանի մասին ավելի քիչ գիտելիք ունի, քան հայաստանցիները՝ Թուրքիայի: «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակն ընտրողների թիվը բավականին մեծ է Թուրքիայում: Սա վկայում է, որ Հայաստանը Թուրքիայի հասարակությունում լայնորեն քննարկվող թեմա չէ: Թուրքիայում հարցվածների զգալի մասը (35%) պատկերացում չունի Հայաստանի բնակչության մասին: Այս արդյունքները կարող են լինել երկու պետությունների միջև ընկալվող ուժային անհամաչափության հետևանքը:

Հայաստանցիները, որոնք այցելել են Թուրքիա, ավելի հավանական է, որ պաշտպանեն սահմանների բացման գաղափարը, ինչը հուշում է միջսահմանային հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքի հնարավոր փոփոխության մասին:

Հետաքրքիր է, որ թուրքերի հետ անձնական շփումները հանգեցնում են ավելի դրական վերաբերմունքի հայերի շրջանում, հատկապես այն անհատների, որոնք արդեն իսկ համեմատաբար հանդուրժող էին: Հայերը նշել են թուրքերի հետ շփվելուց հետո իրենց ընկալումներում դրական փոփոխությունների մասին՝ հույս հայտնելով, որ ապագա հարաբերությունները հիմնված կլինեն փոխըմբռնման և հարգանքի վրա: Չնայած այս առանձին դրական շփումներին՝ հայերի և թուրքերի միջև մարդ-մարդ հարաբերությունների հիմքում շարունակում է մնալ անապահովության զգացումը՝ պայմանավորված պատմական համատեքստով և արմատացած ընկալումներով:

«Զոհ-բռնարար» բարդ հարաբերությունների արմատները հաճախ ձգվում են դեպի սոցիալական հոգեբանություն և խմբային դինամիկա: Տեսություններից մեկը, որն օգնում է բացատրել այս երկատվածությունը, սոցիալական ինքնության տեսությունն է[8]: Համաձայն դրա՝ անհատներն իրենց ինքնագնահատականը բարձրացնելու և ինքնությունն ամրապնդելու համար իրենց դասակարգում են սոցիալական խմբերի: Այս դասակարգումը հանգեցնում է «ներխմբային» կողմնակալության և «արտախմբային» խտրականության: Զոհ-բռնարար հարաբերությունների համատեքստում նույն խմբի կամ ազգության անհատները հակված են իրենց սեփական խմբին (ներխմբային) ավելի դրական լույսի ներքո դիտարկելու՝ միաժամանակ մեկ այլ խմբի

8. Huddy, L. (2001). From social to political identity: A critical examination of social identity theory. Political Psychology, 22(1), 127-156. Tajfel, H., Turner, J. C., Austin, W. G., & Worchel, S. (1979). An integrative theory of intergroup conflict. Organizational identity: A reader, 56-65.

(արտախմբային) ընկալելով որպես սպառնալիք կամ հակառակորդ: Ընկալման այս կողմնակալությունն ուժեղանում է իրողությունների, պատմական իրադարձությունների, սոցիալ-քաղաքական համատեքստերի և միջխմբային հակամարտությունների պատճառով՝ նպաստելով պատմական տրավմային:

Ի՞նչ կլինի, եթե կարգավորումը տեղի ունենա, և ինչպե՞ս է դա հնարավոր

Հայաստանցինի մոտ 50%-ը կարծում է, որ հարաբերությունների կարգավորումը հնարավոր է առաջիկա հինգ տարվա ընթացքում՝ երկխոսության և հաղորդակցության միջոցով: Թուրքիայի հասարակությունն ավելի հոռետեսորեն է տրամադրված կարգավորման հեռանկարի հարցում: Թուրքիայի բնակչության միայն մեկ քառորդն է կարծում, որ կարգավորումը հնարավոր է առաջիկա հինգ տարվա ընթացքում երկխոսության և հաղորդակցության միջոցով: Իհարկե, այս տարբերության հիմնական պատճառներից մեկը սերտորեն կապված է այն բանի հետ, թե պետություններն արտաքին քաղաքականության որ հարցերին են առաջնայնություն տալիս իրենց օրակարգում: Այդ առումով սա Թուրքիայի հասարակության օրակարգում և առօրյայում քննարկվող թեմա չէ: Այս հետազոտության շրջանակում ակնառու էր, որ Թուրքիայում անցկացված խորին հարցազրույցների մասնակիցները խանդավառություն չէին ցուցաբերում հարցազրույցներին մասնակցելու հարցում: Այնուամենայնիվ, այս դժկամության պատճառը բուն թեմային անդրադառնալու վարանումը կամ ցանկության բացակայությունը չէր, այլ այն, որ նախկինում մասնակիցները չէին անդրադարձել այդ թեմային և կարծում էին, որ շատ բան չկա օժանդակելու կամ մանրամասնելու:

Հայաստանի բնակչության զգալի մասը Հայաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները դիտարկում է որպես միանգամայն լուրջ և բազմաբարդ: Ընկալումներում զգալի սեռային անհամամասնություն կա. Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրները շատ լուրջ է համարում կանանց 70,7%-ը՝ տղամարդկանց 62,6%-ի համեմատ: Ավելի երիտասարդ անհատները նույնպես հակված են այդ խնդիրներն ավելի կարևոր համարելու, քան ավագ սերունդները: Հետևաբար Հայաստանում կանանց և երիտասարդներին հասցեական մոտեցումները կարող են օգտակար լինել երկխոսության և կարգավորման խթանման փորձերի առումով:

Այս առումով կարելի է խոսել նաև Թուրքիայի և Հայաստանի հասարակությունների միջև տարբերության մասին: Թուրքիայի բնակչության միայն 23%-ն է կարծում, որ հասարակությունների միջև առկա խնդիրները միանգամայն լուրջ և բարդ են: Թուրքիայի հասարակության մեկ երրորդի համար Թուրքիայի և Հայաստանի միջև առկա խնդիրները «որոշ չափով լուրջ» են: Այստեղ էլ, հնարավոր է, ազդող գործոն լինեն պետությունների արտաքին քաղաքական առաջնահերթությունների տարբերությունները: Սակայն այս բացահայտումը ցույց է տալիս, որ անհամաչափություն կա ոչ միայն պետությունների, այլև հանրությունների մոտեցումներում:

Հայաստանում այն հարցվածները, որոնց տեղեկության աղբյուրը պատմության դասերը և դասագրքերն են, ավելի քիչ են հակված կարգավորումը հավանական համարել և պաշտպանել սահմանների բացման գաղափարը: Միևնույն ժամանակ, տեղեկություններն ընտանեկան քննարկումներից ստացողների ընկալմամբ՝ խնդիրները հաճախ ավելի լուրջ են: Իսկ եթե հասարակություններին տրվեն տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ:

Թուրքիայի հետ սահմանի բացման վերաբերյալ հասարակական կարծիքը Հայաստանում բաժանված է. բնակչության մոտ 37,8%-ի համար սահմանի բացումն ընդհանրապես ընդունելի չէ, մինչդեռ 34,3%-ն ավելի շուտ կամ լիովին կողմ է դրան: Տնտեսական օգուտները կարևոր գործոն են, և բնակչության 38%-ը կարծում է, որ սահմանների բացումը դրական ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա: Այնուամենայնիվ, ազգային անվտանգության հետ կապված մտահոգությունների մակարդակը շարունակում է բարձր մնալ. 65,6%-ը վախենում է բացասական հետևանքներից: Ինչ վերաբերում է Թուրքիայի բնակչությանը՝ 27%-ի համար ընդհանրապես ընդունելի չէ սահմանի բացումը, իսկ 26%-ը ավելի շուտ կամ լիովին կողմ է: Այս հարցին ի պատասխան՝ Թուրքիայում հարցվածների 10%-ն ընտրել է «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակը, իսկ մոտավորապես մեկ հինգերորդի համար սահմանի բացումը «Ո՛չ ընդունելի է, ո՛չ էլ ընդունելի չէ»: Հետևաբար Թուրքիայի հասարակությունը սահմանի բացման հարցում ընդգծված տեսակետ չունի՝ ոչ հստակ հավանություն, ոչ էլ հստակ անհամաձայնություն չկա: Թուրքիայում տղամարդիկ և նախկինում հայերի հետ շփված անձինք սահմանի բացմանն ավելի շատ են հավանություն տալիս: Թուրքիայի հասարակության տեսակետները համընկնում են հայաստանցիների՝ սահմանի բացման ազդեցության վերաբերյալ տեսակետներին: Մինչ թուրքերը նշում են տնտեսական օգուտները, նրանք նաև մտահոգություն ունեն անվտանգության հնարավոր խնդիրների վերաբերյալ:

Չհաղթահարված պատմական տրավմաները սաստկացնում են ապագայի հանդեպ անհանգստությունը և վախի զգացումը: Հայաստանում հարցվածներից շատերը անհանգստանում են, որ սահմանի բացումը կարող է հանգեցնել անցյալի հակամարտությունների կրկնության և ազգային ինքնության կորստի: Թուրքիայում հարցվածները սահմանի բացումը չեն ընկալում որպես տրավմա հրահրող գործոն: Թեև անվտանգության հետ կապված մտահոգություններ կան, նրանք սահմանի բացումը համարում են տնտեսապես դրական քայլ, նույնիսկ եթե դա զգալի ազդեցություն չունենա Թուրքիայի տնտեսության վրա:

Երկու երկրների հասարակություններն էլ տնտեսական համագործակցությունը տեսնում են որպես հարաբերությունների կարգավորման հնարավոր մեկնակետ: Թուրքական հումքն ու արտադրանքը Հայաստանում ճանաչված են իրենց որակի և մատչելիության համար, ինչը կարող է նպաստավոր լինել Հայաստանի տնտեսության համար: Թուրքիայի հասարակության կարծիքները բաժանվում են հայաստանյան արտադրանք գնելու առումով. որոշ հարցվածներ վարանում են այդ ապրանքները գնելու հարցում՝ պատմական իրադարձությունների և քաղաքական մտահոգությունների պատճառով: Այդուհանդերձ, Թուրքիայում հետազոտության մասնակիցների մեծ մասը նշել է, որ կգնի Հայաստանում արտադրված ապրանքներ, եթե որակն ու գինը ողջամիտ լինեն: Չնայած հնարավոր պատերազմի հետ կապված վախերի առկայությանը՝ ոմանք կարծում են, որ բաց սահմանները կարող են նպաստել հակամարտությունների կանխմանը:

Հայաստանցիների շրջանում Թուրքիայի հետ հարաբերվելու պատրաստակամության աստիճանը տարբերվում է՝ կախված ժողովրդագրական տվյալներից: Քաղաքային բնակավայրերի բնակիչները (51,5%) և ավագ սերունդը ավելի հակված են գնելու թուրքական արտադրանքը, քան գյուղաբնակները (39,1%) և ավելի երիտասարդները: Հասարակությունը շատ կարևոր է համարում Հայաստանի կառավարության դերը կարգավորման գործում՝ 60,4%-ը այն համարում է վճռորոշ: Նմանատիպ օրինաչափություն տեսնում ենք թուրքերի մոտ. նրանց 47,8%-ը կարգավորման հարցում շատ կարևոր է համարում Թուրքիայի կառավարության դերը: Այլ կերպ ասած՝ հարաբերությունների կարգավորման մեջ դերակատարման հարցում թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի հասարակություններից հարցվածները նախ նշում են իրենց երկիրը, այնուհետև մյուսը: Այս բացահայտումը երևակում է երկու հիմնական կետ. (1) երկու երկրներում էլ անհատները կարծում են, որ իրենց կառավարությունը պետք է առաջատար դեր ստանձնի կարգավորման ջանքերում: Սա ենթադրում է, որ հարաբերությունների բարելավմանն

ուղղված ցանկացած առաջընթաց, ամենայն հավանականությամբ, արդյունավետության ու օրինակարգության ամենաբարձր մակարդակ կունենա, երբ առաջնորդվի համապատասխան կառավարությունների կողմից. (2) և Հայաստանի, և Թուրքիայի բնակիչները հասկանում են, որ միակողմանի մոտեցումը բավարար չէ, և որ կայուն խաղաղություն ու համագործակցություն հնարավոր է ձեռք բերել միայն երկկողմանի ներգրավվածության միջոցով:

Եզրակացություն

Չնայած զգալի մտահոգություններին՝ ներկայումս Հայաստանում զգուշավոր պատրաստակամություն կա հարաբերությունների կարգավորման հարցում, և բնակչությունը կողմ է Թուրքիայի հետ որոշ հարաբերությունների հաստատմանը: Հայաստանում երիտասարդ հարցվողներն ավելի թերահավատ են հարաբերությունների հաստատման առումով: Թուրքիայի հասարակության դեպքում ավելի շատ չեզոքություն կա Հայաստանի նկատմամբ: Այս չեզոքությունը ցույց է տալիս հնարավոր պատրաստակամությունը փոփոխությունների և հարաբերությունների բարելավման հարցում, քանի որ այն հուշում է, որ շատ անհատներ, ամենայն հավանականությամբ, զերծ են նախնական ուժեղ կանխակալ վերաբերմունքից կամ բացասական ընկալումներից: Այս չեզոք դիրքորոշումը կարող է հիմք ծառայել երկու ժողովուրդների միջև դրական շփման և երկխոսության խթանմանն ուղղված ջանքերի համար: Ընդհանուր առմամբ՝ տնտեսական հարաբերությունները, մշակութային նմանությունները, դիվանագիտական հարաբերությունները և զբոսաշրջությունը որոշարկվել են որպես համագործակցության հնարավոր ոլորտներ: Այնուամենայնիվ, որոշ էական խոչընդոտներ, ինչպիսիք են ազգայնական տրամադրությունները, պատմական և ընտանեկան նարատիվները, լրատվամիջոցների պատկերումները և Ադրբեջան-Հայաստան հակամարտությունը, էական մարտահրավերներ են առաջ քաշում:

Թեև պատմական նարատիվները և կրթական փորձառությունները զգալիորեն ձևավորում են միմյանց վերաբերյալ հայերի և թուրքերի ընկալումները՝ նպաստելով բացասական կարծրատիպերի և վերաբերմունքի տևականացմանը, հնարավորություն կա փոխելու այդ ընկալումներն անձնական շփումների ակտիվացման և առաջադեմ մոտեցման միջոցով: Կրթության մեջ ապագայագիտության և ուտոպիստական մտածողության շեշտադրումը կարող է անհատներին զինել քննադատական մտածողության հմտություններով, որոնք անհրաժեշտ են ավելի դրական ապագա պատկերացնելու և

այդ ուղղությամբ աշխատելու համար: Այս մոտեցումներն ինտեգրելով՝ երկու հասարակություններն էլ կարող են դուրս գալ արմատացած պատմական կանխակալության շրջանակներից և խթանել փոխըմբռնում՝ ի վերջո նպաստելով հաշտեցմանը և համակեցությանը:

«Հայելային ուրիշ»-ի հայեցակարգը հիմնավոր պատկերացում է տալիս Հայաստանի և Թուրքիայի միջև ինքնաընկալման և միջխմբային հարաբերությունների դինամիկայի վերաբերյալ: Այս հայեցակարգերը կիրառելով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում՝ մենք կարող ենք հասկանալ փոխադարձ ընկալումների կարևոր դերը երկու ժողովուրդների միջև հարաբերությունների ձևավորման գործում: Խրախուսող նախաձեռնությունները, որոնք հասարակություններին ներկայացնում են միմյանց առօրյա մշակութային դրսևորումները, ինչպիսիք են խոհանոցային և արվեստի ցուցահանդեսները, առօրյա կյանքը, կարող են նպաստել ավելի իրատեսական և ապրումակցող ըմբռնման ձևավորմանը: Այս ջանքերը կարող են օգնել պատմական խզումները կամրջելուն և Հայաստանի ու Թուրքիայի միջև ավելի կառուցողական երկխոսությանը՝ ի վերջո նպաստելով հարաբերությունների կարգավորման գործընթացին:

Հետազոտությունն ընդգծեց այն խոր արմատավորված և բարդ ընկալումները, որոնք ձևավորում են հայկական և թուրքական ինքնություններն ու դրանց փոխազդեցությունը: Պատմությունից եկող՝ զոհ լինելու զգացումը, որ ունեն հայերը, և ավելի վերջին շրջանում թուրքերի կողմից ընկալվող իրենց զոհականացումն ընդգծում են անցյալի իրադարձությունների մնայուն ազդեցությունը ներկայիս հարաբերությունների վրա: Պետությունների միջև ուժային անհամաչափությունը և սահմանափակ գիտելիքն ավելի են բարդացնում այս դինամիկան՝ ազդելով կարգավորման նկատմամբ վերաբերմունքի վրա: Այնուամենայնիվ, անձնական շփումների և այցելությունների միջոցով ընկալումների դրական տեղաշարժերը ցույց են տալիս փոխըմբռնման և հարգանքի հնարավոր ուղիները: Շարունակական երկխոսության և մշակութային փոխանակման նախաձեռնությունների միջոցով այս խոր արմատացած ընկալումների հաղթահարումը կարող է ճանապարհ հարթել երկու ժողովուրդների միջև ավելի կառուցողական հարաբերությունների համար:

Ուշագրավ բացահայտում էր, որ Թուրքիայում հարցվածները Հայաստանի և հայերի մասին տեղեկատվության զգալի պակաս ունեն: Չնայած հարաբերությունների բարելավման և խաղաղ գոյակցության ընդհանուր ցանկությանը՝ արմատացած անվստահությունն ու ազգայնական ազդեցությունները շարունակում են շատ մեծ խոչընդոտ լինել:

Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման հեռանկարը մնում է բարդ և տարաձայնությունների առարկա: Պատմական արմատացած հիմնախնդիրները, ընկալումների սեռային և տարիքային անհամամասնությունները Հայաստանում, Հայաստանի նկատմամբ չեզոք մոտեցումը Թուրքիայում և երկու պետությունների միջև ուժային անհամաչափության ընկալումն ընդգծում են սպասվող մարտահրավերները: Չնայած դրան՝ առաջընթացի ներուժ կա Հայաստանում կանանց և երիտասարդների ներգրավմամբ նպատակաուղղված նախաձեռնությունների և երկու երկրներում կրթությունից եկող կանխակալության հաղթահարման միջոցով: Տնտեսական համագործակցությունը կենսունակ մեկնակետ է, սակայն չհաղթահարված պատմական տրավմաները և ազգային անվտանգության հետ կապված մտահոգությունները շարունակում են խոչընդոտ լինել վստահության հարցում: Եվ վերջապես, հետազոտությունն առանձնանշում է նախաձեռնող քաղաքական գործիչների կողմից հավասարակշռված, հիմնավորապես մշակված և շրջահայաց քայլերի անհրաժեշտությունը՝ հասարակական նախապաշարմունքները հաղթահարելու և հնարավոր խոչընդոտներն արդյունավետ կառավարելու համար: Երկու հասարակություններն էլ գիտակցում են իրենց կառավարությունների վճռորոշ դերը հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերն առաջնորդելու գործում՝ ընդգծելով կայուն խաղաղության և համագործակցության հասնելու համար երկկողմանի ներգրավվածության անհրաժեշտությունը:

© ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2024

9 786057 183552

SUPPORT TO THE
ARMENIA-TURKEY
NORMALISATION PROCESS

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

ERMENİSTAN-TÜRKİYE
NORMALLEŞME SÜRECİ
DESTEK PROGRAMI